

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ԵՐՎԱՆԴԻ ՀԱՋԻ-ՀԱԿՈԲՅԱՆ

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2018

ՀՏԴ 81:008
ԳՄԴ 81+71.0
Հ 342

*Հրապարակության է երաշխավորել
ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության
ֆակուլտետի գիտական խորհուրդը*

Հաջի-Հակոբյան Ա. Ե.

Հ 342 Գենդերային հիմնախնդիրը միջմշակութային ընկալումների համատեքստում/ Հաջի-Հակոբյան Ա. Ե.: -Եր., ԵՊՀ հրատ., 2018, 146 էջ:

Մենագրության մեջ արծարծվել են գենդերային լեզվաբանության հիմնահարցերը և բազմակողմանի վերլուծության ենթարկվել գենդերային հաղորդակցական վարքագծի տարատեսակ դրսևորումները: Հայերեն և անգլերեն լեզվական նյութը դիտարկվել է միջմշակութային հաղորդակցության համատեքստում:

Մենագրությունը նախատեսված է ինչպես գենդերային լեզվաբանությամբ հետաքրքրված ուսանողների համար, այնպես էլ այլ մասնագետների, որոնք միտված են ուսումնասիրել տվյալ դաշտը:

ՀՏԴ 81:008
ԳՄԴ 81+71.0

ISBN 978-5-8084-2278-0

© ԵՊՀ հրատ., 2018
© Հաջի-Հակոբյան Ա. Ե., 2018

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
ԳԼՈՒԽ 1 ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԽՈՍՔԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	
§ 1 Կարծրատիպերը միջմշակության ին հաղորդակցման համատեքստում.....	9
§ 2 Կին-տղամարդ հաղորդակցումը՝ որպես միջմշակության հաղորդակցման տարատեսակ	25
ԳԼՈՒԽ 2 ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՈՍՔԱՅԻՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
§ 1 Հաղորդակցային տարբերությունները արական և իգական սեռի ներկայացուցիչների միջև.....	36
§ 2 Խոսքն աշխատանքի վայրում. աշխատանքային խոսքի առանձնահատկությունները գենդերային ուսումնասիրության համատեքստում.....	53
§ 3 Խոսքի ուղղակիությունն ու անուղղակիությունը և դրանց ընկալումը գենդերային տարբերակումների հայեցակետից	65
§ 4 Կանանց և տղամարդկանց հարցեր տալու և տեղեկատվություն ստանալու առանձնահատկությունները.....	83
ԳԼՈՒԽ 3 ԼԵԶՎԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ՄԻԶՍԵՌԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ	
§ 1 Թեմայի քննարկումը և դրանում կիրառվող լեզվական ռազմավարության միջոցները գենդերային տարբերակումների համատեքստում.....	89
§ 2 Ընդհատումը և զուգահեռ խոսքը գենդերային տարբերակումների համատեքստում	103
§ 3 Լռությունը և ծավալուն խոսքը (շատախոսություն), գանգատը և մանրամասների փոխանակումը, բամբասանքը, վիճաբանությունը և ընդհարումը, դժվարությունների մասին խոսքը անգլերենում	113
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	134
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	138

Ներածություն

Գենդերային հիմնախնդրի դիտարկումն անգլերենում հայերենի գուգադրությամբ արժարժում է բազմաթիվ գործոններ, որոնք ընկած են սեռերի միջև տարբերության հիմքում: Լեզվի միջոցով ներկայացվում է այն ազդեցությունը, որ կնոջ և տղամարդու դերերի փոփոխություններն են ունեցել լեզվի վրա ժամանակակից հասարակությունում: Հատուկ շեշտ է դրվում մշակութային տարբերությունների վրա, որոնք նույնպես դիտարկվում են գենդերային հայեցակետից:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է դրա **արդիականությամբ և կարևորությամբ**: XX դարի 60-ական թվականներից սկսած բուռն զարգացում ապրող ֆեմինիզմի շարժումն իր հետքը թողեց նաև լեզվաբանական ուսումնասիրությունների վրա: Վերջին տարիներին գենդերի և լեզվի տարբերակումների արտացոլման հիմնահարցը շատ լեզվաբանների ուշադրության կենտրոնում հայտնվեց:

Հիմնահարցի կարևորության մասին վկայում է նաև այն, որ լեզվաբաններից ոմանք՝ որպես առանձին գիտակարգ, առանձնացնում են նաև գենդերային լեզվաբանությունը: Հաշվի առնելով, որ լեզուն հասարակական երևույթ է, նաև այն, որ լեզուն, մտածողությունն ու մշակույթը սերտորեն կապված են միմյանց, ուսումնասիրվող թեման կարելի է ընկալել ոչ միայն որպես զուտ լեզվաբանական, այլ նաև որպես հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և մշակութաբանական հիմնահարց:

Հետազոտության **առարկան** կանանց և տղամարդկանց լեզուն և խոսքն է: Որպես ուսումնասիրության **նյութ** ծառայել են բազմաթիվ ձայնագրություններ, ունկնդրումներ, գրառումներ, որոնք կատարվել են տարբեր միջավայրերում տարբեր գենդերային խմբերի հաղորդակցության ժամանակ, ինչպես նաև օրինակներ՝ քաղված գեղարվեստական և գիտական գրականությունից:

Հետազոտության **մեթոդներն** են՝ նկարագրական, զուգադրական վերլուծության, համատեքստային: Աշխատանքի **հիմնական դրույթներն** են. լեզվում տղամարդկանց գերակայությունը, արական և իգական սեռի ներկայացուցիչների խոսքային տարբերությունները, տարբերակման համամարդկային բնույթը, տարբեր մշակույթներում խոսքի համեմատական նմանությունները:

Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել գենդերի արտահայտությունները անգլերենում (տարբեր լեզվաբանական մակարդակներով), ինչպես նաև վերլուծել այդ խնդիրները ավելի բարձր՝ դիսկուրսի մակարդակով: Այլ կերպ ասած՝ նպատակ էր դրված լուսաբանել գենդերի հասկացության արտահայտությունները լեզվական և արտալեզվական մի շարք մակարդակներում և հնարավորին չափ համապարփակ կատարել նաև գենդերի արտահայտությունների ուսումնասիրությունը անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ, ինչպես նաև ներկայացնել օրինակներ որոշ այլ լեզուներից ևս ավելի արտահայտիչ դարձնելու կատարված դիտարկումները: Նպատակ ենք ունեցել պարզելու, թե անգլերենում որքանով են տարբեր խոսքային ռազմավարությունները հակառակ սեռերի ներկայացուցիչների մոտ, ինչպիսի արտահայտչամիջոցներ են կիրառվում անգլերենում և հայերենում մույն նպատակին հասնելու համար, տարբեր իրավիճակներում, տարբեր երկրներում, երկու սեռի ներկայացուցիչների կողմից, ինչպես միասեռ, այնպես էլ խառը գենդերային հաղորդակցության ժամանակ: Ինտենսիվ հետազոտությունների **հիմնական նպատակը** ոչ թե լավագույն հաղորդակցական ոճը որոշելն է կամ դրդելը հակառակ սեռին լիովին փոխելու իրենց լեզուն, այլ պարզապես տարբերությունները ճանաչելն է՝ միմյանց ըմբռնելու և հարմարվելու նպատակով: Երբ արական և իգական սեռի ներկայացուցիչներն ավելի լավ ըմբռեն, ճանաչեն հաղորդակցական ոճերի տարբերությունները, նրանք կկարողանան բարելավել իրենց հաղորդակցությունը, շփումը հակառակ սեռի ներկայացուցիչների հետ:

Հիմնական նպատակի հետ կապված՝ գրքի մեջ ուսումնասիրվել են հետևյալ **մասնավոր խնդիրները**՝ տղամարդու և կնոջ մույնակամությունը լեզվում, նրանց դերերը և դրանց ընկալումը, տղամարդու

գերակայության և կնոջ ստորակայության գաղափարի արտացոլումները անգլերենում, հաղորդակցային տարբերությունները արական և իգական սեռի ներկայացուցիչների միջև, աշխատանքային խոսքի առանձնահատկությունները գենդերային ուսումնասիրության համատեքստում, խոսքի ուղղակիությունն ու անուղղակիությունը և դրանց ընկալումը, անգլերենում կանանց և տղամարդկանց հարցեր տալու և տեղեկատվություն ստանալու առանձնահատկությունները, մի շարք լեզվական ռազմավարություններ, ինչպիսիք են թեմայի քննարկումը, ընդհատումը և զուգահեռ խոսքը, լռություն և ծավալուն խոսք, գանգատ և մանրամասների փոխանակում, բամբասանք, վիճաբանություն և ընդհարում, խոսք անախորժությունների մասին (trouble talk) և այլն:

Վերոնշված հայեցակետերից ուսումնասիրությունն ունի մեծ տեսական և գործնական նշանակություն: Նախ, այն կարող է նպաստել անգլերեն և հայերեն լեզուների տեսության, ինչպես նաև ճանաչողական լեզվաբանության, միջմշակութային հաղորդակցման, հանրալեզվաբանության, զուգադրական լեզվաբանության զարգացմանը: Երկրորդ, աշխատանքի արդյունքները կարելի է կիրառել անգլերեն և հայերեն լեզուների դասավանդման գործընթացում, ինչպես նաև ճանաչողական լեզվաբանությանը, միջմշակութային հաղորդակցմանը և գենդերային լեզվաբանությանը նվիրված հատուկ դասընթացներում և դասագրքերի համապատասխան բաժիններում:

Աշխատանքի **նորույթը** ուսումնասիրության համապարփակ բնույթն է, վերլուծությունը լեզվի տարբեր մակարդակներով, գենդերային լեզվաբանության, ճանաչողական լեզվաբանության և միջմշակութային հաղորդակցման նորագույն ուղղությունների լույսի ներքո: Այն հետաքրքիր է նրանով, որ զուգահեռներ են անցկացվել երկու լեզուների միջև, բացահայտելով բազմաթիվ նմանություններ, ընդ որում և՛ անգլերեն, և՛ հայերեն լեզվի կրողները հարցման են ենթարկվել և ձայնագրվել են ինչպես իրենց ծննդավայրերում, այնպես էլ դրանցից հեռու:

Մենագրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլուխը նվիրված է տղամարդկանց և կանանց խոսքին, որը դիտարկվում է որպես միջմշակութային հիմնահարց: Ենթագլուխներում ներկայացվում են միջմշակութային հաղորդակցման համատեքստում առկա կարծրատիպերը և դրանց վերլուծությունը, ինչպես նաև կին-տղամարդ հաղորդակցումը, որը ներկայացվում է որպես միջմշակութային հաղորդակցման տարատեսակ:

Գրքի երկրորդ գլուխը նվիրված է կանանց և տղամարդկանց խոսքային առանձնահատկություններին, նրանց հաղորդակցային տարբերություններին, աշխատանքային խոսքի առանձնահատկություններին, որոնք դիտարկվում են գենդերային ուսումնասիրության համատեքստում: Ենթագլուխներում դիտարկվում են խոսքի ուղղակիությունն ու անուղղակիությունը և դրանց ընկալումը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց հարցեր տալու և տեղեկատվություն ստանալու առանձնահատկություններն անգլերենում:

Վերջին՝ երրորդ գլուխը, նվիրված է լեզվական ռազմավարություններին միջսեռային հաղորդակցման մեջ, որոնք արծարծում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են քեմայի քննարկումը և դրանում կիրառվող լեզվական ռազմավարության միջոցները, ընդհատումը և զուգահեռ խոսքը, լռությունը և ծավալուն խոսքը, գանգատը և մանրամասների փոխանակումը, բամբասանքը, վիճաբանությունը, ընդհարումը և այլն:

Եզրակացության մեջ ամփոփ ձևով ներկայացված են հետազոտության արդյունքում ստացված եզրահանգումները:

ԳԼՈՒԽ 1
ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԽՈՍՔԸ ՈՐՊԵՍ
ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**§ 1 Կարծրատիպերը միջմշակութային հաղորդակցման
համատեքստում**

Մշակույթներն իրարից տարբերվում են կենսակերպով, վարվելակերպով և դրանց նորմերով: Տարբեր մշակույթներ ասելով, ի նկատի ունենք ինչպես օտար երկրների, այնպես էլ նույն համայնքի մեջ առկա տարբեր մշակույթները: Այսինքն, անգլիացիների համար այլ մշակույթ կարող են համարվել ինչպես աշխարհի ցանկացած ազգի մշակույթը, այնպես էլ Անգլիայի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթները: Նույնը կարելի է ասել աշխարհի գրեթե բոլոր երկրների մասին, անգամ փոքր պետություններին: Ցանկացած մշակույթի ներկայացուցչի համար առողջ ու նորմալ է այն վարվելակերպը, որը հոգեհարազատ և ընդունված է իր համայնքում կամ երկրում: Եվ այս ընդունված, առողջ վարվելակերպը կարող է ընկալվել կամ, ընդհակառակը, չընկալվել, կարող է թյուրըմբռնվել կամ նույնիսկ տարակուսանքի առիթ հանդիսանալ մեկ այլ մշակույթի ներկայացուցչի համար: Դիտարկենք մեկ օրինակ: Եվրոպացիները գրուցելիս, որպես կանոն, իրարից հեռու են կանգնում, համեմատաբար ավելի հեռու, քան հայերը, ամերիկացիները և այլոք: Նման վարվելակերպը հատուկ է եվրոպացիների մեծ մասին, և նրանց համար սա ոչ միայն տրամաբանական է, ընդունելի, այլև ցանկալի և անգամ պարտադիր: Մինչդեռ, ամերիկացիները սա չեն ընդունում, թեպետ մանկուց դաստիարակված են ունենալու իրենց ոչ միայն հոգևոր, այլ նաև «ֆիզիկական ազատությունը» և խուսափում են բավականին մոտ և մտերիմ լինելուց նույնիսկ ընտանիքի անդամ-

ների հետ: Հետաքրքրական է, թե ինչպիսին կլինի այն մարդկանց մոտեցումն այս խնդրին, որոնց մշակութային ընդունված է խոսելիս ոչ միայն բավականին մոտ կանգնելը, այլ նաև իրար բռնելը կամ դիպչելը: Քննարկվող դեպքը մի պարզ օրինակ է, որը դժվար թե մեծ տարակարծության տեղիք տա: Սակայն կան նաև այլ, ավելի լուրջ խնդիրներ, որոնցում մեծ դեր են խաղում ինչպես մշակութային գործոնը, այնպես էլ դրանով պայմանավորված լեզվամտածողությունը: Այս գործոնների և դրանց սերտ կապի մասին է խոսում Թաննեն իր «Խոսելով իննից հինգը» գրքում. «Կապված մի քանի համգամայնների հետ, ինչպես օրինակ երկրամասը, որտեղ մարդ մեծացել է, նրա (նրա ծնողների) էթնիկ հենքը, նրա տարիքը, խավը, սեռը, մարդիկ ունենում են տարբեր լեզվամտածողություն, ինչն էլ, իր հերթին, բերում է խոսակցական տարբեր ոճերի: Սակայն այս ոճերը հաճախ անտեսանելի են: Չգիտակցելով, որ այս ամենն իր ազդեցությունն ունի մեր մտքերի և լեզվի վրա, մեզ թվում է, թե ասում ենք այն, ինչ մտածում ենք, ինչ ի նկատի ունենք: Չընկալելով, որ պատճառը ոճական տարբերությունն է, չհաջողված խոսակցության պատճառը փնտրում ենք գրուցակցի մտադրություններում կամ վերաբերմունքի մեջ (ես նրան դուր չեմ գալիս), նրա կարողություններում (նա հիմար է), նրա բնավորության մեջ (նա սառն է և բոլորովին ներողամիտ չէ), կամ մեղադրում ենք մեզ (ինչ է ինձ պատահել, գժվել եմ այսօր), կամ ընդունում ենք, որ մեր հարաբերություններն ընդհանուր եզրեր չունեն (պարզապես չենք կարող միմյանց հետ շփվել)» (Tannen 1994a:11-12):

Նախքան բուն գրույցի թեման արծարծելը, պետք է նախևառաջ գրուցակցին դիմել: Սա է պատճառը, որ ստորև կանոդադառնանք դիմելաձևերին, որոնք մեծ ուշադրության են արժանի և մեզ հետաքրքիր փաստեր են հաղորդում հասցեագրողի և հասցեատիրոջ մասին: Իրար դիմելու ձևերից կարելի է դատել մարդկանց միջև առկա հարաբերությունների մասին: Հայտնի է, որ մեկուսացած, առանձին վերցված ոչ մի դիմելաձև հնարավոր չէ ճիշտ հասկանալ, այն պետք է դիտարկել համատեքստում: Ուշագրավ են այս կապակցությամբ Ալ-Բայնիի ուսումնասիրությունները դիմելաձևերի ոլորտում: Դիմե-

լաճնի ընտրությունը, ինչպես նշում է հեղինակը, կախված է մի շարք գործոններից: Առաջին գործոնը աշխարհագրականն է: Այսպես, սիրիացիները, եգիպտացիներն ու հորդանանցիները տարբեր դիմելաձևեր են գործածում, քեպտո բոլորն էլ արաբներ են: Երկրորդ գործոնը կարգավիճակն է. սովորաբար հարուստ մարդիկ կամ վերին խավի ներկայացուցիչներն այլ դիմելաձևեր են գործածում, համեմատած աղքատների կամ ստորին խավի ներկայացուցիչների հետ: Երրորդ գործոնը մասնագիտությունն է (տաքսու վարորդն ու ինժեները տարբեր ձևով են խոսում): Չորրորդը՝ հասցեագրողի և հասցեատիրոջ միջև հարաբերություններն են (պաշտոնական կամ ոչ պաշտոնական, քաղաքավարի կամ ոչ քաղաքավարի, հարգալից կամ ոչ հարգալից): Եվ վերջին գործոնը, ըստ հեղինակի, կրոնն է, որն ազդում և հիմնականում որոշում է այս կամ այն դիմելաձևերի գործածությունը: Մահմեդականներն, ի տարբերություն քրիստոնյաների, գործածում են մի շարք դիմելաձևեր, որոնք հատուկ են միայն առաջիններին՝ կապված Մեքքա կատարած նրանց ուխտագնացությունների հետ: Բնականաբար, դիմելաձևերի այս շարքը բացակայում է քրիստոնեական աշխարհում (Al-Bainy 1996:84): Այստեղ տեղին է նշել նաև քաղաքական գործոնը, որի արդյունքում տարբեր երկրներում, հասարակություններում կիրառվել է **ռնկեր** բառը: Խորհրդային տարիներին ԽՍՀՄ տարածքում այդ եզրույթը լայնորեն կիրառվում էր դիմելու համար «ավագ ընկերոջը»՝ ղեկավարին, ուսուցչին, գործընկերոջը և այլն: Այն իր համարժեքներն ուներ անգլերենում՝ comrade, իսպաներենում՝ camarada, ֆրանսերենում՝ camarade, գերմաներենում՝ kamerad և այլն: Նշենք նաև, որ քաղաքական կարգի՝ սոցիալիզմի/ կոմունիզմի փլուզումից հետո այս դիմելաձևը ավելի քիչ է կիրառվում:

Գիտարկենք աշխարհագրական վայրի գործոնը: Միևնույն դիմելաձևը երկու տարբեր ձևով է ընկալվում տարբեր աշխարհագրական վայրերում: Գրեթե բոլոր արաբական երկրներում հարգանքի ձև է *սալիդ* (պարոն) բառը, որով դիմում են գերադասին, ավագին: Սակայն, եթե որևէ մեկն այս դիմելաձևն է գործածում Լիբիայում, նա կարող է մեծ անախորժություններ ունենալ, քանի որ այնտեղ գոր-

ծում է մի պայմանավորվածություն, ըստ որի բոլոր մարդիկ հավասար են և իրավունք չունեն գործածելու վերոհիշյալ դիմելաձևը: «Պարոնի» փոխարեն գործածվում է «ախ» (եղբայր) բառը, նույնիսկ եթե որևէ մեկը դիմում է երկրի նախագահին:

Բերենք մի քանի օրինակ արաբական աշխարհից: Սիրիայում, Հորդանանում, Լիբանանում, Պաղեստինում ընդունված և շատ քաղաքավարի է դիմել որևէ տղամարդու աբու (Ալի) ձևով (երբ Ալին նրա ավագ որդու անունն է): Այսինքն, ասվում է *Ալիի հայր*: Սակայն սա բավականին տարօրինակ կթվա Ալժիրում կամ Թունիսում բնակվող տղամարդու համար, քանի որ այնտեղ նրան պետք է դիմել ոչ թե ավագ որդու, այլ իր հոր անունով: Ոչ թե *Ալիի հայր*, այլ ընդհակառակը, *Ալիի որդի*, որը նրանց համար ավելի պատվաբեր է: Իսկ Լիբիայում, նշված դեպքերից և ոչ մեկն ընդունելի չէ: Մարդուն միշտ դիմում են միայն իր անունով՝ ընդգծելով լոկ իր անձի մեծությունն ու կարևորությունը:

Եթե ընդհանրացնենք դիտարկված օրինակները, կհանգենք այն եզրակացության, որ միջին արևելյան կամ «արաբական աշխարհ» ասելով, չենք կարող մեկ ընդհանուր բնութագիր տալ լեզվական որևէ կոնկրետ հարցի վերաբերյալ: Թեև մշակույթն ընդհանուր է՝ արաբական, սակայն բավականին տարբեր են մոտեցումներն այս կամ այն հարցին: Լեզվամտածողության հստակ տարբերություններ կան նույնիսկ մեկ պետության տարածքում ապրող տարբեր ժողովուրդների, էթնիկ խմբերի միջև:

Այժմ դիտարկենք օրինակներ, որոնք առնչվում են ոչ թե դիմելաձևերի, այլ դիմելու եղանակների հետ և որոնք նույնպես տարբերվում են մշակույթից մշակույթ և լեզվից լեզու: Դիմելաձևերում ազգակցական տերմինների գործածումը բնորոշ է իրարից բավականին հեռու լեզուներին, ինչպիսիք են, օրինակ, անգլերենը, հայերենը, ռուսերենը, արաբերենը և այլն: Ի տարբերություն անգլերենի, որտեղ այս երևույթը բացակայում է, վերը նշված բոլոր լեզուներում ընդունված է անձանոթին դիմելու համար գործածել ազգակցական կապ ցույց տվող տերմիններ: Հայերենում՝ *մորաքույր*, *քեռի*, *յրալիկ*, *պապիկ* և այլն, արաբերենում՝ *իմ քեռի*, *իմ եղբայր*, *իմ հայր* և այլն, ռու-

սերենում՝ *ded, дядя, тетя* և Տ.Դ.: Ռուսերենում ընդունված են նաև այլ դիմելաձևեր, օրինակ՝ *гражданин, мужчина, женищина* (ի տարբերություն անգլերենի, հայերենի և արաբերենի): Այս եղանակները տարբերվում են լեզվից լեզու, սրանք բնորոշ են միայն որոշակի մշակույթների, ավանդույթների: Հարկ է շեշտել, որ տվյալ դեպքում որոշ մամուլային պայմանավորված չեն աշխարհագրական, մասնագիտական, կրոնական և վերոհիշյալ այլ գործոններով:

Քննարկենք այն եղանակներն ու ձևերը, որոնցով դիմում են ամուսնացած կնոջը: Անգլախոս մշակույթներում նրան կոչում են ամուսնու անվամբ, օրինակ՝ *Mrs. John*, կամ ազգանվամբ՝ *Mrs. Barkley*: Ուշագրավ է Նիլսենի բացատրությունն այս կապակցությամբ: Եթե կնոջ անվան դիմաց դրվում է *Mrs.*-ը, ապա անպայման պետք է հետևի ամուսնու անունը, քանի որ *Mrs.*-ը (տիկին) *Mistress* (սիրուհի) բառի հապավումն է. մա պարզապես չի կարող իր սիրուհին լինել, ուրեմն դրան չի կարող հետևել կնոջ անունը: Բավականաչափ վաստարկներ են քննարկվել, որի արդյունքում այս մոտեցումը տրամաբանական չէ այն պարզ պատճառով, որ *Miss* (օրիորդ) տարբերակը նույնպես *Mistress*-ի հապավումն է (Nilsen 1990:64): Այս խրթին իրավիճակը բերեց նրան, որ ֆեմինիստուհիներն առաջ քաշեցին *Ms.* ձևը որպես *Miss* և *Mrs.* բառերի այլընտրանքային տարբերակ, որը և թույլ է տալիս չընդգծել կնոջ ամուսնական կարգավիճակը: Սակայն պետք է նշել, որ այս ձևն ավելի կիրառական է գործարար կանանց շրջանակներում: Ավելացնենք, որ *տիկին* բառը նշանակում է «մեծ կին», ինչպես նաև *տիկարը*՝ հարգված տղամարդ, մեծ այր:

Մի կողմ դնելով ծագումնաբանությունն ու այն հարցը, թե որքանով են ընդունելի նորամուծությունները, կնոջը դիմելու խնդիրը դիտենք հայերենում: Այս առումով տարբերություններ կան հենց մեկ լեզվի սահմաններում: Հայաստանաբնակ հայերը կնոջը դիմում են անունով կամ, որպես կանոն, ամուսնու ազգանվամբ, օրինակ, *Աննա* կամ *տիկին Գրիգորյան*, իսկ սփյուռքահայերը՝ կապված այն մշակույթի հետ, որի ազդեցությունը տվյալ պահին կրում են, գործածում են ամուսնու անուն-ազգանունը, օրինակ՝ *տիկին Կարեն Գրիգորյան*: Հետաքրքրական է, որ երբ ամուսիններին դիմում են միասին

(մանավանդ, գրավոր խոսքում), օգտագործվում է *տեր և տիկին Կարեն Գրիգորյաններ* ձևը: Սա հատուկ է արևմտահայերենին, և ոչ արևելահայերենին, որտեղ տվյալ դեպքում պարզապես օգտագործվում է *տեր և տիկին Գրիգորյաններ* տարբերակը: Ռուսերենում այս շարքը մոտ է արևելահայերենին՝ *господин и госпожа Ивановы*: Անգլերենում էլ համապատասխանաբար՝ Mr. and Mrs. Smiths. Արաբերենում ամուսնացած կնոջը կարելի է դիմել իր անվամբ կամ ամուսնու ազգանվամբ *սալիդե* (պարոն) բառից հետո (եթե նա մենակ է): Իսկ, երբ կինն ամուսնու ուղեկցությամբ է, ապա դիմում են միայն ամուսնուն, օրինակ՝ *պարոն Ալի Ջոդի և նրա կինը*: Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ չի նշվում կնոջ ոչ անունը, ոչ ազգանունը, այլ պարզապես ասվում է, որ նա տվյալ տղամարդու կինն է: Այս օրինակներից առավել վառ է երևում այն ազդեցությունը, որն ունի մշակույթը լեզվի վրա:

Այժմ դիտարկենք միջմշակութային խոսույթի (դիսկուրսի) որոշ մարտավարություններ: Խոսույթի ոճը միջմշակութային հաղորդակցման ժամանակ որոշում են «միմյանց հետ փոխգործակցող տարբեր մշակույթներ ներկայացնող մարդկանց սոցիալական կարիքները» (Haru 1989: 230): Այս եզրակացությանն է եկել լեզվաբան Յամադա Հարուն իր ուսումնասիրության արդյունքում, որը վերաբերում է ամերիկացիների և ճապոնացիների կողմից թեմայի կառավարման մարտավարությանը գործարար հանդիպումների ժամանակ: Բուն նյութի մասին խոսքն ամերիկացիները բացում են հատուկ բառերով, թեման փոխելիս գործածում են բառային փակման բանաձև, իսկ տեսակետն արտահայտելիս պահպանում են որոշակի հաջորդականություն: Ի հավելումն դրան, ամերիկացիները կիրառում են թեմայի կազմակերպման գծային համակարգ՝ *անկախություն* նվաճելու համար, որը հանդիսանում է նրանց փոխներգործության նպատակը խոսակցության ժամանակ: Մյուս կողմից, խոսքը բացելիս ճապոնացիները կատարում են մետահաղորդակցական դիտողություններ, թեման փակում են կտրուկ՝ առանց խոսքային ակնարկների, իսկ տեսակետն արտահայտելիս պարտադիր դիմում են օրինակների: Նյութը կազմակերպելիս, կիրառում են շրջանային համակարգ՝ իրենց

խոսքում *առճակատումից, դիմակայությունից* խուսափելու համար: Ընդհանուր նպատակ հետապնդող խմբում անհատական անկախության հասնելն էական չէ նրանց համար: Ինչ վերաբերում է խոսքի հաջորդականությանը, ապա ամերիկացիների խոսքը երկար ու մեծախոսական է և բավականին անհավասար է բաժանված մասնակիցների միջև, ընդ որում քննարկման ժամանակ անհատական ներդրում ունենալու նախաձեռնությունը շատ բարձր է գնահատվում, մինչդեռ ճապոնացիների մոտ հակվածություն կա կարճ խոսելու, և բոլոր մասնակիցների հնարավորություններն այստեղ հավասար են: Արդյունքի հասնելու գործում գնահատվում է ընդհանուր, միացյալ նախաձեռնությունը:

Յ. Հարուի խոսքերով, «մասնակիցների փոխգործունեության կարիքներն են որոշում թեմայի կառավարումը. և այդ կարիքները պայմանավորված են գրույցի, քննարկման մասնակիցների մշակութային արժեքներով» (Haru 1989:232):

Ընդունելով, որ լեզվամտածողության մեջ մեծ դեր են խաղում ոչ միայն մշակութային, սոցիալական տարբերությունները, այլ նաև սեռային տարբերությունները, կարելի է պնդել, որ տարբեր ազգերի լեզվամտածողության մեջ նմանություններ գրեթե չկան: Այն նմանությունները, որ հաճախ տեսնում ենք, հիմնականում կարծրատիպերի արդյունք են: Իհարկե, կարելի է պնդել նաև հակառակը. տարբերությունները նույնպես կարող են կարծրատիպերի արդյունք լինել: Իսկ ինչո՞ւ ենք դրանք գործածում: Մարդիկ հաճախ դիմում են կարծրատիպերի օգնությանը, քանի որ շատ դժվար է ընկալել աշխարհի ժողովուրդների մասին առկա հսկայական և բարդ տեղեկատվությունը: Բավականին ժամանակատար և ծանր աշխատանք կլինեք հասկանալը, թե ինչու և ինչ տարբեր եղանակներով են մարդիկ իրենց դրսևորում աշխարհի այս կամ այն վայրում, այս կամ այն լեզվամտածողություն ունեցող մարդկանց հետ շփման ժամանակ: Դրա փոխարեն, մենք վաղ տարիքից սովորում և յուրացնում ենք որոշակի կարծրատիպեր տարբեր ժողովուրդների, նրանց լեզուների, լեզվամտածողության և վարվելակերպի մասին: Այս կարծրատիպերը վերաբերում են ոչ միայն մեծ մշակույթներին, այլ նաև փոքրածավալ

որոշակի խմբերին, սեռերին և այլն: Կարծրատիպերը սահմանափակում են այն ձգտումը, որ ի սկզբանե ունենում ենք՝ հասկանալու այն մարդկանց ավանդույթները, լեզվամտածողությունը, որոնք տարբերվում են մերից: Ունենալով որոշակի կարծրատիպ, պարզապես «ապահով» ենք զգում, մտածելով, որ գիտենք, թե ինչպես վարվել, խոսել կամ դրսևորել մեզ որոշակի իրավիճակում: Ցավոք սրտի, այս կարծրատիպերը միշտ չէ, որ ճիշտ են ու հստակ, և հաղորդակցման ժամանակ դա բերում է մեծ դժվարությունների: Կնոջ կենսակերպի վերաբերյալ արևմտյան և արևելյան մշակույթների մոտեցման մասին Մ. Ֆ. Լաուտֆին գրում է. «Այս երկու ավանդական մշակույթներն իրենց մոտեցումներն ունեն կնոջ կյանքի նորմերին. դա վերաբերում է կնոջ համեստությանը, հնազանդությանը, ինքնագոհաբերությանը: Ֆեմինիստները պնդում են, որ դրանք վատ, ոչ կառուցողական նորմեր են, որոնք չեն կարող բարելավել կանանց կյանքը: Ի հակադրություն սրան, արևմտյան մոտեցումը, որ հիմնված է ընտրության և հնարավորության վրա, չի ընկալվում արևելյան աշխարհում, որտեղ բերվում են փաստարկներ, որ կինը (նրա գեղեցկությունը, մարմինը) շահագործվում է արական սեռի ներկայացուցիչների կողմից շահադիտական նպատակներով» (Loutfi 2001:47):

Այս հիմնական գաղափարները, մոտեցումները փոխվում են, որովհետև մեր նորմերն են փոխվում, իսկ «բնականոնությունը» չափվում է այնպիսի չափորոշիչներով, որոնք ծագում են հասարակության կանոններից: «Նորմերը հիմնված են ընդհանուր համաձայնության վրա», գրում է Բարդվիքը (Bardwick 1989:153): Նրանք են որոշում դերերի ընտրությունները, վարվելաձևերը, անհատական բնութագրերը, որոնք բնականոն կամ պատշաճ են համարվում: Երբ նորմերը որոշակի և խիստ են, դրանք կարող են չափազանցել սեռային տարբերությունները և կարող են անհանգստության տեղիք տալ, երբ մտածենք, որ հակառակ սեռի ներկայացուցիչների հետաքրքրություններն ու բնորոշ գծերն ունենք: Պարզապես պետք է ընդունել, որ հեռանում ենք խիստ գեղեցիկային տարբերակումներից և նորմերից կամ անցման փուլում ենք գտնվում, որտեղ հիմն ու նորը, հակասականն ու ընդունելին, որոշակին ու անորոշը համագոյակցում են: Երբ

նորմերը կայուն են, դրանք չեն նկատվում: Սակայն այսօր, երբ դրանք փոփոխվում են, անհրաժեշտություն է ծագում ուսումնասիրելու, վերլուծելու և պարզելու, թե ինչպես են այդ նորմերը ազդում մեր խոսքի, մտածելակերպի վրա: Առաջ են գալիս ամենախիմնարար հարցերը. ի՞նչ է արականը կամ իգականը, որքանով են դրանք իրար նման կամ տարբեր: Կարելի՞ է արդյոք վստահաբար պնդել, որ «կին» բառը բոլոր մշակույթներում իգական սեռի է: Իհարկե, ոչ: Չէ, որ կան լեզուներ, որոնք քերականական սեռ պարզապես չունեն կամ կան լեզուներ, որտեղ կնոջը մատնանշող բառը իգական սեռի գոյական չէ: Օրինակ՝ գերմաներենում *Mädchen* (աղջիկ) և *Fräulein* (օրիորդ) բառերը չեզոք սեռի են: Հետաքրքրական է, որ արաբերենում «*կին*» բառը իգական սեռի գոյական է, մինչդեռ «*հղի կին*»-ը, որ արաբերենում գոյական է, արական սեռի է: Այս դեպքում ևս գործում են մշակութային ավանդույթները, առանձնահատկությունները, լեզվամտածողությունը: Բանն այն է, որ արաբական աշխարհում ցանկացած հղի կին դիտվում է որպես արու զավակ լույս աշխարհ բերող մայր, և այնքան մեծ է այս ակնկալիքը, որ այն իր ուղղակի արտացոլումն է գտել քերականության մեջ: Եթե վերը բերված օրինակը որոշ առումով կապված է մշակույթների, ուրույն լեզվամտածողության հետ, ապա հետևյալ օրինակը շատ ավելի դժվար է կապել ավանդապահության հետ: «Արաբ մուսուլման կինն իրավունք չունի քնել պատի կողմը, պարզապես այն պատճառով, որ «պատ» գոյականն արաբերենում արական սեռին է պատկանում, և սա, իր հերթին, որոշակի խանդի առիթ կարող է հանդիսանալ»: Այսպես է գրում արաբ լեզվաբան Բայեսը, այս անհեթեթ իրականության հիմքը տեսնելով մշակութային և կրոնական ավանդույթների մեջ (Բայես 2004:3):

Բազմաթիվ են օրինակները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես լեզուն, լեզվամտածողությունը կարող են ազդել կենցաղի վրա որոշակի մշակութային դաշտում: Կամ կարելի է մահ հակառակն ասել. ինչպե՞ս կարող են ազդել մշակույթն ու կենսակերպը լեզվի, դրա քերականական կարգերի վրա: Այս ազդեցության և դրա արտահայտման եղանակները բազմազան են: Սեռը կարող է բացահայտվել տարբեր խոսքի մասերի միջոցով, ինչպես օրինակ հոդն ու ածական-

նը, բայն ու գոյականը: Հետաքրքրական են այս առումով դերանունները¹:

Սա բավականին հետաքրքիր երևույթ է, և միանգամից հասկանալի չէ, թե ինչու պետք է լեզուներն ունենան այս տարբերակումը: «*He* և *she*» դերանունների քերականական տարբերությունն ակնհայտորեն կարևոր է, երբ դա դիտարկում ենք որպես մի միջոց իմանալու համար, թե ում մասին է խոսքը՝ տղամարդու, թե՛ կնոջ: Բայց ի՞նչը կարող է պատճառ հանդիսանալ եզակի թվի առաջին դեմքի սեռը մատնանշելու համար: Գրեթե բոլոր իրավիճակներում խոսողի սեռն ակնհայտ է այսպես թե այնպես: Որոշ լեզվաբաններ հակված են այն կարծիքին, որ սա, անկասկած, արական սեռի ներկայացուցիչների նախաձեռնությունն է՝ ցույց տալու, որ նրանք ոչ միայն արտաքինով են տարբերվում հակառակ սեռի ներկայացուցիչներից, այլ նաև խոսքով, լեզվով²:

¹ Որոշ լեզուներում, ինչպես օրինակ հունգարերենում ու ֆիններենում դերանունը սեռ չունի: Այս առումով նույնն է նաև հայերենը: Հունգարերենում «*on*» բառը, ֆիններենում՝ «*hän*» և հայերենում «*ևս*» բառերը համարժեք են. դրանք մատնանշում են և՛ իզական, և՛ արական սեռերի գոյականները: Անգլերենն ու ռուսերենը ունեն սեռային տարբերակում միայն եզակի թվի 3-րդ դեմքի համար. մասնավորապես՝ *he-she*, *он - она*, մինչդեռ ֆրանսերենում սա գործում է նաև հոգնակի թվի 3-րդ դեմքի համար. «*ils*» - նրանք արական սեռի համար և «*elles*»՝ իզականի, այլ լեզուներում իզական և արական սեռերի տարբերակում կա նաև 2-րդ դեմքի համար: Օրինակ, իսպաներենում «*vosotros*» - դուք՝ արական սեռի համար, իսկ «*vosotras*»՝ իզականի համար: Իսպաներենում դերանունը սեռ ունի նաև 1-ին դեմքում, «*nosotros*» և «*nosotras*» համապատասխանաբար արական և իզական սեռերի համար նշանակում են «մենք»: Նշված երևույթը հանդիպում է բազմաթիվ լեզուներում, բայց ավելի հետաքրքրական է, երբ առաջին դեմքի եզակի թվի դերանունն ունի իզական և արական սեռ: Այսպես, Նոր Գվինեայի ճգալա լեզուն ունի «*wn*» -«*kw*» արական սեռի համար և «*pxon*»՝ «*kw*»՝ իզականի համար: Նշվածը նույնպես եզակի դեպք չէ: Թայերենում (Thai) տղամարդն ասում է «*phom*», իսկ կինը՝ «*dichan*»՝ արտահայտելու համար եզակի թվի առաջին դեմքը (Trudgill 1983:62-63):

² Բրիտանացի լեզվաբան Գրեվ Գորբեթն իր գրքում, որը վերաբերում է քերականական սեռին, խոսում է լեհերենում քերականական սեռի և մարդու սեռի փոխհարաբերության մասին և նշում, որ լեհերենում քերականական տարբերություն կա արական սեռի ներկայացուցիչների համար, ի հակադրություն իզական սեռի ներկայացուցիչների, կենդանիների և անշունչ առարկաների, որոնք բոլորը պատկանում են իզական սեռին: Այսինքն, «գոյականի դասը բաժանված է երկու մասի, որի մի կողմում միայն տղամարդիկ են, իսկ մյուս կողմում մնացած բոլոր գոյականները» (Corbett 1993:57): Հեղինակը պնդում է, որ սա միանգամայն սեքսիստական մոտեցում է, որի հիմքում ընկած է հետևյալ հիմնահարցը. որքանով են իրար հետ կապված հասարակության

«Աշխարհագրական, էթնիկ, սոցիալական, դասակարգային բազմազանությունները, գոնե մասամբ, սոցիալական *հեռավորության ու վերաբերմունքի* արդյունք են, մինչդեռ սեռային տարբերությունը սոցիալական *դարբերության* արդյունք է», նշում է Թրաքսիլը, ընդգծելով, որ տղամարդկանցից և կանանցից տարբեր վերաբերմունք, վարվելակերպ, հատկանիշներ են ակնկալվում, և սեռային տարբերություններն այս փաստն են խորհրդանշում (Trudgill 1983:164): «Կին լինելով հանդերձ կարող են շատ բանի հասնել, եթե միայն տղամարդու հետ խոսելիս յուրաքանչյուր նախադասություն ավարտես «սիրելիս» բառով»: Սա աղջիկների դաստիարակության մարտավարության միակ թեզը չէ, որն արդեն մանկուց տրամադրում է իգական սեռի ներկայացուցչին համակերպման, զիջման, դուր գալու և պարզապես միշտ խնդրողի դերում լինելու, ինչպես նշում է Շեյնդլինը (Sheindlin 2004:27): Իսկ հետևյալ կարծրատիպն այնքան տարածված է, որ գրեթե իրականություն է դարձել: Որքան հաջողակ է տղամարդն իր աշխատանքում, այնքան մեծ է հնարավորությունը, որ նա լավ ամուսին կլինի, և հակառակը, որքան հաջողակ է կինը, այնքան մեծ է նրա ոչ լավ կին, ոչ լիակատար մայր լինելու հավանա-

կառուցվածքն ու սոցիալական դերերը և գեղդերային տարբերությունները լեզվում: Այս կապն առնելի է: Այս մասին խոսում է հայտնի արաբ լեզվաբան Հաջի-Հասսանը, որպես օրինակ ներկայացնելով Եգիպտոսի բեդվիններին, որոնց ընտանիքներում, որպես կանոն, ընտանիքի պաշտպանն ու բացարձակ ղեկավարը հայրն է: Երբ հայրը որևէ պատճառով բացակայում է, ապա ավագ որդին է ստանձնում հոր կարգավիճակը, նրա բոլոր իրավունքներով և պարտականություններով (ընդ որում, ընդունում է կարևոր որոշումներ՝ կապված մոր և ավագ քույրերի հետ): Սա բնավ չի նշանակում, որ նա չի հարգում մորը կամ քույրերին, կամ նրանց պակաս խելացի է համարում, պարզապես այստեղ բացարձակ ճշմարտություն է այն, որ սեռը որոշում է անձի սոցիալական կարգավիճակը: Ինչպես և Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում, սիրիական հասարակությունը մույնպես անձի սոցիալական կարգավիճակը նշելու համար մեծ շեշտ է դնում սեռի վրա: Բավականին բարձր է այն անձի կարգավիճակը, որը արական սեռի ներկայացուցիչ է, որից հետո միայն հաշվի է առնվում կրթությունը, տարիքը և այլն: Հետաքրքիր է, որ սեռը կարևորվում է նաև պետական մակարդակով: Ընտանիքի միակ որդուն ազատում են զինվորական ծառայությունից: Նույնիսկ եթե այդ ընտանիքում կան մի քանի աղջիկներ (ավագ քույրեր), միևնույն է, որպես խնամակալ, պաշտպան, որոշում կայացնող անձ դիտվում է միայն որդին, որը և պետք է միշտ ներկա գտնվի ընտանիքի կյանքում: Ուրեմն, «մշակութային տարբերությունները տեսնում ենք նաև, երբ դիտարկում ենք սեռային, տարիքային, կրթական, կայացման տարբերությունները» (Haji-Hassan 1999: 36):

կանությունը: Ինչպես տեսնում ենք, մոտեցումները երկու սեռերի հանդեպ միանգամայն տարբեր են, ինչպես և վերաբերմունքն ու ակնկալիքները: Եվ հիմնական շեշտն այստեղ դրված է դերերի բախշման վրա, քանի որ շատ դերեր ի սկզբանե վերագրված են մի սեռին և բացարձակապես ցանկալի չեն հակառակ սեռի համար, իսկ դրա հիմքում կրկին գեոդերային տարբերություններն են:

Սոցիալական դերերի մասին խոսելիս, Փ. Թրաշիլը նշում է. «Տղամարդիկ մեր հասարակությունում ավանդորեն գնահատվել են իրենց սոցիալական դիրքով, գործունեությամբ, դրամ վաստակելու ունակությամբ, կարողություններով, այլ կերպ ասած, նրանով, թե ինչ են անում: Մինչդեռ կանանց համար աշխատանքը երբեք չափորոշիչ չի հանդիսացել» (Trudgill 1999:167-168):

Բավականին հետաքրքիր է Վիոլա Քլեյնի մոտեցումն այս հարցին, որը պարզաբանում է իրավիճակը՝ փաստելով, որ պետության, իրավունքի, կրոնի, գիտության ձևավորման մեջ կանայք մասնակցություն չեն ունեցել: Բավականին երկար ժամանակ նրանք եղել են միայն դիտորդի դերում, փորձելով ներխուժել ու մասնակիցը դառնալ մի ավարտուն համակարգի: Սա է նրանց ստորադասության պատճառը: Եվ դրանից ազատվելու համար նրանց պայքարը բնական է: Պայքար, որը նպատակաուղղված է ցույց տալու և ապացուցելու, որ նրանք մույնպես կարող են այդ ամենն անել, անել ինչպես տղամարդիկ (Klein 1968:33-34): Իսկապես, կարելի է մույնիսկ տղամարդկանցից ավելի լավ էլ անել, սակայն այնքան հզոր են խոչընդոտող կարծրատիպերը, որ դրանցից ազատվելը գրեթե անհնարին է: Ահա թե ինչպես են նկարագրվում մույնանման աշխատանք կատարող անգլախոս մշակույթի երկու սեռերի ներկայացուցիչները:

A businessman is aggressive; a businesswoman is pushy,

He is careful about details; she is picky.

He loses his temper because he is so involved in his job; she is bitchy.

He follows through; she doesn't know when to quit.

He is firm; she is stubborn.

He makes wise judgements; she reveals her prejudices.

He is a man of the world; she's been around.

He isn't afraid to say what he thinks; she is opinionated.

He exercises authority; she is tyrannical.

He is discreet; she is secretive.

He's a stern taskmaster; she's difficult to work for.

Տարբերություններն ակնբախ են: Մի կողմից, տրվում են գործարար տղամարդուն վերագրված հետևյալ մակդիրները՝ գործնական, ուշադիր, գործն ավարտին հասցնող, հաստատական, իմաստուն, խորաթափանց, զուսպ և այլն, իսկ մյուս՝ գործարար կնոջը բնութագրող հետևյալ հատկանիշները. տաքարյուն, պնդերես, փորփրող, սնոտիապաշտ, դյուրագրգիռ, կամակոր, հիշաչար, համառ, գաղտնապահ և այլն: Բերված ասույթի (բանաստեղծության) հեղինակն անհայտ է, հայտնի չէ, իզական թե արական սեռի ներկայացուցիչ է նա, սակայն ընթերցողը հեշտությամբ կարողանում է ընկալել նրա վերաբերմունքը: Եվ հետաքրքրականն այն է, որ և՛ արական, և՛ իզական սեռի ներկայացուցիչները հավասարապես ընդունում են, որ սա բոլորովին կարծրատիպային մոտեցում չէ, այլ զուտ իրականություն: Ուրեմն, հարցն ինքնագնահատման մեջ է:

Չարմանալի չէ, որ մեծ անգլիացի գրող Շառլոտա Բրոնտեն իր գիրքն ավարտելուց հետո, 1850 թվականին գրում է. «Երանի թե քննադատներն ինձ գնահատեն ոչ թե որպես կին, այլ որպես գրող» (Kemp 1997:221):

Վերոհիշյալ օրինակը ներկայացնում է արևմտյան վերաբերմունքը, մասնավորապես, ամերիկյան և բրիտանական մտածելակերպը: Սակայն եթե մի հպանցիկ հայացք նետենք մարդկության պատմությանը, նրա զարգացմանը, հնագույն մշակույթներին, որը արտահայտվում ու փոխանցվում է լեզվի միջոցով, պարզ կդառնա ընդհանուր վերաբերմունքը իզական սեռի ներկայացուցիչների հանդեպ: Ինչպես նշում է Շիրազին, 586 թվականին մի քանի ֆրանսիական քաղաքներում հանձնախմբեր են կազմվել՝ հետազոտություններ անցկացնելու և պարզելու համար, թե արդյոք կանայք «մարդկային ռասայի» մասն են կազմում: Եզրակացությունը հետևյալն էր՝ «կա-

նայք մարդ են, բայց ստեղծված են միայն տղամարդկանց ծառայելու համար» (Shirazi 1986:62):

Ուշադրության է արժանի Կ. Յունգի մոտեցումը գենդերային կարծրատիպերի խնդրին, որը նա կապում է սեռային հնատիպերի հետ (Jung 2003:16): Նա վկայակոչում է Պյութագորասի սեռերի հականիշների կամ հակադրությունների աղյուսակը, որն Արիստոտելը ներկայացրել է իր «Սեռաֆիզիկա» աշխատության մեջ: Կասկած չկա, որ հույները կապում են արականը ուղիղի, լույսի ու լավի հետ, հետևապես իգականը, ծալքավորը, մութը, վատը ներկայացվում են համատեղ: Ֆեմինիստուհիների համար այս ամենը հայրիշխանության գենդերային կարծրատիպերի համակարգ է նշանակում: Հետաքրքրական է, որ սա շատ մնաց է չինական փիլիսոփայության հակադրությունների համակարգին, որ տեսնում ենք «Ին ու Յան» ուսմունքում: Այնտեղ Ինի հետ են ասոցացվում գույգը, իգականը, մթությունը, մինչդեռ Յանը կապվում է կենտի (այսինքն՝ եգակիության), արականի և լույսի հետ: Վերոնշվածի առնչությամբ ուշագրավ են նաև տարբերությունները: Հույն տղամարդը «հանգիստ/անշարժ» է, կինը՝ «շարժում», մինչդեռ չինացի տղամարդն «ակտիվ է», իսկ կինը՝ «պասիվ»: Ավելի խոր ուսումնասիրություն կատարելով, գիտնականները նշում են. «Անկախ համակարգից, արական սեռի ներկայացուցիչները ստանում են այն հատկանիշները, որոնք ավելի բարձր հեղինակություն են վայելում» (Jung 2003:17): Չի կարելի չհամաձայնել վերոհիշյալ այն կարծիքի հետ, որ ակտիվն ավելի լավ է, քան պասիվը: Բայց հույների համար բոլոր շարժումներից ազատ լինելը գերադասելի է որևէ շարժմանը ենթակա լինելուց, լինի դա ակտիվ, թե պասիվ շարժում: Նույնը առկա է նաև Հնդկաստանում, որտեղ Շիվա աստծո արական կողմը անտարբեր, անկիրք, հեռավոր և անշարժ է, մինչդեռ իգական կողմն ակտիվ է, ստեղծագործ և հզոր: Հնդկաստանում անմասնակից լինելն, անշուշտ, մասնակցությունից առավել է, վեր: Այս միջմշակութային նմանությունները ցույց են տալիս, որ մենք գործ ունենք գենդերային կամ սեռային կարծրատիպերի հետ:

Այժմ դիտարկենք տարբեր մշակույթների մի քանի ասացվածքներ, որոնք ընդհանրացնում և արտահայտում են այն կողմնակալ վերաբերմունքը, որն արտացոլում է արական սեռի գերադասությունը իգական սեռի հանդեպ:

It's a man's world. (American)

One tongue is enough for a woman. (Latin)

Better to live in a desert than with quarrelsome and fretful woman. (British)

“When a man gives his opinion, he's a man. When a woman gives her opinion, she's a bitch.” Bette Davis

The true man wants two things: danger and play. For that reason he wants a woman, as the most dangerous plaything.

“I have been crying," she replied, simply, "and it has done me good. It helps a woman you know, just as swearing helps a man.” Horace Annesley Vachell, *Romance of Judge Ketchum*

A woman, especially if she has the misfortune of knowing anything, should conceal it as well as she can.

We still think of a powerful man as a born leader and a powerful woman as an anomaly.” Margaret Atwood

“Why is it that all cars are women?" he asked. "Because they're fussy and demanding," answered Zee. Patricia Briggs, *Silver Borne*

Women have the miraculous ability to change the meaning of their actions after the event.” Milan Kundera, *Laughable Loves*

“Yes, it's a well-known fact about you: you're like death, you take everything.”

Milan Kundera, *Laughable Loves*

On one issue, at least, men and women agree: they both distrust women.” H.L. Mencken

There are no good girls gone wrong - just bad girls found out. Mae West

Women are a natural disaster. (Iranian)

Be attentive and look out – there are women and snakes. (Thai)

Women are the main gate to hell. (Indian)

If there's a trouble, look for a woman. (Latin)
A woman dies, evil lessens! (German)
A woman can deceive Satan easily! (Irish)
No link between a woman and humankind. (Roman)
A woman's heart is a deep, black, dreadful abyss. (Argentinian)
A straw man is better than a golden woman. (Arabic)
One man is better than a dozen of women. (Armenian)
A woman is only words, a man is deeds. (Latin)

Այս ասացվածքները պատկանում են տարբեր ժամանակների և տարբեր մշակույթների: Սրանց մի մասն անհետացել է, մյուսը՝ փոխվել, մնացածը առկա են մինչ այսօր: Անդադար փոփոխման մեջ են գտնվում քաղաքակրթությունները, մշակույթները, որոնք կամ մերժեցնում են միմյանց կամ ավելի են հեռանում: Փոխվում է մարդկանց վերաբերմունքը ամեն ինչի հանդեպ, փոխվում է նրանց լեզուն և մտածելակերպը: Սակայն նույնն են մնում երկու սեռերի ներկայացուցիչների ընկալման կարծրատիպերը:

§ 2 Կին-տղամարդ հաղորդակցումը՝ որպես միջմշակութային հաղորդակցման տարատեսակ

Կին-տղամարդ հաղորդակցումը կարելի է դիտարկել որպես միջմշակութային հաղորդակցում: Սա ինքնին տարբեր խոսակցական ոճերի և մարտավարությունների բախման արգասիք է: Երկու սեռերի ներկայացուցիչները խոսում են տարբեր գենդերլեկտերով³: Այս կարծիքին են հարում բազմաթիվ լեզվաբաններ: Ջոն Գրեյն իր «Men are From Mars, Women are From Venus» գրքում առաջարկում է ընդունել, որ տղամարդկանց և կանանց խոսքում այնքան հսկայական է տարբերությունը, որ թվում է, թե նրանք տարբեր մոլորակներից են (Gray 1992): Գենդերային հաղորդակցությունը բնորոշող բազմաթիվ ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներ կան: Բայց նախքան դրանք պարզաբանելը, հարկ է ընդունել մի քանի դրույթներ: Նախ այն, որ և՛ կանայք, և՛ տղամարդիկ, իրոք, ունեն խոսքի տարբեր ոճեր, նաև այն, որ այդ ոճերը հավասարապես վավեր և ընդունելի են: Եվ, իհարկե, այն, որ գենդերային հաղորդակցության նպատակը հաղորդակցական ոճը փոխելը չէ, այլ պարզապես հասկանալը, ընդունելն ու հարմարվելն այդ տարբերություններին:

Այն պնդումը, թե կանայք և տղամարդիկ ապրում են, մեծանում տարբեր աշխարհներում, կարող է սկզբում միանգամայն անհեթեթ թվալ: Քույրերն ու եղբայրները մեծանում են միևնույն ընտանիքներում, նրանք նաև երկու սեռի ծնողների երեխաներ են: Ուրեմն՝ որտե՞ղ են տղամարդիկ և կանայք սովորում լսել և խոսել տարբեր եղանակներով:

Նույնիսկ, եթե նրանք մեծանում են հարևանությամբ, մույն թաղամասում կամ միևնույն տանը, աղջիկներն ու տղաները մեծանում են բառերի տարբեր աշխարհներում (Tannen 1994:80): Մյուսները՝ շրջապատի մարդիկ, նրանց հետ տարբեր եղանակներով են խոսում

³ Ռոնդա Քելլին սեռերի լեզուն սահմանելու համար առաջարկում է «գենդերլեկտ» տերմինը: Իր ձևով նման լինելով դիալեկտ (բարբառ) բառին, գենդերլեկտը լեզվի մի տարբերակ է, որն առնչվում է ոչ թե աշխարհագրության կամ ընտանեկան հենքին կամ դերին, այլ խոսողի սեռի հետ (Kelly 2003:31-37):

և նրանցից էլ ակնկալում ու ընդունում են հաղորդակցվելու միանգամայն տարբեր եղանակներ: Իսկ ամենակարևորն այն է, որ երեխաները սովորում են խոսելաձևը, հաղորդակցվելու եղանակները ոչ միայն ծնողներից, այլ նաև իրենց հասակակիցներից: Բազմաթիվ են այն օրինակները, երբ ծնողներն ունեն օտար կամ գաղառային առողջանություն, սակայն երեխաների խոսքում այն լրիվ բացակայում է:

Վաղ հասակում ընկերների հետ հաղորդակցվելու նրանց եղանակները տարբերվում են: Չնայած աղջիկներն ու տղաները հաճախ են միասին խաղում, բայց, այնուամենայնիվ, ավելի շատ ժամանակ են անցկացնում միևնույն սեռային խմբերում: Եվ, թեպետ, նրանց որոշ զբաղմունքներ մույնն են, սակայն գերադասելի խաղերը տարբեր են, և հենց այդ խաղերում նրանց լեզու կիրառելու եղանակները հստակորեն սկսում են տարբերակվել:

Տղաները հակված են դրսում խաղալու, մեծ խմբերով, որոնք կառուցված են ըստ ստորակարգության: Նրանց խմբերը միշտ առաջնորդ ունեն, ով որոշում է, ինչպես խաղի ընթացքը, այնպես էլ շփման ձևերն ու եղանակները: Առաջնորդ տղա երեխան կարող է ըստ քայլերի ասել, թե որ խաղընկերը ինչ և ինչպես պետք է անի, միաժամանակ ընդդիմանալով անել այն, ինչ մյուսներն են առաջարկում: Հենց այս հրահանգները տալով և մյուսներին գործի դնելով է նա «բանակցում» իր կարգավիճակի համար: Կարգավիճակ ձեռք բերելու մեկ այլ եղանակ է կենտրոնական բեմահարթակը գրավելը, որը նրանք կիրառում են գրեթե միշտ, մույնիսկ հասուն տարիքում: Սա իրագործում են հիմնականում ինչ-որ տպավորիչ պատմություններ կամ անեկդոտներ պատմելով, միևնույն ժամանակ չմոռանալով խոչընդոտել մյուսներին ինքնադրսևորվելու: Այսինքն, արդեն իսկ վաղ տարիքից արական սեռի ներկայացուցիչների մոտ նկատելի է մարտահրավեր նետելու, ինչպես նաև ընդունելու ունակությունն ու պատրաստակամությունը:

Տղաների խաղերը գրեթե միշտ հաղթողներ ու պարտվողներ ունեն, ինչպես նաև կանոնների բարդ ու հստակորեն մշակված մի համակարգ, որոնք և հաճախ դառնում են վիճաբանության թեմա կամ կարգավիճակ ձեռք բերելու ևս մեկ եղանակ: Եվ, վերջապես,

տղաները հաճախ են պարծենում իրենց հմտություններով և ավելի հաճախ վիճարկում, քե ով է լավագույնը (Tannen 1994:92):

Աղջիկները, խաղում են փոքր խմբերով կամ զույգերով: Աղջիկների հասարակական կյանքի կենտրոնը լավագույն ընկերուհին է: Խմբի ներսում առանցքայինը մտերմությունն է: Հաճախ խաղացվող խաղերում, օրինակ, ցատկապարան կամ «կլաս» խաղում բոլորը հերթ ունեն, իսկ մյուսներում (տուն-տունիկ)՝ հաղթողներ կամ պարտվողներ չկան: Թեպետ որոշ աղջիկներ ավելի հմուտ են, նրանք, երբեք չեն պարծենում դրանով կամ ցույց տալիս, որ կարծում են, քե մյուսներից ավելի լավն են: Աղջիկները հրահանգներ չեն տալիս, այլ իրենց նախընտրությունները ներկայացնում են որպես առաջարկներ, որոնք հավանական է, կընդունվեն մյուսների կողմից: Նրանք չեն պայքարում «կենտրոնի» համար, ուրեմն և ուղղակի մարտահրավեր չեն նետում միմյանց: Իսկ ժամանակի մեծ մասն անց են կացնում պարզապես նստելով և զրուցելով: Աղջիկները սովոր չեն «կարգավիճակի» համար միջոցներ ձեռնարկելու, նրանց համար շատ ավելի էական է սիրված լինելը:

Այս դիտարկումները հաստատվում են բազմաթիվ ուսումնասիրություններով, որոնք կրկին հանգեցնում են նրան, որ խառը գեղեցիկների հաղորդակցումը բնութով միջմշակութային է, որտեղ, ինչպես Թաննենն է ասում, տղամարդիկ և կանայք խոսում են տարբեր գեղեցիկություններով (Tannen 1990:2-14): Եվ սրանց առաջնային տարբերությունն այն է, որ կանայք խոսում են ներդաշնակությամբ և ամուր հարաբերություններ պահպանելու համար՝ փորձելով զրույցը բաց պահել, իսկ տղամարդիկ, մեծ մասամբ, հաստատակամություն և համառություն են կիրառում բարձր և իշխող կարգավիճակ ձեռք բերելու կամ հաստատելու համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանայք հակված են խոսել մի այնպիսի եղանակով, որը կստուգի խոսակցի վերաբերմունքն այս կամ այն հարցին, ի տարբերություն տղամարդկանց, որոնց դա կարծես չի մտահոգում: Կանայք ավելի շատ են հարցեր տալիս, մասնավորապես, անջատական հարցեր (tag questions) (Брутян 2008:88), (Coates 1993:67): Լեզվական այսպիսի կառույցնե-

րի կիրառումը Հոլմսը բացատրում է հետևյալ կերպ. մմանատիպ հարցերը ցույց են տալիս կանանց ավելի քաղաքավարի լինելը տղամարդկանց համեմատ և դրանց օգնությամբ նրանք խթանում են դիմացինին արտահայտելու իր մտքերը (Holmes 1986:489): Լակոֆը դիտում է լեզվական այսպիսի մոտիվները որպես «անապահովության» և «հավանություն փնտրելու» նշան (Lakoff 1975:34): Ֆիշմանը սա բացատրում է որպես «հմուտ ռազմավարություն» տղամարդուն խոսակցության մեջ ներգրավելու համար (Fishman 1983:88): Իսկ Դելին ասում է, որ կնոջ գործածած լեզուն պատմականորեն ծագում է *ճնշման* կառույցներից, երբ կանայք դիմում էին տղամարդկանց որպես իրենց տերերի (մեջբերված՝ Thompson 1996): Քաղաքավարությունը, չնայած դրական արժևորում ունի այսօր, մի ժամանակ նվաստացման նշան էր: Քաղաքավարության առաջնային գործառույթը հասարակության ավելի բարձր կարգավիճակ ունեցող մարդկանց ճանաչելն էր: Սա բացատրում է, թե ինչու են մարդաբանական ուսումնասիրությունները կանանց ավելի քաղաքավարի գտնում:

Հիմա դիտարկենք մի քանի հաղորդակցային առանձնահատկություններ, որոնք բնորոշում են անգլերենով խոսող տղամարդկանց լեզուն, և համեմատենք դրանք իգական սեռի ներկայացուցիչների խոսքային առանձնահատկությունների հետ:

Տղամարդիկ իրենց խմբային քննարկումներում, բավականին ժամանակ են ծախսում, որպեսզի պարզեն, թե ով է լավագույնս տեղեկացված վերջին իրադարձություններին, քաղաքականությանը, ֆիլմերին, գրքերին, ճանապարհորդային անցուղարձին և այլն: Սա մրցակցության աստիճանը չափելու միջոց է նրանց համար, ինչպես նաև բանակցային մի փուլ, պարզելու, թե ստորակարգության որ աստիճանի վրա է գտնվում մեկը մյուսի համեմատ: Տղամարդկանց կարճ քննարկումը կամ որևէ խոսք կանանց բացակայությամբ, անմիջապես հասկանալի է դարձնում, որ գիտելիքների և իմացության ցուցադրումն ավելի արժեքավոր է տղամարդկանց, քան կանանց համար: Էրիսի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանայք սկզբնական ժամանակը ծախսում են մտերմություն ձեռք բերելու

վրա, ինչը կատարվում է իրենց ինքնաբացահայտման միջոցով (Aries 1987:156):

Այժմ անդրադառնանք Լակոֆի երկարատև ուսումնասիրությունների հիմքի վրա Ստերնի կողմից դիտարկված կանանց լեզվի երեք առանձնահատկություններին: Ստերնը գտնում է, որ կանայք ծայրահեղության են հասցնում հասարակության կողմից ակնկալիքները «գեղեցիկ» խոսելու վերաբերյալ և տղամարդիկ ծայրահեղության են հասցնում «անբարեկիք լեզվի» հասարակության ակնկալիքները:

Երեք բնորոշ գծերը, որ առանձնահատուկ են դարձնում կնոջ լեզուն լեզվի **պարզամտությունն է, փափանդականությունը և վերբալ (բառային) չափազանցումը** (Lakoff 1975:122):

Քերականական կառույցների և բառերի ընտրության պատշաճությունն ամրապնդում է երկակի սեռային ստանդարտը: Առաջինն ու ամենակարևորն այն է, որ կանանցից ակնկալվում է վայելուչ, նրբահունչ խոսք: Սա ենթադրում է, որ նրանք պետք է խուսափեն անպարկեշտ, անվայել բառերից, հայիոյանքից և անընդհատ կրկնվող կոպիտ արտահայտություններից (որոնք իմաստակիր չեն, բայց անդադար կրկնվում են խոսքում, ինչպես օրինակ՝ **damn, heck, hell, shit, crap, bastard, asshole** և այլն): Սեռական օրգանների հիշատակումը տաքու է կանանց համար, մինչդեռ տղամարդիկ, դրանք գործածելով, չեն կորցնում իրենց հարգանքը, այլ ընդհակառակը, դառնում են «խմբի տիպ», հեղինակություն վայելող մեկը:

Ինչպես նշում է հեղինակը, պարկեշտ բառերի ընտրության հետ մեկտեղ ակնկալվում է, որ կանայք կիրառեն ճիշտ քերականական ձևեր և լեզվում առկա հնարավոր քաղաքավարի ձևերը: Կատարյալ ճշտության ակնկալիքը սկիզբ է առնում կանանց մշակութային «հուրը» պահպանելու դերից (Stern 1997:36-49): Մինչ տղամարդիկ զբաղվում էին աշխատանքով կամ կռվում էին իրենց երկիրը պաշտպանելու համար, կանայք մնում էին տանը՝ պահպանելու իրենց փայփայած արժեքները՝ ապագա սերունդներին փոխանցելու նպատակով: Կանայք ավանդաբար համարվել են լեզվի պահպաններ, առաջին հերթին երեխաներին կրթող ընտանիքներում, իսկ հետո նաև ավելի

պաշտոնական մասնագիտական դերերում որպես տարրական դասարանների ուսուցիչներ, գրադարանավարներ, դասախոսներ և այլն:

Ինչպես նշում է Թանենը (Tannen 1994:66-68), կանանց լեզուն նաև խուսափում է անպատշաճության ամոքաբծից, **գրադարանականության** ցուցադրելու միջոցով: Այս տատանողականությունն արտահայտվում է երկու եղանակով: Առաջին եղանակը հաստատում, պնդում արտահայտելն է անջատական հարցերի միջոցով, ինչպես նաև լրացնող բառերի վրա հենվելը: Կանայք ասվածը ներկայացնում են այնպիսի ձևով, կարծես փորձում են խոսակցին՝ ստուգում նրա շփման և ընկալման պատրաստականությունը: Նրանք պատմողական նախադասությունները փոխակերպում են հարցի: Օրինակ՝ ամենապարզ նախադասությունը *He is a good boy.*, նրանք նախընտրում են ձևակերպել անջատական հարցի տեսքով՝ *He is a good boy, isn't he?* կամ էլ պարզապես հարցական կամ ժխտական-հարցական նախադասությամբ *Isn't he a good boy?* կամ *He isn't a bad guy, is he?* և այլն: Դիտենք օրինակը:

Ursula could feel her suffering.

"You hate this, **don't you?**" she asked.

"It **awfully** bewilders me, **really**," stammered Gudrun.

"You won't stay long, **will you?**" replied Ursula.

Lawrence D.H. "Women in Love", p.25

Տարակուսանք, տատանողականություն արտահայտելու երկրորդ եղանակը խուսափողական պատասխան տալն է: Կանայք հակված են այնպես գործածել բառերը, որ դրանք մտքերը ներկայացնեն «ձևափոխված» տեսքով, այսինքն շարադրվեն այնպես, որ երբևէ կտրուկ անհամաձայնության տեղիք չտան: Բացի այդ, կանայք մեծապես գործածում են բազմաթիվ իմաստը սրող, մույնիսկ չափազանցված ածականներ, որոնք ծառայում են գրեթե ամեն տեսակի գոյականների նկարագրելու համար, ինչպես օրինակ, **marvelous, splendid, wonderful, devine, perfect, fantastic, unbelievable, incredible, out of this world** և այլն: Ձուգահեռաբար, նրանք կիրառում են ոչ իմաստալից արտահայտություններ, **լրացնող բառեր**, ինչպես

օրինակ՝ *well, you know, you see, kind of, it seems, looks, it sounds, like*
և այլն: Եվս մեկ օրինակ գրականությունից:

"We don't know the people, we are almost *complete* strangers here,"
said one of the sisters.

"Ah," said the other, "you know what we mean. *Can't* we go up
there, and explore that coast?" She pointed to a grove on the hillock of the
meadow-side, near the shore, half-way down the lake. "That looks
perfectly lovely. We might even bathe. *Isn't* it *extremely* beautiful in this
light. *Really, it's like* one of the reaches of the Nile – as one imagines the
Nile."

Gerald smiled at her factitious enthusiasm for the distant spot.

"Yes, you might go there if we could get a boat. They seem to be all
out."

"*How lovely* it would be!" cried Ursula wistfully.

"And do you want tea?" he said.

"Oh," said Gudrun, "we could just drink a cup and be off."

"Can you manage a boat well?" he asked.

"Yes," replied Gudrun, "*pretty well*."

"Oh yes," cried Ursula. "We can both of us row *like waterspiders*."

"You can? There's a light little canoe of mine that I didn't take out
for fear somebody should drown themselves. Do you think you'd be safe
in that?"

"*Oh, perfectly*," said Gudrun.

"*What an angel!*" cried Ursula.

"Well – then I'll get then to put you up a tea-basket, and you can
picnic all to yourselves."

"That's a *wonderful idea, isn't it*", replied Gudrun.

"*How fearfully good! How frightfully nice* if you could" cried
Gudrun warmly, her colour flushing up again.

Lawrence D.H. "Women in Love", p.190-191

Կանանց գործածած զգուշավոր, նախապատրաստական ար-
տահայտությունների հետ է կապված վերոհիշյալ վերջին առանձնա-

հատկությունը. **վերբալ (բառային) չափազանցումը**: Չափազանցման մի տեսակ է **երկարաբանությունը** (չատախտությունը), երբ մեկ միտք արտահայտելու համար պահանջվում են անհրաժեշտ բառերից ավելին: Սա, իհարկե, անխուսափելիորեն ուղեկցվում է լրացնող բառերով, ուղղակի պնդումները մեղմելու միջոց են հանդիսանում (խուսափողական պատասխաններ տալու միջոցով):

Օրինակ՝ «Well, I went to the dean's office. Greeted everybody, you know, there's always a lot of people there. Everybody speaks, buzzes, don't know why, always dissatisfied, embarrassed.... Always the same, you know. By the way, Maura was there. Oh, well, she has put on weight. I don't know, running here and there, getting fatter at that! Well, in short, I kissed her, congratulated, you know. We sat, had a chat for a second, spoke about everything, you know. Ah, you never feel you're tired until you sit down. Always the same, things never change. Mm, here is the bell. Well, in a word, I took the note-books from the dean's office»:

Այս ձայնագրությունը վերլուծելիս հասկանալի է դառնում, որ խոսքի ուղերձը մեկն է՝ «դեկանատից վերցրի տետրերը»: Սակայն այն ներկայացվում է **վերբալ (բառային) չափազանցմամբ, երկարաբանությամբ**: Սա բնորոշ է կնոջ խոսքին: Այս միջոցով նա արտահայտում է իր մտերմիկությունը, իր հոգեվիճակը, որը բազմիցս ընդհանրացվում է մյուսների զգացողության հետ, բազմաթիվ ցաք ու ցրիվ մտքեր և ոչ էական մանրամասներ: Այս խոսելաձևի նպատակը պարզ շվումն է, ոչ՝ տեղեկատվության հաղորդում, խնդրի լուծում կամ որևէ այլ բան: Իսկ հետևյալ օրինակը հարցազրույց է ներկայացնում: Ուշադրություն դարձնենք կնոջ խոսքին, սրող, շեշտող բառերին, ոչ իմաստակիր, այլ ավելի շուտ հուզական բառաշարքին:

Interviewer and Stephanie Taylor

I- What are the best travel experiences you've had?

ST – *Ooh, lots, lots. Particularly, it's particularly good* when you get a *great* hotel with *beautiful* towels and *beautiful* bathrooms and *nice soft* bed, erm, and *good, modern* sports facilities. Things like that – that's always a luxury. Erm, and *the Virgin, the Virgin* lounge, I think. That's a good experience with all the high tech things. I *awfully like* that.

I – What are the worst?

ST – *Probably* related to bad accommodation, but *probably more*, I think, to do with those things out of your control. Just to choose one example, it would be a flight back from the US which *was delayed, and delayed, and delayed*, and finally cancelled. *Awful, terrible. Unbearably terrible*. And we all slept on the floor with no information. *Intolerable!* And it was *very* hard on the floor.

Ծայրահեղացման մեկ այլ տեսակ է *հիպերբոլը* (չափազանցում): Լեզուն չափազանցված է, երբ բառերը կամ արտահայտությունները հաճախակիորեն ընդգծվում կամ առանձնացվում են, երբ պարզ մեկնաբանությունները ավարտվում են բացականչական նշաններով, և երբ արտահայտիչ, շեշտված բառերը ցրված են ողջ խոսքում: Կանայք հաճախ են դիմում այդ հմարին:

Օրինակ՝ «Well, we went to the church. If you were there, if you saw that.... incredible, just out of this world. The church was fully decorated, ... white, a true wonder. Flowers, flowers, flowers.... Just shocking, you know. As for the bride, well, she was a fairy, a true fairy..., just imagine, kids were running here and there, maids in pink. Yeees, it was something. Wish you were there... that was unbelievable, just splendid....»

Իսկ ի՞նչ պայմաններում և ե՞րբ են ծագում, սկիզբ առնում խոսակցային նորմերն ընդհանրապես: Տղամարդիկ և կանայք յուրացնում են իրենց հաղորդակցային հմտությունները հասակակիցների մույնասեռ խմբերում: Այս իմաստով, նրանք մեծանում են տարբեր մշակութային միջավայրերում, ինչպես արդեն նշվեց վերևում, ուրեմն և զարգացնում են իրենց մտաղբություններն ու ընկալումներն ազդարարելու տարբեր սովորույթներ, հաղորդակցման մեջ ներգրավվածության հաստատման և արտահայտման տարբեր նորմեր: Այս մշակութային տարբերություններն արտացոլվում են այն բազմազան օրինակներում, որոնք դիտարկվել են աղջիկների ու տղաների և կանանց ու տղամարդկանց միջև խոսքային փոխհարաբերության ժամանակ: Սրանք նաև բացատրում են փոխադարձ բացասական գնա-

հատականները, որոնցով հաճախ ավարտվում է խառը գեմդերային հաղորդակցումը:

Երբ աղջնակին ասում են, որ իրեն վայելուչ պահի, ի նկատի ունեն համեստությունն ու լուռ լինելը, հնազանդ և զուսպ լինելը և այլն: Այսինքն, նրանից ակնկալվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ խոսքային զսպվածություն: Բայց փոքր տղային ուղղորդում են «տղամարդ եղիր» խոսքով, որը ենթադրում է վեհ, ուժեղ, համառ, ինքնավստահ լինելը: «Տղամարդ լինելու» գաղափարն այնքան դրական բնորոշում ունի, որ այն միշտ գործածվում է որպես հաճոյախոսություն:

Շատերը *man, gentleman, guy, chap, macho, boy, bloke, lout, bumpkin, redneck* բառերը կարող են երկիմաստ ընդունել, սակայն դրանք գրեթե միշտ ընկալվում են որպես հաճոյախոսություն: Իսկ ավելի հետաքրքրական է այն փաստը, որ կնոջը նույնպես, շատ հաճախ հաճոյախոսում են՝ «*տղամարդ կին*» կոչելով: Սա առկա է տարբեր լեզուներում, գրեթե նույն իմաստներով, այսինքն՝ կինը գործունյա է, ակտիվ, դիմացկուն, համառ ու սքափ, և նույնիսկ խելացի: Սակայն, հակառակն ասելը, այսինքն տղամարդուն կին, կանացի կամ տղային «*աղջիկ*» կոչելը միշտ վիրավորական է, գրեթե բոլոր լեզուներում, քանի որ ընդգծում է միայն բացասական հատկանիշներ՝ թուլություն, պարտվողականություն, զիջողականություն, լացկանություն, շատախոսություն և այլն:

Դեռ վաղ հասակից երեխաներին ուղղորդում են, սովորեցնում արական սեռի գերազանցությունը: Ինչպես մանկական հոգեբաններն են մատնանշում, փոքր աղջիկները շատ ավելի ազատ են սեռային դերերի փորձարկումներում, քան փոքր տղաները: Եթե աղջնակն իրեն տղայի նման է դրսևորում, շատ ծնողներ տարբեր զգացողություններ են ունենում, հաճախ հպարտանում են: Բայց եթե նրանց փոքր տղան իրեն աղջկա նման է պահում, նրանք նվազագույնը լարվում են (կարող են նույնիսկ հոգեբանի դիմել): Լրիվ ընդունելի է այն, որ աղջիկներին քնացնում են եղբոր համար գնված օրորոցում, հագցնում են նրա «փոքրացած» հագուստը, թույլ են տալիս քշել եղբոր հեծանիվը: Սակայն հակառակը չի ընդունվում: Նույնիսկ շատ

վոքը տղային երբեք վարդագույն գիշերանոցով չեն քնացնում, էլ ուր մնաց վարդագույն հեծանիվն ու ծաղկեզարդ, թիթեռնիկներով օրորոցը:

Ուրեմն, որպես եզրահանգում ընդունենք, որ հասարակության դերը երեխաների խոսքի ձևավորման, ինչպես նաև վարքագծի դրսևորման մեջ հսկայական է: Եվ մեկ անգամ շեշտենք, որ նվազ չէ նաև հասակակիցների դերը: Սակայն, մեր հիմնական եզրակացությունն այն է, որ, երկու սեռերի ներկայացուցիչների միջև հաղորդակցումը հարկ է դիտել որպես միջմշակութային հաղորդակցում:

ԳԼՈՒԽ 2
ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԽՈՍՔԱՅԻՆ
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 1 Հաղորդակցային տարբերությունները արական և իգական սեռի ներկայացուցիչների միջև

Իգական և արական սեռի ներկայացուցիչները տարբերվում են միմյանցից իրենց մտածելու, զգալու, գործելու և խոսելու եղանակի տեսանկյունից: Իրականում, ամենաաչքի ընկնող տարբերությունները սեռերի միջև տղամարդկանց և կանանց հաղորդակցության յուրահատուկ եղանակներն են:

Ինչպես արդեն նշվել է, վերջին տարիներին տղամարդկանց և կանանց հաղորդակցության ոճերը և ձևերը դարձել են լուրջ ուսումնասիրության առարկա: Լեզվաբանները բավականին հանգամանալից ձևով գրանցել են բոլորի կողմից ընդունված այս՝ տարբերությունները: Սակայն, ինտենսիվ հետազոտությունների հիմնական նպատակը ոչ թե լավագույն հաղորդակցական ոճը որոշելն է կամ դրդելը հակառակ սեռին լիովին փոխելու իր լեզուն, այլ պարզապես տարբերությունները ճանաչելն է՝ միմյանց ըմբռնելու և հարմարվելու նպատակով: Երբ արական և իգական սեռի ներկայացուցիչներն ավելի լավ ըմբռնեն, ճանաչեն հաղորդակցական ոճերի տարբերությունները, նրանք կկարողանան բարելավել իրենց հաղորդակցությունը, շփումը հակառակ սեռի ներկայացուցիչների հետ:

Ընդհանրապես, հաղորդակցության գենդերային տարբերությունները վերաբերում են բոլոր տղամարդկանց և կանանց բոլոր համատեքստերում: Անկախ կրոնական, ռասայական, ազգային պատկանելությունից, իգական և արական սեռի ներկայացուցիչներն ունեն իրենց մտքերն ու զգացումներն արտահայտելու ուրույն եղա-

նակներ: Տանը թե աշխատանքի վայրում, ընկերական շրջապատում, թե ամուսնական կյանքում այս տարբերություններն ակնհայտ են: Դրանց ազդեցությունը նկատելի է առօրյա գրույցներում, պաշտոնական հանդիպումներում և շփումներում, մամուլում, դատարանում, կրթօջախներում և այլուր:

Իսկ ինչու՞ են տղամարդիկ և կանայք տարբեր ձևով խոսում: Ինչպիսի՞ գործոններ են հանգեցրել դրան: Բազմաթիվ են պատասխանները, սկսած մարդու և հասարակության պատմական զարգացման գործոնից, հասարակության մեջ տղամարդու և կնոջ դերերից, հասարակության տված գնահատականներից տղամարդու և կնոջ գործունեությանը, մինչև նրանց մախատիպային և կարծրատիպային պատկերի ընկալումը, որը սերնդեսերունդ փոխանցվելով, կարծես, դարձել է բացարձակ ճշմարտություն: Կան սուբյեկտիվ և օբյեկտիվ, քաղաքական և պատմական բնույթի գործոններ, սակայն գենդերային տարբերության լեզվաբանական դասական օրինակը, որին ծանոթ են լեզուն ուսումնասիրող գրեթե բոլոր մասնագետները, հետևյալն է: Այն գալիս է դեռ վաղ շրջանի արևմտյան հնդկացիներից: Երբ եվրոպացիներն առաջին շփումն ունեցան կարիբյան հնդկացիների հետ, նրանք հայտարարեցին, որ «տղամարդիկ և կանայք խոսում են տարբեր լեզուներով»: Սա շատ ցնցող հայտնագործություն էր, մանավանդ որ իր գուգահեռը չուներ աշխարհում. ոչ մի այլ վայրում սեռերի լեզվական տարբերությունն այնքան հսկայական չի եղել, որ հանգեցնի այդ մտքին: Ժամանակակից լեզվաբանությունն այն բացատրում է հետևյալ կերպ. տղամարդիկ գործածում են հսկայական թվով իրենց բնորոշ արտահայտություններ, որոնք կանայք հասկանում են, սակայն երբեք չեն արտասանում (կան տարբեր պատճառներ): Մյուս կողմից, կանայք օգտագործում են բառեր և արտահայտություններ, որոնք չեն գործածվում տղամարդկանց կողմից, այլապես դա եթե ոչ վիրավորանքի, կոմի, ապա գոմե ծիծաղի տեղիք կտար: Ահա և թվում է, թե նրանք խոսում են տարբեր լեզուներով: Այս բացատրությունից, որ տալիս է 17-րդ դարի մի գրող (մեջբերված Trudgill 2000:65), կարող ենք եզրակացնել, որ թեկուզև, տարբերությունները երկու սեռերի խոսքի միջև հստակ են, սակայն

ընդգրկում են միայն համեմատաբար փոքր թվով կետեր: Այսինքն, նրանք չեն խոսում տարբեր լեզուներով, այլ ընդամենը միևնույն լեզվի տարատեսակներով: Եվ նույնիսկ այս դեպքում հարց է ծագում. ինչպիսի՞ քաղաքություն կարելի է տալ այս մասնակի տարբերություններին: Այս քաղաքությունը տալիս են հնդկացիները, և այն հետագայում ընդունվում և գիտականորեն հաստատվում է լեզվաբանների կողմից: Երբ կարիբյան կղզիների բնակիչները եկան գրավելու Դոմինիկյան կղզիները, այդ ժամանակ բնակեցված էին առավակ ցեղի կողմից, նրանք բնաջնջեցին բոլոր բնակիչներին, թողնելով միայն կանանց, նպատակ ունենալով բազմանալ և բնակեցնել կղզիները: Պատմությունը ցույց է տվել, որ լեզվի կրողները կանայք էին, նրանք էին պահպանում լեզուն և փոխանցում այն սերնդեսերունդ: Այստեղ հետագա սերունդները խոսում էին այն լեզվով, որով խոսել էին կանայք, այսինքն առավակ ցեղի լեզվով:

Ահա թե ինչպես է բացատրում Թրադջիլը կնոջ և լեզվի կապը. «Ավանդորեն տղամարդիկ մեր հասարակության մեջ սոցիալապես գնահատվել են իրենց գործունեության, վաստակելու հնարավորության, կարողությունների, ուժի շնորհիվ: Այլ կերպ ասած, նրանով, ինչ անում են ... Մինչդեռ նրանք [կանայք] երբեք այդ հատկանիշների համար չեն գնահատվել, պարզապես հնարավորություն չեն ունեցել կամ դեռ ի վիճակի չեն եղել մրցելու: Նրանց հարկավոր են եղել կարգավիճակ ստանալու այլ դրոշիչներ. և դրանցից մեկը, հավանաբար ամենակարևորը, *լեզուն էր*» (Trudgill 1983:167-168):

Մի փոքր տարբեր, բայց հետաքրքիր քաղաքություն է առաջարկում հայտնի լեզվաբան Օտո Յեսպերսենը (տե՛ս Haji-Hassan 1999:134-135): Ըստ նրա, գենդերային տարբերությունները լեզվում որոշ դեպքերում կարող էին տաբուի արդյունք լինել: Եթե կանանց կամ դեռահաս տղաներին արգելված էր գործածել որոշակի բառեր, որոնք վերաբերում էին ինչպես երևույթներին, այնպես էլ առարկաներին, ապա հավանականությունը շատ մեծ էր, որ նրանք պետք է գտնեին, մտածեին, հորինեին այլ բառեր ու արտահայտություններ նույն միտքն արտահայտելու համար: Սա է տաբուի արդյունքը, որը, լեզվում հանգեցրել է գենդերային տարբերությունների: Հայտնի է, որ

գույու ցեղում կանայք իրավունք չունեն անունով դիմելու ամուսնու հորն ու եղբայրներին, այլապես կպատժվեն, բայց չդիմելը նույնպես արժանանում է պատժի: Բնականաբար, եթե այս օրենքը տարածվում է ցեղի բոլոր կանանց վրա, ապա սա լեզվում հանգեցնում է գենդերային տարբերության:

Այժմ դառնանք մեր օրերին: Վերջին տարիներին այն պատճառով, որ էլ ավելի մեծ թվով կանայք են աշխատում, և նրանց շփման դաշտն ավելի է մեծացել, նկատելի են դառնում հաղորդակցության եզակի ոճեր և առկա են հաղորդակցական բախումներ, հակասություններ, բյուրեմբոնումներ: Արդեն հրապարակայնորեն են քննարկվում հաղորդակցության ոճերի ակնհայտ տարբերությունները տղամարդկանց և կանանց միջև, որոնք և բազմաթիվ լեզվաբաններ ներկայացնում են իրենց հետազոտությունների արդյունքում:

Ինչպես արդեն նշել ենք, լեզվաբան Ռ. Քելլին առաջարկում է «գենդերլեկտ» տերմինը՝ լեզվի մի տարբերակ, որն առնչվում է խոսողի սեռի հետ (Kelly 2003:31-37): Մեկ այլ լեզվաբան՝ Ս. Իլայնը, գենդերային լեզվի տարբերությունները հաղթահարելու տեխնիկական միջոցներ է առաջարկում իր «Genderspeak» գրքում (Elign 1993): Հայտնի լեզվաբան Դեբորա Թանները հանգամանալից հետազոտության արդյունքում գենդերային հաղորդակցության վերաբերյալ հրատարակել է մի քանի գիրք, որոնց թվում հայտնի է «You Just Don't Understand: Men and Women in Conversation» գիրքը (Tannen 1990):

Իսկ ինչպե՞ս են առաջանում ու տարածվում գենդերային հաղորդակցության այս տարբերությունները: Լեզուն և հաղորդակցությունը, ինչպես հայտնի է, համարվում են ձեռքբերովի, սովորած վարվելաձևեր, որոնք զարգանում են բնության և դաստիարակության, գենետիկ նախատրամադրվածության և շրջապատի խթանման միաձուլումից: Արդյունքում, գենդերային հաղորդակցական տարբերությունները ծնունդ են առնում դեռ վաղ մանկության տարիներին: Երեխաներն իրենց ծնողներից, հասակակիցներից են սովորում ինչպես խոսել, հաճախ կրկնօրինակելով նույն սեռի լեզվական ուրույն կաղապարները: Հիշենք, թե որքան մեծ ուշադրություն ենք դարձնում աղջիկների խոսքին, քանի անգամ ենք ասում «գեղեցիկ

խոսիր, աղջկան վայել խոսիր, մի ասա այս կամ այն բառը», մինչդեռ տղաներին ավելի մեծ ազատություն ենք տալիս: Սա կարող է հաստատել ցանկացած ծնող, որ տարբեր սեռի երեխաներ ունի: Այս մասին են խոսում նաև Լակոֆն ու Կամերոնը: Առաջինը, մասնավորապես գրում է, որ «աղջնակներին խրախուսում ու պարգևատրում են նրբագեղ խոսելու համար, մինչդեռ տղաների խոսքի ճկունությունն ու կոպտությունը հաճելի է թվում, նրանք դա ավելի շուտ ծիծաղելի են համարում, քան ապշեցուցիչ» (Lakoff 1975:6): Կամերոնը համամիտ է նրա հետ և ավելացնում է, որ երեխաների գործունեությունը նույնպես ձևավորում է խոսքի տարբեր տեսակներ: «Տղաները հակված են խաղալու մեծ խմբերով, որտեղ յուրաքանչյուրն առաջնորդ է կամ ձգտում է դրան, գործածելով անմիջական, կոպիտ խոսք: Աղջիկները խաղում են փոքր խմբերով, որպես «լավագույն ընկերներ», առաջնորդի առկայությունը կամ բացակայությունը բացարձակ դեր չի խաղում: Նրանք չափազանցում են մտերմությունը, մերձեցումը և նվազագույնին հասցնում հակասությունը» (Cameron 1992:73): Զնոռանանք, որ բակի, փողոցի, բանակի դպրոցն ու լեզուն գրեթե միշտ անցնում են տղաները: Իսկ եթե տղաները չունեն լեզվի այս անմիջականությունն ու «կոպտությունը», սա պարզապես չի ընկալվում հասարակության կողմից. բակում չի խաղացել, փողոցի հետ շփում չի ունեցել, բանակ չի գնացել՝ ահա թե ինչ կարելի է լսել այդ մասին: Արդյոք կա՞ մի տղամարդ, որ չի հայիտյում: Մենք թույլ ենք տալիս և ինքներս ենք դաստիարակում արական սեռի մոտ կոպիտ խոսքը, իսկ իգական սեռի ներկայացուցիչները ցույց են տալիս և իրականացնում են հասարակության իրենց ուղղված ուղերձը՝ այն է լինել նրբագեղ, հնազանդ, նուրբ, ըմբռնող, գնահատող, պարզապես կանացի ինչպես պահվածքում, այնպես էլ լեզվում:

Իր «You Just Don't Understand» գրքում Թանենը պնդում է, որ «նույնիսկ եթե երեխաները մեծանում են միևնույն տարածքում, միևնույն թաղամասում, միևնույն տանը, տղաներն ու աղջիկները մեծանում են տարբեր աշխարհներում և բառային մթնոլորտում» (Tannen 1990:16): Խոսքի մեջ այս գեղերային տարբերությունները երեխաների մոտ նկատելի են երեք տարեկանից, մոտավորապես

այն ժամանակ, երբ լեզուն սկսում է ակտիվ զարգանալ: Մինչդեռ աղջնակները խոսում են, որպեսզի սիրվեն, տղաները խոսում են պարծենալու համար: Աղջիկները խնդրում են, տղաները՝ պահանջում: Աղջնակները խոսում են ներդաշնակություն ստեղծելու համար, իսկ տղաները ձգտում են հակամարտության: Աղջիկներն անուղղակիորեն են խոսում, իսկ տղաները՝ ուղիղ, բացահայտ ձևով: Աղջիկները ներկայանում են առավելապես բառերով, խոսքով, իսկ տղաները՝ գործողություններով: Թե՛ իգական, թե՛ արական սեռի ներկայացուցիչները փորձում են ճանապարհի հարթել իրենց համար, հասնել իրենց նպատակին, բայց սա անելու համար բավականին տարբեր ձևով են գործածում լեզուն:

Այս հաղորդակցային տարբերությունները նկատելի են միևնույն, ինչպես մաս խառը սեռային զրույցներում, ինչպես խմբակային, այնպես էլ միանձնյա զրույցների ընթացքում: Ոչ մի սեռի հաղորդակցական ոճն էլ լավագույնը չի կարելի համարել, բայց ակնհայտ տարբերությունները մանկությունից մինչև չափահասություն պետք է հասկանալ և ընդունել: Անհրաժեշտ է, որ ծնողները, ամուսինները, աշխատակիցները և այլոք իրազեկ լինեն հաղորդակցության գեղերային տարբերություններին:

Ինչպես արդեն նշել ենք, իգական և արական սեռի անձանց հաղորդակցությունը կարելի է համարել միջմշակութային հաղորդակցություն: Այդ կարծիքին են բազմաթիվ լեզվաբաններ: Ջոն Գրեյն իր «Men are From Mars, Women are From Venus» գրքում առաջարկում է ընդունել, որ տղամարդկանց և կանանց խոսքի մեջ այնքան հսկայական է տարբերությունը, որ թվում է, թե նրանք տարբեր մոլորակներից են (Gray 1992): Գեներային հաղորդակցությունը բնորոշող բազմաթիվ ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներ կան: Բայց մախքան դրանք պարզաբանելը, հարկավոր է ընդունել մի քանի դրույթներ: Նախ՝ այն, որ կանայք և տղամարդիկ, իրոք, ունեն խոսքի տարբեր ոճեր, որ այդ ոճերը հավասարապես վավեր և ընդունելի են: Գեներային հաղորդակցության նպատակը հաղորդակցական ոճը փոխելը չէ, այլ պարզապես հասկանալը, ընդունելն ու հարմարվելը այդ տարբերություններին:

Ըստ Ջ. Հոլմսի, տղամարդիկ և կանայք տարբեր եղանակներով են արտահայտվում տարբեր պատճառներով: «Կանայք հակված են փոխգործակցելու այն եղանակով, որը կպահպանի և կխթանի համախոհությունը, համերաշխությունը, մինչդեռ (հատկապես պաշտոնական հաղորդակցման ժամանակ) տղամարդիկ փոխհաղորդակցվում են իրենց կարգավիճակն ու հզորությունը հաստատելու, պահպանելու և բարձրացնելու նպատակով և մտադրությամբ» (Holmes 1998:462): Այս նույն կարծիքն է արտահայտել նաև Թանենը: Տղամարդիկ հաղորդակցվում են անկախությունը պահպանելու համար, մինչդեռ կանայք հաղորդակցման միջոցով ձգտում են մտերմության, մերձեցման: Լինի դա գիտակցված, թե ենթագիտակցաբար, տղամարդիկ գրեթե միշտ խոսում են իրենց կարգավիճակը հաստատելու, կամ գոնե ցույց տալու, որ այն բարձր է մյուսների համեմատ: Կանայք բառերը գործածում են զգացմունքայնորեն կապվելու, իրենց զգացմունքներն արտահայտելու, փոխըմբռնում ձեռք բերելու համար: Ի տարբերություն դրան, տղամարդիկ հակված են փաստերը և տվյալները հաղորդելու ինչպես զեկույցում: Հավանաբար, սա է դրդել Թանենին այս հաղորդակցական տարբերությունները պիտակել որպես *փոխըմբռնման խոսք* և *զեկույցի խոսք (rapport-talk and report-talk)* (Tannen 1994:45): Եվ զարմանալի չէ, որ կանանց խոսքը կրկնակի-եռակի անգամ երկար է տևում: Այս «հեքիաթ պատմելու» մարտավարությունը, որը գործում է նաև հայ իրականության մեջ, շատ տարածված է կանանց մոտ: Սա հնարավորություն է տալիս նրանց պահպանելու խոսքի շարունակականությունն ու հաղորդակցման ընթացքում իրենց ակտիվ գրուցակից զգալու: Այս մարտավարությունը գործածվում է տարբեր դեպքերում՝ հարցին պատասխանելիս, որևէ հարցի շուրջ հետաքրքրությունը ցույց տալու, նույնիսկ հակասելու՝ գրուցակցի արծարծած որևէ թեմային: Կանանց այս «շատախոսության» մասին գրում է նաև Ս. Մրֆին իր ատենախոսությունում (Murphy 1990):

Քայփիսը մեկ այլ մարտավարություն էլ է նշում, որ գործածում են կանայք՝ կրկին պահպանելու իրենց խոսքի շարունակականությունը: Խոսքը *հաճոյախոսության* մասին է: Ցանկացած հաճոյա-

խոսություն գրույցը շարունակելու առիթ է հանդիսանում կնոջ համար: Բավական է ասել, օրինակ, «շատ գեղեցիկ զգեստ է» և կարելի է լսել մի ամբողջ պատմություն, թե որտեղ, երբ, ով, ինչ նպատակով է դա ձեռք բերել, որը կարևոր չէ բովանդակության առումով: Ի հակադրություն կանանց, տղամարդկանց համար դա երբեք չի կարող ծառայել որպես մարտավարություն՝ գրույցը շարունակելու համար: Տղամարդ-տղամարդ գրույցի մեջ նրանք սովորաբար շնորհակալություն են հայտնում մման դեպքերում և դրանով այդ թեման փակված համարում: Հետաքրքրական է, որ խառը գենդերային գրույցի (տղամարդ-կին) ընթացքում նույնպես հաճոյախոսությունները չեն արժանանում հետագա ակնարկների: Թեմայի ընտրության պատշաճության գործոնը թույլ չի տալիս կանանց շարունակել խոսել գնումների մասին, ինչպես նրանք կանեին միայն կանանց ընկերակցության ժամանակ (Kipers 1987:546-551): Եթե մի պահ վերհիշենք այն հաճոյախոսությունները, որոնք մենք ենք անում կամ որոնք մենք լսում ենք տղամարդկանցից, հեշտությամբ կգտնենք դրանց տարբերությունները: Տղամարդկանց հաճոյախոսությունները գրեթե միշտ արտացոլում են ճշմարտությունը: Ավելի ճիշտ դրանք մոտ են իրական գնահատականին, իրականությանը: Այս կերպ նրանք որպես գիտակներ են հանդես գալիս, նրանց խոսքը գնահատող է: Իսկ կանանց հաճոյախոսությունները զուտ «մարդկային» են, միգուցե ոչ միշտ ճշմարտաման, բայց միշտ հանգստացնող, ոգևորող: Ամեն ինչ արվում է գրուցակցին հաճույք պատճառելու, հետագա հաճելի գրույցին տրամադրելու համար: Նրանք ձգտում են համագործակցության: Ահա, նորից եկանք Թանենի վերոնշված հաղորդակցական տարբերությունների պիտակմանը՝ «գեկույցի խոսք» և «փոխըմբռնման խոսք»:

Քանի որ խոսվեց լեզվական մարտավարությունների մասին, տեղին է նշել, որ մեծ տարբերություն կա նրանում, թե ինչպես են արական և իգական սեռի ներկայացուցիչները մեկնաբանում դրանք, ինչի հետևանքով էլ թյուրըմբռնում է ծագում խառը, միջսեռային հաղորդակցության (*cross-sex*) մեջ: Հիմք ընդունելով իրենց անձնական փորձն ու անգլերենի նյութի հիման վրա կատարած հետազոտու-

թյունները, Դ. Մալթար և Բ. Բորքերը առանձնացնում են վեց դաշտ, որտեղ կարող է առաջ գալ թյուրըմբռնում խառը հաղորդակցության ժամանակ:

1. Նվագագույն դրական պատասխաններ, ինչպես օրինակ գլխի դրական շարժումը, ժպիտը, *mmm, uh huh, yeah, OK, I know, sure, right, I see* բառերն ու արտահայտությունները. տղամարդիկ մեկնաբանում են այս պատասխանները որպես համաձայնություն, մինչդեռ կանայք հասկանում են որպես «շարունակիր, այո լսում եմ, հետևում եմ քո ասածին» և ոչ ավելին:

2. Հարցերի նշանակությունը. տղամարդիկ հարցեր են տալիս տեղեկատվություն ստանալու համար, մինչդեռ կանայք գործածում են դրանք զրույցը շարունակելու, պարզապես զրուցելու նպատակով:

3. Ասված, արտահայտված միտքը նախորդի հետ կապելը. կանայք դա անում են ակտիվորեն, մինչդեռ տղամարդիկ դա պարզապես չեն գործածում կամ ուղղակի անտեսում են:

4. Բառային, խոսքային ագրեսիվությունը. տղամարդիկ ընդունում են որպես խոսույթը կազմակերպելու գործոն, մինչդեռ կանայք ընդունում են որպես իրենց անձին ուղղված ագրեսիվություն, որպես բացասական և ընդհատող մի երևույթ: Օրինակ՝

A woman in a shop – But why are shouting at me? What have I done? Did I say something wrong?

A man – first, I am not shouting at you, second, you couldn't have done anything to me! (Առաջին հայացքից թվում է, թե տղամարդն արդարանում է կամ բացատրություն տալիս կնոջը: Սակայն կասկածից վեր է, որ նրա խոսքն ագրեսիվ է: Եվ եթե կինը չլռեր, այն իր շարունակությունը կունենար):

5. Թեմայի ընթացքն ու դրա զարգացումը. տղամարդիկ հակված են խոսելու թեմայի խիստ նեղ սահմաններում և կատարելու անսպասելի անցումներ, մինչդեռ կանայք զարգացնում և փոխում են թեմաներն աստիճանաբար, մեկը մյուսին կապելով:

6. Խորհուրդ տալն ու դժվարության բաժնեկցումը. տղամարդիկ դժվարության, պրոբլեմների մասին խոսելն ընդունում են որպես դիմում՝ լուծում ստանալու համար: Իսկ կանայք հակված են կիսվելու

իրենց դժվարություններով կամ լսելու դրանք՝ մխիթարված, սրտապնդված զգալու համար (Maltz & Borker 1982:196-216):

Կամ նաև հաղորդակցության մարտավարության այլ ձևեր: Դրանցից է **լռությունը**: Ջրույցի ժամանակ տղամարդիկ դիմում են լռության՝ իրավիճակը հսկողության տակ պահելու համար (Sattel 1983,119): Լռության դիմելը և զգացմունքները թաքցնելը մի եղանակ է, որի օգնությամբ տղամարդը պաշտպանում է իր գերակայության և ուժի դիրքերը: Անարտահայտիչ լինելը ավանդորեն ակնկալվում է փոքր տղաներից, և այսպիսի ակնկալիքը խրախուսում է նրանց պահելու այդպես՝ որոշակի կարգավիճակի հասնելու համար: Տղամարդկանց լռությունն այլ կերպ է մեկնաբանում Ջ. Քերին: Ըստ նրա, տղամարդիկ լռում են՝ հակված լինելով լսելու գրուցակցին: Նրանք կենտրոնանում են այն բանի վրա, թե ինչ է ասվում, և անարտահայտիչ ու լուռ մնալը դիտում են որպես քաղաքակիրթ վարմունք: Սա արական սեռին բնորոշ հաղորդակցական մարտավարություն է, որ զալիս է դեռ մանկուց (Carey 2003:35):

Տղամարդկանց և կանանց հաղորդակցական տարբերությունների մասին շատ է խոսվում, թե կատակով, թե լուրջ: Կանանց հաճախ ծաղրում են շատախոսության, խոսքը երկարացնելու, ամենաչնչին բաների վերաբերյալ փնթփնթալու: Տղամարդկանց մեղադրում են չլսելու, ուշադրություն չդարձնելու, կնոջ հետ խոսելու ժամանակ գերակայելու մեջ: Այս խնդիրները ծագում են, որովհետև յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչ պարբերաբար կամ մշտապես սխալ է ըմբռնում մյուսի բառային և ոչ-բառային ուղերձները: Փորձենք վերլուծել մի իրավիճակ, երբ կինը խոսում է տղամարդու հետ: Տղամարդու, որպես կանոն, թույլ արձագանքը (նաև դեմքի արտահայտության քիչ կամ բոլորովին չփոխվելը) և ընդհանուր լռությունը կնոջ խոսելու ընթացքում նպատակ են հետապնդում ցույց տալու, որ նա ուշադիր լսում է՝ կենտրոնանալով նրա յուրաքանչյուր բառի վրա: Սակայն կնոջ ընկալումն այլ է: Նրան թվում է, որ տղամարդը ոչինչ չի հասկանում, կա՛մ ձանձրացել է, կա՛մ պարզապես գրույցը նրան չի հետաքրքրում: Եվ քանի որ հիմնականում կանանց համար դժվար է շարունակել խոսելն այդպիսի ոչ նպաստավոր հանգամանքներում,

նրանք խոսքն ընդհատում են, կամ, ընդհակառակը, կրկնում են որոշ բաներ, փորձելով ավելի հստակեցնել խնդիրը, ավելի մատչելի դարձնել այն, կամ մույնիսկ հարցնել, թե արդյոք տղամարդը հասկանում է, թե ինչի մասին է մա խոսում, ինչ ի նկատի ունի: Իսկ այս ամենն, իր հերթին, սխալ է մեկնաբանում տղամարդը, մտածելով, որ կիմը շատախոսում է, անիմաստ կերպով կրկնելով միևնույն բանը, կամ ընդհատում է խոսքն ու լռում, քանի որ վստահ չէ իր ասածի մեջ: Եվ նրանցից յուրաքանչյուրը գոհ է դառնում մյուսին, սրանով իսկ էլ ավելի ամրապնդելով կարծրատիպային գենդերային տարբերությունները, որոնք և ընդունվում են որպես բացարձակ ճշմարտություն:

Ուսումնասիրությունները բերում են ևս մեկ եզրահանգման. տղամարդիկ խոսում են ավելի **հանրության համար**, մինչդեռ կանանց խոսքն ավելի **մասնավոր, անձնական** բնույթ է կրում: Այս եզրահանգումն ակնհայտ է դառնում, երբ ընդունում ենք նրանց հաղորդակցման նպատակը: Եթե տղամարդիկ ձգտում են ապահովել և հաստատել իրենց կարգավիճակը, ապա, անտարակուսորեն, նրանց գրույցի մեծ մասը պետք է տեղի ունենա դրսում, հանրության մեջ, աշխատանքի վայրում և այլն: Մյուս կողմից, եթե կանայք ձգտում են մերձեցման և մտերմության, ապա նրանց գրույցը տեղի է ունենում տանը, որևէ մտերմիկ և ավելի սահմանափակ վայրում:

Տղամարդկանց և կանանց հաղորդակցային գենդերային տարբերությունները վերաբերում են թե՛ բովանդակությանը, թե՛ բուն լեզվին և կառուցվածքին:

Կարևոր է նաև այն, թե ինչի մասին են նրանք խոսում: Առաջին իսկ միտքը, որ ծագում է այս հարցին պատասխանող ցանկացած մարդու մոտ, հետևյալն է՝ տղամարդիկ հիմնականում խոսում են փողի, աշխատանքի, սպորտի, իսկ կանայք՝ մարդկանց, զգացմունքների և հարաբերությունների մասին: Եվ սա, իհարկե, ճշմարիտ է: Այս առնչությամբ հետաքրքրական է դիտարկել Քայփրսի կողմից խոսույթի թեմաների բաժանումը, որը մա կատարում է երկու հայեցակետից: Նա նախ, քննում է գենդերի և թեմայի հարաբերակցությունը միայն տղամարդկանց, միայն կանանց և խառը գենդերային խմբե-

րում, ապա դիտարկում է թեմաների կարևորությունն ու անկարևորությունը ըստ խոսակիցների ընկալման: Իսկ բուն թեմաները հեղինակը բաժանում է հետևյալ խմբերի, ինչը ընդունվում է բազմաթիվ այլ լեզվաբանների կողմից՝ **ա. փուն և ընդամենիք, բ. անչ և ընդամենական ֆինանսներ, գ. սոցիալական խնդիրներ, դ. հանգիստ, ժամանց, և հասարակական հարցեր, զ. աշխատանքին առնչվող և է. բազմապիսի այլ հարցեր** (Kipers 1987:546-551): Մեր կողմից կատարված հարցումներն ու դիտարկումները ցույց են տալիս, որ հայ իրականության մեջ պատկերը գրեթե նույնն է: Տարբերությունն ակնհայտ է միայն հանգստի և ժամանցի հետ կապված խոսքի առնչությամբ, որը հաջորդում է սոցիալ-քաղաքական հարցերի քննարկմանը: Վերջինը ժամանակ առ ժամանակ նույնիսկ հավակնում է առաջինը լինել թեմաների կարևորության առումով՝ կապված այն հանգամանքի հետ, թե որքան սուր է այս կամ այն քաղաքական հարցը: Ներքին և արտաքին քաղաքականության խնդիրները, որոնք անմիջականորեն կապված են հասարակության կենսակերպի, արժանապատվության հետ, սովորաբար քննարկվում են երկու սեռի ներկայացուցիչների կողմից էլ հավասարապես, անկախ տարիքային սահմանափակման, որպես առաջնային:

Կանանց ամենագերադասելի թեմաներն առնչվում են տան և ընտանիքի հետ, որին հետևում են աշխատանքային և այնուհետև սոցիալական խնդիրները: Ավելի հազվադեպ են նրանք քննարկում ժամանցային և հասարակական հարցեր: Ի տարբերություն նրանց, տղամարդիկ, նախևառաջ, խոսում են աշխատանքին առնչվող հարցերի շուրջ, որոնց հետևում են ժամանցի խնդիրները: Այն թեմաները, որոնք վերաբերում են տանն ու ընտանիքին, սոցիալական և հասարակական հարցերին, բացառությամբ քաղաքականությանը, համեմատաբար պակաս են քննարկվում տղամարդկանց զրույցներում: Իսկ խառը գենդերային խմբերում և՛ տղամարդիկ, և՛ կանայք, խոսում են աշխատանքի մասին, որին հետևում են հասարակական գործերը:

Հետաքրքրական է այն փաստը, որ խառը գենդերային խմբերում տղամարդիկ ավելի շատ թեմաներ են բարձրացնում, քան կա-

նայք: Պարզենք, թե ինչո՞վ է սա բացատրվում: Ուսումնասիրությունները հաստատում են, որ նրանք, ովքեր առավել շատ են թեմաներ առաջարկում, հսկում, ղեկավարում՝ գերակայում են զրույցը: Իհարկե, թեմաների ծավալումն արդեն խոսում է համագործակցության մասին: Բայց երբ միևնույն մարդն անդադար նոր թեմաներ է բարձրացնում, սա զրույցի ընթացքում գերակայության դրսևորում է մյուս զրուցակիցների նկատմամբ: «Խոսողները բարձրացնում են իրենց թեմաները՝ ցույց տալու համար զրուցակիցների հանդեպ գերազանցության հասնելու իրենց ունակությունը» (Haji-Hassan 1999:285):

Բազմաթիվ են այն փաստերը, որոնք վկայում են, որ խառը գենդերային խմբերում գրեթե միշտ թեման առաջարկում է տղամարդը: Բայց կանայք շատ ավելի մեծ թվով թեմաներ են քննարկում, քան տղամարդիկ, եթե դա զուտ կանանց խումբ է:

Վերը խոսվել է այն մասին, որ տղամարդկանց մրցակցային խոսքային հաղորդակցման համեմատ կանանց զրույցը համագործակցական բնույթ է կրում: Դիտարկենք մի քանի օրինակներ, որոնք մատնանշում են կանանց և տղամարդկանց հաղորդակցային գենդերային տարբերությունները: Դրանց մեծ մասը բնորոշ է բազմաթիվ լեզուների, այդ թվում նաև հայերենին: Ստորև նշվածն ամրագրվում է բազմաթիվ ձայնագրություններով և գրառված օրինակներով: Նշված օրինակները ներկայացնում են կանանց խոսքը ինչպես անմիջական, մտերմիկ, միասեռ ու խառը գենդերային խմբերում, այնպես էլ աշխատանքային, պաշտոնական միջավայրում: Օրինակները վերցված են ինչպես իրական կյանքից, այնպես էլ գեղարվեստական գրականությունից: Այս դաշտում տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ հեղինակները տարբեր սեռի ներկայացուցիչներ են, և որ գեղարվեստական խոսքն ամեն դեպքում մտացածին է: Սակայն օրինակները դիտարկելիս համոզվում ենք, որ տարբերություն գրեթե չկա: Բերենք մի օրինակ.

"We can, both of us row *like waterspiders*."

"There's a light little canoe of mine. Do you think you'd be safe in that?"

"*Oh, perfectly*," said Gudrun.

"*What an angel!*" cried Ursula.

"Well – then I'll get then to put you up a tea-basket, and you can picnic all to yourselves."

"That's a *wonderful idea, isn't it*", replied Gudrun.

"*How fearfully good! How frightfully nice* if you could" cried Gudrun warmly, her colour flushing up again.

Lawrence D.H. "Women in Love", p.190-191

Իսկ ստորև գրի առնված խոսքի մի հատված է: Խոսում են մի վաթսուհինյա ամերիկուհի և տասյոթամյա լիտվուհի:

"You hate this, *don't you*?" Carol asked.

"It *awfully* bewilders me, *really*," stammered Masha.

"You won't stay long, *will you*?" replied Carol.

Կրկին նրանց խոսքն է:

"Are you happy, Masha, happy now?"

"Yeah, Carol, I'm *perfectly happy*!"

"So am I. *Very, very, very happy*!"

Հետևյալը հարցազրույց է՝ կատարված Ամերիկյան Խորհուրդների (American Councils) աշխատակիցների կողմից: (Interviewer and Stephanie Taylor)

I- What are the best travel experiences you've had?

ST – *Ooh, lots, lots. Particularly*, it's *particularly good* when you get a *great* hotel with *beautiful* towels and *beautiful* bathrooms and *nice soft* bed, erm, and *good, modern* sports facilities. Things like that – that's always a luxury. Erm, and *the Virgin, the Virgin* lounge, I think. That's a good experience with all the high tech things. I *awfully like* that.

I – What are the worst?

ST – *Probably* related to bad accommodation, but *probably more*, I think, to do with those things out of your control. Just to choose one example, it would be a flight back from the US which *was delayed, and delayed, and delayed*, and finally cancelled. *Awful, terrible. Unbearably terrible*. And we all slept on the floor with no information. *Intolerable!* And it was very, very hard on the floor.

Գիտարկենք մեկ օրինակ աշխատանքային դաշտից, որտեղ լեզուն ավելի պաշտոնական է: Համեմատենք կանանց խոսքն այս բավականին տարբեր բնույթի հաղորդակցություններում և տեսնենք, որ տարբերությունները չնչին են:

(CEO and Retail Director at the London-based communications agency MediaComTMB)

Tom – Hello, Patricia. How are things going?

Patricia – There’s a problem, *I’m afraid*. My plane’s been delayed. *You see*, they’ve rescheduled the flight for 11 o’clock, so I won’t get back in time to chair the budget meeting.

T – Oh dear! Do you want me to cancel it?

P – Well, no, not if we can avoid it. All the papers have been circulated, haven’t they? Everyone is *fully* briefed. It’s just that I can’t make it by eleven.

T – Well, why don’t you get someone else to chair it, and you take over when you get back.

P – *Yes, yes!* That’s a *good* idea, a *brilliant* idea! We could rearrange the agenda, *perhaps*, start with some of the less important points. *With a bit of luck*, everything will be OK, *won’t it?*

T – I think so.

P – *Exactly*. So who is the best person to run the session, I wonder. *Maybe, well, ...*

T – How about Rachel?

P – *Rachel? Yes, perhaps, but I’m sure that.... Well, yes, you’re right, absolutely, she should be OK. Thanks for the suggestion. Thanks a lot.*

T – Right, I’ll call her and put her in the picture.

P – *Yeah, good. Right! Thank you! Bye for now. Good luck! Hope, it’ll work.*

Ահա թե, ինչպիսի առանձնահատկություններով է բնորոշվում կանանց խոսքը (ավելորդ չէ նշել, որ արական սեռի ներկայացուցիչների խոսքում այս բնութագրիչները հիմնականում բացակայում են):

Կանայք խոսքում գործածում են լեզվական կառույցներ, որոնց միջոցով անվստահություն են արտահայտում, այս կերպ փորձելով ստանալ գրուցակցի հավանությունն ու համաձայնությունը, օրինակ՝ *it seems, a kind of a; yes, possibly, but don't you think...; perhaps/maybe, but I am not sure ...; you could be right, but...* և այլն:

Նրանք շատ ավելի հաճախ են կիրառում (գեր) քաղաքակիրթ ձևեր. *Could you? May I? If you don't mind. I'd be grateful. I highly appreciate it* և այլն:

Կանայք իրենց խոսքում հաճախ կիրառում են *նպաստակա-
որված շեշտեր*, ընդգծելով այս կամ այն բառը, սրելով իմաստը մակ-
բայների կիրառմամբ կամ պարզապես կրկնելով միևնույն բառը:
Օրինակ՝ *fully briefed, absolutely right, exactly the same, brilliantly
planned*, etc.

Հաճախ օգտագործում են *very, greatly, wholly, totally, enough, quite, so that, as ... as* տիպի բառեր:

Մեծապես գործածում են իմաստն ուժգնացնող ածականներ. *devine, incredible, fabulous, wonderful, splendid, marvelous, dreadful, terrible, horrible* և այլն: Կարելի է նույնն ասել գույների մասին:

Կանայք գրեթե միշտ մեծ ուշադրություն են դարձնում քերական-
ությունն ու գրական խոսելուն:

Նրանք ավելի հակված են ուղղակի մեջբերումներ կատարելու:

Կանայք խոսքում ներողամտություն են արտահայտում, նույ-
նիսկ այնտեղ, երբ դրա կարիքը չկա. օրինակ, *sorry, it's a pity, it's a
shame, I'm afraid, I'm not sure, I think, I agree, but* և այլն:

Եթե խոսքը վերաբերում է խնդրանքներին, և անգամ հրամաննե-
րին, ապա կանայք, որպես կանոն, խուսափում են հրամայական
եղանակից և օգտագործում խնդրանքի մեղմ ձևեր: Օրինակ, *I'd like,
why don't we, I'd prefer to, I'd rather, not really* և այլն:

Իգական սեռի ներկայացուցիչները հազվագյուտ են անեկրոտ-
ներ պատմում ի տարբերություն տղամարդկանց: Եթե Լակոֆը
պնդում է, որ կանայք հումորի զգացում չունեն և հիմնականում չեն
ըմբռնում կատակի գազաքնակետային գաղափարը, արտահայտու-

թյունը, ապա Ջենին Լիդիարը հակառակ կարծիքի է (մեջբերված Moore 2003:4):

Լակոֆն ավելացնում է ևս մի գործոն՝ նշելով. «Տղամարդկանց խոսքի համեմատ կանանց խոսքը բնութագրվում է որպես ստորադաս, անհաստատակամ և թույլ շնորհիվ այն հասարակության ճնշման, որը պահանջում է, որ կինը խոսի ինչպես «լեդի» (Lakoff 1975:33):

Ինչպես տեսանք, բազմաթիվ են հաղորդակցային գենդերային տարբերությունները: Ավելի ընդհանուր գծերով դրանք ներկայացնում է մաս Քոուֆսը (Coates 1986): «Տղամարդկանց համեմատ կանայք շատ ու երկար են խոսում: Խոսելով, նրանք հարաբերություններ են ստեղծում, մինչդեռ տղամարդիկ բանակցում են կարգավիճակի համար, խուսափելով ձախողումից» (Coates 1986:125): Կանանց խոսքում տարբեր գրուցակիցներ կարող են ասել միևնույն բանը, նույնիսկ մի քանի անգամ, ինչը բացակայում է տղամարդկանց զրույցում: Եվ, վերջապես, կանայք հանգիստ կարող են խոսել միաժամանակ, մինչդեռ տղամարդիկ ուշադիր լսում և հետևում են միմյանց:

Արական և իգական սեռի ներկայացուցիչների միջև հաղորդակցության գենդերային տարբերությունների բացահայտումն ու քննարկումը նպատակ չունի, որոշելու լավագույն հաղորդակցական ոճը կամ դրդելու մյուսներին լիովին փոխվել: Խնդիր է դրված ճանաչել այդ տարբերությունները՝ միմյանց ըմբռնելու և հարմարվելու նպատակով: Տղամարդիկ և կանայք շատ բան ունեն սովորելու միմյանցից և կարող են դա անել, երբ հաղթահարվեն գենդերային հաղորդակցության պատմեղները: Իսկ դրա համար պահանջվում է աշխատանք, ժամանակ և փոխըմբռնում:

§ 2 Խոսքն աշխատանքի վայրում. աշխատանքային խոսքի առանձնահատկությունները գենդերային ուսումնասիրության համատեքստում

Աշխատանքային վայրն ինքնին հնարավորություն է ստեղծում տարբեր տեսակի շփումների համար, շփումներ ինչպես գերադասի, այնպես էլ ստորադասի հետ: Եվ, բնականաբար, ակնհայտ է, որ խոսքն այս դեպքում կտարբերվի մարդուց-մարդ, մշակույթից մշակույթ: Ակնառու են կանանց և տղամարդկանց խոսքի տարբերությունները, և՛ ոճական, և՛ թեմատիկ առումներով:

Քննարկվող հարցի շրջանակներում մեծ հետաքրքրություն է ներկայացնում խոսույթի թեմայի դիտարկումը, որին այստեղ կանդրադառնանք միայն հպանցիկ կերպով: Քայլերսը այն դիտարկում է երկու տեսանկյունից. 1. գենդերի և թեմայի հարաբերությունը տղամարդ-տղամարդ, կին-կին և խառը խմբերում և 2. թեմաների կարևորությունն ու անէականությունը գրուցակիցների ընկալմամբ: Թեմաները հեղինակի կողմից բաժանվում են հետևյալ խմբերի. ա. *լրուն, ընդհանր, բ. մարդ և ընդհանրական ֆինանսներ, գ. սոցիալական խնդիրներ, դ. հանգիստ, ազատ ժամանց, ե. հասարակական գործեր, գ. աշխատանքային հարցեր* և այլն (Kipers 1987:543-557):

Վերը արդեն ներկայացվել են տղամարդկանց և կանանց ամենագերադասելի թեմաները ինչպես միասեռ (կին-կին, տղամարդ-տղամարդ) խմբերում, այնպես էլ խառը գենդերային հաղորդակցման ժամանակ: Ուստի, նշենք, որ խառը գենդերային խմբերում, աշխատանքի հետ առնչվող թեմաները առաջնային են և՛ տղամարդկանց, և՛ կանանց համար, որին հաջորդում է հասարակական խնդիրների թեման:

Արդարացիորեն նկատվում է, որ աշխատանքի վայրում խոսելը դեռ չի նշանակում խոսել աշխատանքի մասին: Շատ ժամանակ խոսվում է պատահական, չկանխամտածված, առօրյա թեմաների շուրջ, որն, ըստ Թանենի, ստեղծում է մտերմիկ աշխատանքային մթնոլորտ, որը և անհրաժեշտ է աշխատանքը լավագույնս կատարելու համար: Եվ՛ կանայք, և՛ տղամարդիկ աշխատանքի ժամանակ

խոսում են տարբեր թեմաների շուրջ, սակայն նրանց գրույցի թեմաները և գրույցը վարելու ձևերը տարբերվում են միմյանցից:

Աշխատանքային օրվա ընթացքում թեմաների անցումը աշխատանքայինից սոցիալական խնդիրների կարող է ինչպես արտացոլել տվյալ գրուցակցի կարգավիճակը, այնպես էլ բանակցային միջոց դառնալ նրա կարգավիճակը հաստատելու համար: Ոստիկանական ուղղաթիռային անձնակազմի շփումների իր ուսումնասիրությունները կատարելիս, Շարլոտ Լինդը նկատել է, որ աշխատանքային գործերի բացակայության ժամանակ, անձնակազմը ներգրավվում է սոցիալական գրույցի մեջ, որն անմիջապես ընդհատվում է, երբ առաջ են գալիս աշխատանքային պահանջները: Նա ընդգծում է, որ այս անցումները միշտ նախաձեռնել է օդաչուն, որը խմբի ղեկավարն էր (Linde 1988: 38):

Այս դիտարկումը լիովին համընկնում է Հորնյակի ուսումնասիրության արդյունքների հետ, որը նա անց է կացրել անգլիական մի հաշվապահական ընկերությունում՝ կանանցով համալրված մի բաժնում: Երբ կանայք անցումներ էին կատարում աշխատանքից անձնական թեմաներին, նախաձեռնողը միշտ բարձրաստիճան անձն էր սենյակում՝ գործերի կառավարիչը: Երբ նա զբաղված էր, ոչ մեկը չէր սկսում անձնական կյանքի պատմությունները կամ ուրիշ թեթև գրույցներ: Բայց երբ գործերի կառավարիչը պատրաստ էր ընդմիջում կատարելու, մյուս բոլորը միանում էին, չանհանգստանալով, որ առաջադրանքը պետք է այդ ժամանակ կատարեր կամ որ աշխատանքը կենտրոնացում է պահանջում (Hornyak 2002: 47-51):

Այս եղանակով է արտացոլվում, ամրանում ու հաստատվում աստիճանակարգը (հիերարխիան), մույնիսկ ամենահասարակ, չկանխատեսված հաղորդակցման ժամանակ:

Երբ մարդիկ միասին են աշխատում, մեծ է շփոթմունքի, ճնշվածության կամ թյուրըմբռնման հավանականությունը: Սրա ներուճակ (պոտենցիալ) աղբյուրը կարող են հանդիսանալ գործողությունների, շարժումների բազմաշերտ նշանակությունները: Սակայն իրավիճակն ավելի սուր է դառնում՝ կապված բուն լեզվի օգտագործման հետ: Պատճառն այն է, որ գրուցակիցներն ակնկալում են, որպեսզի լեզուն

պարզորոշ և հստակ լինի: Վերջ ի վերջո բառարաններ գոյություն ունեն: Հաղորդակցման մասնակիցներին անհրաժեշտ է, որ լեզուն կայուն, հաստատուն լինի, քանի որ նրանք ձգտում են հսկողության տակ պահել իրենց ասածը, իրենց ուղարկած ուղերձները: Սակայն միշտ չէ, որ դա այդպես է: Ինչպես նշվել է, հսկայական տարբերություններ կան խոսակցական ոճերի միջև: Այն խոսելաեղանակը, որ կարող է հուզել, վշտացնել կամ հավասարակշռությունից հանել որևէ մեկին, մյուսի համար կարող է և վիրավորական, տհաճ չլինել: Սակայն ասել, թե ո՞ր եղանակն է ընդունելի, կամ մի ոճը մյուսից գատել, նույնպես դյուրին ու ճիշտ չէ:

Մտնելով աշխատանքի աշխարհ, կանայք ոտք են դնում «*լրդամարդու փուն*», մեջբերում է Թանենը Քերոլ Բերքլուուի արտահայտությունը (Barkalow 1990: 121-38): Բերքլուուը բազմաթիվ արտահայտություններ է վկայակոչում, որոնք տղամարդիկ գործածում են իրենց աշխատանքային օրվա ընթացքում: Օրինակ, *stick to your guns under the gun, to call the shots, an uphill battle, a level playing field, bat a thousand, go the whole nine yards, in the right ballpark, in the same ballpark, to give the deep-six* և այլն: Այս ցանկն, իհարկե, կարելի է շարունակել: Ինչպես տեսնում ենք, այս արտահայտությունները կազմված, վերցված են ռազմական և սպորտային բառապաշարից, որն անծանոթ է կամ քիչ է ծանոթ կանանց: Գոմե ամօրյայում նրանք դա չեն կիրառում, իսկ աշխատանքի վայրում պետք է հասկանան, կիրառեն, որպեսզի իրենց կոլեկտիվի մասը կազմեն, այլապես դա թյուրըմբռնման տեղիք կտա, ինչը խոսակցական աններդաշնակության հիմնական աղբյուրն է: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխատանքի վայրում կանանց հետ չհամաձայնելը, տարակարծիք լինելը նրանք անձնապես են ընդունում՝ որպես բարկություն, հաճախ նաև ատելություն՝ ուղղված իրենց անձին (Tannen 1994:272):

Այժմ վերոնշվածի լույսի ներքո դիտարկենք աշխատանքային ժողովների գործընթացը և տեսնենք, թե ինչպես է խոսքը կամ կարգավիճակն ազդում դրա վրա: Նախ՝ նրանք, ովքեր առաջինն են խոսում, կարող են ազդեցություն ունենալ հաջորդների վրա: Ուրեմն,

խոսողների հերթականությունն ինքնին արդեն կարգավիճակի արգասիք է: Եթե մեկը որոշել էր մեկնաբանություններ անել, հավանականությունը մեծ է, որ նա կփոխի իր միտքը: Եվ կրկին, եթե բարձր կարգավիճակ ունեցող մասնակիցը մի կարծիք է հայտնում, դժվար թե մյուսները՝ ավելի ցածր կարգավիճակ ունեցողները, հակառակ տեսակետ արտահայտեն: Հետաքրքիր է, որ երբ այդ տարակարծությունը գրի է առնվում, ապա այսպես թե այնպես, վաղ թե ուշ այն արտահայտվում և լսելի է դառնում ժողովի ընթացքում⁴:

Այժմ անդրադառնամք գեոդերալին առանձնահատկությունների հետ կապված այն լեզվական ռազմավարություններին, որոնք առկա են նաև աշխատանքային խոսքում: Նույնիսկ այնպիսի փոքր լեզվական ռազմավարությունը, ինչպիսին է դերանունների ընտրությունը, հստակորեն տարբեր է կանանց և տղամարդկանց խոսքում և մեծ ազդեցություն է ունենում նրանց աշխատանքային գործունեության վրա:

Բազմաթիվ օրինակները գեղարվեստական գրականությունից, ինչպես նաև մեր կողմից կատարված ձայնագրությունները, որոնք կատարվել են տարբեր աշխատավայրերում, արտացոլում են այն փաստը, որ տղամարդկանց շրջանում ընդունված է կիրառել «ես»

⁴ Այս հարցի կապակցությամբ չափազանց ուշագրավ է ճապոնացիների մոտ *nemawashi* երևույթի կիրառումը, որը դիտարկում է Հարու Յամադան (Yamada 1992:305): Ըստ նրա, այս միջոցը կիրառվում է, որպեսզի ժողովները միաձայն համաձայնությամբ անցնեն: Նախքան ժողովը, մի քանի չեզոք մենեջերներ (կառավարիչներ) կամ միջին օղակի աշխատակիցներ շրջում են, անհատապես խոսում յուրաքանչյուր մասնակցի հետ և, ստանալով բոլորի կարծիքներն ու վերաբերմունքը այս կամ այն հարցի վերաբերյալ, համատեղում և միավորում են յուրաքանչյուրի հետաքրքրություններն ու շահերը: Գաղափարները կարծում են, որ մարդիկ ավելի հանկված են արտահայտելու իրենց իրական կարծիքները ոչ պաշտոնական ձևով, անձնական շփման ժամանակ, քան ժողովում, որը հանրային ելույթ է պահանջում, պաշտոնական է և դրդում է ներկայացնելու հասարակության կողմից ընդունված վերաբերմունքը:

Եթե մեկի կարծիքը հակառակ է ընդհանուր կարծիքին և նա հնչեցնում է այն, ապա հավանականությունը մեծ է, որ նա «կկորցնի իր դեմքը»: Այս առումով է ուշագրավ *nemawashi*-ի առավելությունը: Դրա կիրառման դեպքում անպայման հաշվի է առնվում յուրաքանչյուրի կարծիքը, և այն հնարավորություն է տալիս «պահել այն մարդկանց դեմքը», ովքեր տարակարծիք են եղել մյուսների հետ որևէ հարցի կապակցությամբ: Քանի դեռ նրանց կարծիքը հասարակայնորեն չի հնչեցվել, նրանք պահպանում են իրենց անձի արժանապատվությունը:

դերանունը այն իրավիճակներում, որտեղ շատ կանայք դրա հոգնակի ձևը՝ «մենք», կօգտագործեին: Ահավասիկ, մի տղամարդ ասում է. «**I am** hiring a new junior manager. **I'm** going to put him in charge of marketing department.»: Ունկնդիրը սա ընկալում է հետևյալ կերպ. Այս մարդը կորպորացիայի տերն է, և, բնականաբար, աշխատավարձ նշանակողը: Մինչդեռ, իրավիճակը բոլորովին այլ է, նա կորպորացիայի աշխատակից է միայն: Մեկ այլ աշխատակից, ներկայացնելով իր խմբի բոլոր անդամների աշխատանքի արդյունքները, ասում է. «This is what **I have prepared** for the Lakehill deal» (Baldacci 2008:82):

Հիմա դիտարկենք մի կնոջ խոսք, որ հերթական մախազիծը ներկայացնելիս ասաց. «This is the project **we** have been working on for the last three months. **It seems** to meet all the demands, **doesn't it?**»: Շարունակությունն ավելի ցնցող է, քանի որ հետագա հարց ու պատասխանից հետո պարզվում է, որ այս կինն ամեն ինչը մենակ է արել, առանց բաժնի որևէ աշխատակցի օգնության կամ մույնիսկ իմացության: Ուրեմն, իր համար նպատակահարմար լեզվական միջոց ընտրելով, նա խուսափել է պարծենկոտ երևալու հավանականությունից, կոծկել է իր իրական ձեռքբերումները և նվազեցրել ճանաչված, ընդունված լինելու հնարավորությունը: Այժմ դիտարկենք մեկ այլ նմանատիպ օրինակ, որտեղ կինը ոչ թե գրասենյակային աշխատող է, այլ գործադիր տնօրենը մի ընկերության, որ նա է հիմնել: Ահա թե ինչպես է նա ներկայացնում իր ընկերությունն ու վերջին փոփոխությունները.

Interviewer – I imagine you'll be making some changes, Mrs Whitman, now that you're in charge at Metrot, its CEO.

Helen Whitman – Yes, there will certainly be some changes, there always are when you acquire another company. Metrot is a fine company, that's why **we** bought it. It has a skilled workforce and excellent products. **We** think **we** can help Metrot to become more dynamic and efficient. **We** want it to compete successfully in European markets where there are big opportunities for **us**.

I – You say, more efficient. Does that mean reorganization? Job losses? I believe that the stuff at Metrot are worried about this.

HW – It's too early to say. But there could be some staff cutbacks in the short term. **We** shall see. **Our** plan is to expand the company and create as many job opportunities as possible.

I – What about the factories? Some people say, Mrs Whitman, you're thinking of relocating some of the factories and selling off some of the land you have acquired.

HW – **Our** aim is to build Metrot and make it a strong company at the leading edge of technology, with an image for quality, reliability and good service.

I – I see. Thank you, Mrs Whitman. I wish you the best of luck in your business. Market Leader

Վերոնշվածի պատճառները բազմազան են՝ հասարակության պահանջներ, դաստիարակություն, վախ ապագայի կամ հաջողության հանդեպ (*glass ceiling* երևույթը), թերահավատություն իր անձի նկատմամբ, մյուսներից պիտանի լինելու և առաջ քաշելու բնագոյ և այլն (Tannen 1994:132-37): Սակայն մեր նպատակը, պատճառները պարզելուց զատ, կրկին անգամ հաստատելն է, որ հստակ տարբերություններ կան տղամարդկանց և կանանց խոսքի միջև (լեզվի բոլոր մակարդակներում), ինչպես կյանքի տարբեր բնագավառներում և աշխատանքային իրավիճակում:

Իգական և արական սեռի ներկայացուցիչների ակնկալիքներն ընդհանուր առմամբ բավականին տարբեր են, և սա սերտորեն կապված է նրանց ուրույն արժեքային համակարգերի հետ: Կանանց և տղամարդկանց աշխատանքային ակնկալիքների տարբերությունները երևում են Քլեի, որը մի շարք ուսումնասիրություններ է իրականացրել գենդերային հայեցակետից, ստորև բերված աղյուսակում (Claes1999:392):

<i>Man</i>	<i>Woman</i>
High income	Good relationships
Recognition	Cooperation
Promotion	Freindly environment
Challenge	Security

Այս աղյուսակը դիտարկելիս, տեղին է նշել, որ ներկայացված արդյունքները համընկնում են մեր կատարած գիտափորձերի հետ, որոնք անցկացվել են Երևանում ոչ միայն աշխատող մարդկանց շրջանակներում, այլ նաև՝ Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի II և III կուրսի ուսանողների: Ավելացնենք նաև, որ մեր կողմից հարցման ենթարկված կանանց և աղջիկների գրեթե 90%-ի համար աշխատավարձի չափի խնդիրն այդքան սուր չէր, որքան լավ հարաբերությունների, համագործակցության և հաճելի միջավայրի հարցը: Գրեթե ոչ ոք չէր ընդունում աշխատել մի վայրում, որտեղ նա լավ կվարձատրվեր, բայց սիրված կամ ընդունված չէր լինի աշխատակիցների, գործընկերների կամ ղեկավարության կողմից:

Հաջորդ եզրահանգումն այն է, որ պատշաճ կառավարման հմտությունները արական սեռի ներկայացուցիչներին բնորոշ հմտություններ են: Տեղին է նշել, որ գործարար աշխարհում գործում է կառավարման մի եղանակ, որը կոչվում է *macho management*⁵: Վերոհիշյալ հմտությունները ենթադրում են վարքի գերակա, հաստատակամ, վճռական կողմերը, ի տարբերություն կանանց, որոնք պատրաստակամորեն ընդունում են թիմային վարքը, որն իր բնույթով աջակցություն է արտահայտում: Միջմշակութային տեսանկյունից սա տարածված տեսակետ է, որը զիջում է իր դիրքերն այլ մոտեցումների: Այս հարցին կանոնադաշտանք ստորև, իսկ մինչ այդ քննարկենք մեկ այլ հարց:

Հայտնի է, որ կանայք համեմատաբար քիչ են զբաղեցնում կառավարման բարձր պաշտոններ: Սա սերտորեն կապված է տարբեր կազմակերպություններում, առաջատար պաշտոններում նրանց դրսևորման, այսինքն՝ աշխատանքի կատարման և աշխատանքին ու

⁵ Macho management is a term coined by Michael Edwardes, and it was adopted by the media in the 1980s. Macho managers tend to take a tough approach to improving productivity and efficiency, and are unsympathetic to trade unions. — «Կառավարում մաչո ոճում» եզրույթը ներմուծել է Մ. Էդվարդսը, որը սկսեց լայնորեն կիրառվել զանգվածային լրատվամիջոցներում 80-ական թվականներին: Այս ոճին հարող կառավարիչները հակված են խնդրի լուծման խիստ, կոպիտ մոտեցումներին՝ ուղղված արտադրողականության և արդյունավետության բարձրացմանը:

աշխատակիցներին նրանց վերաբերմունքն արտահայտելու հետ: Այս հարցի իր ուսումնասիրության արդյունքներն է ներկայացնում Կանտերը՝ թվարկելով այն խոչընդոտները, որոնք թույլ չեն տալիս կանանց բարձր դիրք գրավելու (մեջբերված՝ Claes1999: 396):

Կանայք *պաշտոնավարական ձեռք չեն դրսևորում* իրենց: Հանձնարարությունները խնդրանքների են վերածվում: Չեն գործածում հրամայական ձևեր:

Նրանք *խուսափում են բախումներից*, ագրեսիվ դրսևորումներից:

Պատասխանատու և *մեղավոր են զգում* իրենց ընդհանուր ձախողումների համար, արդյունքում հաճախ են ներողություն խնդրում:

Կանայք *հասանելի են*. աշխատասենյակի դուռը միշտ բաց է:

Նրանք անձնապես *ներգրավվում են նույնիսկ չնչին խնդիրներում*: Հարաբերությունները մեծ կարևորություն ունեն նրանց համար:

Կանայք *չգտնում են հավանության արժանանալ*: Իրենց խոսքում կիրառում են անուղղակի կառուցվածքներ, ինչպես նաև *որոշակի հնչերանգ*:

Փորձում են *սիրալիր ու բարեհաճ լինել*: *Ժպտաղեն են, տաքանվող, անուղղակի*:

Հեռու են իշխանության չարաշահումից: Խուսափում են ռիսկի դիմելուց, վախենալով վտանգել նաև մյուսների հեղինակությունը:

Կանայք *հակված են* իրենց հաջողությունները, *չեռքբերումները վերագրելու նաև ուրիշներին*:

Եվ չնայած այն փաստին, որ կանայք հարաբերականորեն քիչ են զբաղեցնում կառավարման բարձր օղակի պաշտոններ, գործատուները պարզել են, որ կանանց նման պաշտոններում չնշանակելով, նրանց ընկերությունները, կազմակերպությունները զրկվում են ավելի բարգավաճ լինելուց: Ինչևէ, այս բնագավառում շատ կտրուկ փոփոխություններ են գրանցվում այսօր:

Այս առումով Կանտերը մատնանշում է, որ «փոփոխություններ կրելու հակվածություն ունեցող կազմակերպությունները գնահատում են և հաշվի առնում կանանց նորամուծություններ ներկայացնելու

ունակությունը, արհեստավարժ դրսևորումը և համագործակցելու պատրաստակամությունը» (Kanter 1997:7): Իսկ կանանց բնորոշ են այնպիսի հատկանիշներ, որոնք նպաստում են հարաբերությունների հաստատմանն ու թիմային աշխատանքին, ինչը շատ բարձր է գնահատվում համագործակցային և ստեղծագործական ղեկավարման ոլորտում:

Այժմ դիտարկենք ևս մեկ աղյուսակ, որտեղ Կլեն ներկայացնում է կառավարելու ոճական սեռային տարբերությունները (Claes 1999:45): Հեղինակի բերված արդյունքները՝ կապված գեղեցիկային տարբերությունների հետ հետաքրքրական են նաև միջմշակութային ուսումնասիրության տեսանկյունից, քանի որ բազմաթիվ կետերով համընկնում են մեր կատարած հարցումների և դիտարկումների արդյունքների հետ:

Տղամարդ կառավարիչներ	Կին կառավարիչներ
գործադիրներն աշխատում էին արագ տեմպով և օրվա ընթացքում դադար չէին առնում	աշխատում էին համաչափ տեմպով, բայց կարճատև ընդմիջումներով՝ նախատեսված ողջ օրվա համար
նկարագրեցին իրենց աշխատանքային օրը, բնութագրելով ընդհատումներով ու դադարներով այսինքն՝ լեզուն մասնատված	չկանխատեսված, չպլանավորված հանձնարարությունները, ինչպես նաև տարածայնությունների պարզաբանումները չդիտեցին որպես ընդհատումներ
շատ քիչ ժամանակ ծախսեցին այն գործունեության վրա, որը անմիջականորեն կապված չէր իրենց աշխատանքի հետ	միանգամայն հակառակը
ցույց տվեցին, որ գերադասում են կենդանի շփում, դեմառդեն հաղորդակցություն (առաջին հերթին անդրադառնում էին ներկայացած մարդկանց խնդիրներին)	կենդանի շփման հետ զուգահեռ նույն պատասխանատվությամբ ժամանակ հատկացրին նամակներին և հեռախոսազանգերին

աշխատանքից դուրս մարդկանց հետ շփման ժամանակ ցուցաբերեցին հարաբերվելու բարդ և ճկուն ունակություններ	
կատարված աշխատանքն անձնավորում էին	կատարված աշխատանքը դիտում էին որպես բազմաթիվ մարդկանց աշխատանքի արդյունք
դժվարությամբ և որոշակի չկամությամբ էին տեղեկատվություն տալիս	ժամանակ հատկացրին տեղեկատվությունը, նորությունները ներկայացնելու համար

Մեր դիտարկումների մի շարքն իրականացվել է Վիվա-սելլ ընկերության գրասենյակներից մեկում, որտեղ աշխատակիցները միջին տարիքի կամ ավելի եիտասարդ անձինք են: Պետք է նշել, որ կոլեկտիվն իսկապես իրականացնում էր քիմային աշխատանք: Նկատելի էր, որ կա ներքին պայմանավորվածություն, ըմբռնում, միմյանց ընկալելու հղկված մեխանիզմ: Իրականում, և՛ արական, և՛ իգական սեռի ներկայացուցիչները մարդկանց հետ շփման ժամանակ ցուցաբերում էին հարաբերվելու բարդ ու ճկուն ունակություններ, քե աշխատանքի վայրում, քե աշխատանքից դուրս: Սակայն նկատելի էին ակնհայտ տարբերություններ: Դիտարկման տասերկու օրվա ընթացքում ականատես եղանք հինգ լարված իրավիճակների, երբ հաճախորդները եկել էին արտահայտելու իրենց դժգոհությունը, բողոքը կամ էլ թյուրըմբռնումը, որոնք մույնպես վերագրում էին ընկերության աշխատակիցներին: Հետաքրքիր է, որ այս խառը-սեռային հնգյակից երկուսը մոտեցել էին տղաներին, իսկ երեքը՝ աղջիկներին: Աղջիկները պարզելով և հասկանալով խնդրի էությունը, լուծել էին այն: Սակայն տղաները, խնդրին ծանոթանալուց հետո, բացատրելով, որ այն լուծելի է, ուղարկել էին նրանց կին-աշխատակիցների մոտ: Մեր այն հարցին, քե չէին կարող **նրանք** ավարտին հասցնել գործը, հետևեց դրական պատասխան. «Այո, կարող էին, բայց մենք դա անում ենք շատ ավելի համբերատար ձևով և չենք լարվում, որ պետք է ավելի մանրամասնորեն և մույնիսկ մի քանի անգամ բացատրենք հաճախորդին ծագած խնդրի պատճառները և լուծման եղանակները»: Ահավասիկ, աշխատանքային ոճերի տարբերություն: Ակնհայտ

է, որ կանայք պատրաստ են խոսել երկար, մանրամասն և, իհարկե, ժպիտով, որպեսզի նաև հանգստացնեն և քաջալերեն դիմացինին: Խնդիրը կլուծեին նաև արական սեռի ներկայացուցիչները, սակայն ամենահակիրժ հաղորդակցմամբ և առանց մտահոգվելու դիմացինի հույզերի մասին:

Եվս մեկ դիտարկում: Գրասենյակ եկած բոլոր նոր, հեռանկարային հաճախորդներին, որոնք դեռ ծանոթ չէին փաթեթներին, ընդունում էին իզական սեռի աշխատակիցները, հատ-հատ բացատրելով փաթեթների տարբերությունները, նշելով յուրաքանչյուրի առավելություններն ու թերությունները: Իսկ եթե որևէ պատճառով մնա՜նատիպ հաճախորդը հայտնվում էր արական սեռի աշխատակցի մոտ, նա խորհուրդ էր տալիս ծանոթանալ բուկլետներին, ինքնուրույն ընտրություն կատարել, և երբ այս փուլն արդեն հաղթահարված էր, և հաճախորդը հստակ գիտեր, թե ինչ է ուզում, տղաները շատ արագ ու օպերատիվ կազմում և կնքում էին գործարքը, գրեթե առանց խոսելու (միայն ցուցումներ էին տալիս, թե որտեղ է պետք ստորագրել կամ նշում անել): Այս նույն գործարքին կին-աշխատակիցները տրամադրում էին կրկնակի ժամանակ, սակայն նրանք ժպտում էին, ցուցումները ներկայացնում շատ ավելի սիրալիր ձևով և մինչև բաժանման պահը հետևում քաղաքավարության և փոքր խոսքի (small talk) կանոններին: Մենք չենք խոսում այս կամ այն աշխատառժի նախընտրելի լինելու մասին: Դա մեր խնդիրը չէ, պարզապես արձանագրում ենք դրանց տարբերությունները, որոնք իսկապես առկա են:

Այս տարբերություններին ավելացնենք ևս մեկը, որ Թանենը գրանցել է մի ընկերությունում (Tannen 1994a:39): Այն հանգամանքը, որ կանայք չեն ցուցադրում իրենց անձը կամ ներդրումը աշխատանքի կատարման մեջ, կրկին հանգեցնում է հաղորդակցման խնդրին, որ այդքան կարևոր է աշխատանքի վայրում: Երբ կանայք դիմում են ղեկավարությանը աշխատավարձի բարձրացման համար, նրանք հիմնավորում են իրենց խնդրանքը, օրինակ բերելով մի նույնատիպ աշխատակցի, որն ավելի բարձր աշխատավարձ է ստանում: Դեկավարները նշում են, որ սա սակարկության թույլ ռազմավարություն է,

քանի որ հմարավոր է նաև պակաս ստացողին հիշատակել և հարցը վիակել: Իսկ տղամարդիկ աշխատավարձի բարձրացում են պահանջում իրենց կատարած աշխատանքի արդյունքների հիման վրա և ուզում են ըստ արժանվույն գնահատվել: Վերը դիտարկված օրինակները ցույց են տալիս, որ կանայք իրենց ավելի հանգիստ են զգում, երբ չեն առանձնանում, այլ խմբի մաս են կազմում:

Աշխատանքային հաղորդակցության առանձնահատկությունները վերլուծելիս, տեղին է անդրադառնալ ևս մի հարցի՝ կոպիտ, «կեղտոտ» խոսքին: Արդարացիորեն նշվում է, որ դա գրեթե միշտ կիրառվում է արական սեռի ներկայացուցիչների կողմից: (Նշենք, որ մեր դիտարկումների ընթացքում, կատարված տարբեր գրասենյակային հիմնարկներում, չենք արձանագրել, «կեղտոտ» խոսքի և ոչ մի դեպք): Կանանց կարծիքով, երբ նրանք միանում են տղամարդկանց նրանց «կեղտոտ խոսքի» ժամանակ, ապա առաջ են գալիս անկանխատեսելի խնդիրներ: Թանենը դիտարկել է մի նմանատիպ օրինակ: «Երբ կին օղաչում միանում է անձնակազմին, զրույցը փոխվում է: Այն օղաչումները, ովքեր սովորաբար փոխանակում են վատ խոսքեր, հայիոյանքներ, ձերբազատվում են դրանցից կանանց ներկայությամբ: Բայց եթե կինն է որոշում նրանց հետ խոսել իրենց իսկ խոսքով, ձևով և ոճով, ապա նա վատ հեղինակություն է ձեռք բերում» (Tannen 1994b:273):

Ուրեմն, այնուամենայնիվ, պետք է ընդունենք, որ աշխատանքի աշխարհը տղամարդու աշխարհ է կամ գոնե, որ եթե այդ աշխարհը մեկն է և ընդհանուր, ապա ոճերը միանգամայն տարբեր են: Տարբեր են կանանց և տղամարդկանց աշխատանքի ոճերը, աշխատանքային խոսելաոճերը, ինչպես նաև այդ խոսքի ընկալումը նրանց կողմից:

§ 3 Խոսքի ուղղակիությունն ու անուղղակիությունը և դրանց ընկալումը գեղերային տարբերակումների հայեցակետից

Բավականաչափ խոսվել է այն մասին, թե ինչպես ենք մենք խոսում, սակայն այն, թե ինչ ենք ասում և մտապահում, ոչ պակաս կարևոր է, քանի որ այն, ինչ ասում ենք և այն, ինչ նկատի ունենք, կարող է շատ տարբեր լինել: Այս մասին են վկայում բազմաթիվ հարցումներ, ինչպես նաև Լ. Քերոլլի հանրահայտ երկի հերոսները: **“Then you should say what you mean,” the March Hare went on.**

“I do,” Alice hastily replied; “at least—at least I mean what I say—that’s the same thing, you know.”

“Not the same thing a bit!” said the Hatter. “You might just as well say that “I see what I eat” is the same thing as “I eat what I see”!”

Lewis Carroll, Alice in Wonderland, p. 23

Խոսակցության մեջ ներգրավված և անկախ լինելու հակասական կարիքները հավասարակշռվում են ակնարկներ հաղորդելով և ակնարկներն ընկալելով, խոսքը սահմանափակելով ու զսպելով, խոսափելով որոշ բաներ ասելուց և ենթադրություններ անելով, թե մյուսներն ինչ են թաքցնում և չեն արտաբերում: Այն ամենն, ինչ մարդիկ ի նկատի ունեն, առանց բացահայտորեն ասելու, դիտվում է լեզվաբանների կողմից որպես խոսքի անուղղակիություն: Օրինակ՝

“I’m very sorry, officer. But I’m actually in the middle of something right now, sort of an emergency. So maybe the best thing would be to take care of this here . . . without going to court or doing any paperwork.”

“I’m very sorry, officer. I know that I’ll have to pay for my mistake.”

“I’m very sorry, officer. I’ve really learned my lesson.”

Անուղղակի խոսքի այս երեք դեպքերն էլ ուղղված են ոստիկանին, և բոլորն էլ հետապնդում են միևնույն գաղափարը՝ կաշառքի առաջարկ կամ պարգապես խնդրի արագ լուծման առաջարկ առանց ավելորդ բարդությունների:

Շատ ժողովուրդներ, հատկապես ամերիկացիները, հակված են կապել անուղակիությունը անազնվության հետ, իսկ ուղակիությունն՝ ազնվության: Սակայն առօրյա անթիվ իրավիճակներում այս մոտեցումը, առնվազն արդարացի չէ, անիրատեսական է: Միմյանց հետ կարևոր և անկարևոր հարցերի շուրջ հաղորդակցվելիս, մարդ հսկում է, կառավարում իր հարաբերությունները և այդ հարաբերությունների մասին մետաուլերձներ հաղորդում: Ըստ Դ. Թանենի սահմանման, մետաուլերձները չեն արտասանվում բառերով, այլ ազդարարվում են արտասանության եղանակով: Այսպիսով, մետաուլերձների առումով, անուղակիությունը չափազանց կարևոր է հաղորդակցության համար: Ամեն ինչ պետք է ինչ-որ ձևով ասվի, և այդ ձևը անուղակիորեն մետաուլերձ է հաղորդում (Tannen 1986:55):

Տեղին է այն հարցը, թե ինչու պարզապես ուղակիորեն չի ասվում այն, ինչ ի նկատի ունեն մարդիկ: Նախ, ճշմարտությունն ասելու որոշումը հետևյալ հարցն է առաջ քաշում. «ճշմարտության անսահման կողմերից ո՞րն ասել»: Երկրորդը, անմիջական, ուղակի լինելը բավական չէ, քանի որ մեր ասածի կամ լսածի հիմքում ընկած են անսահման ենթադրություններ: Վերջապես, մեր մտքում ունեցածն ամբողջությամբ արտահայտելը կարող է երբեմն վիրավորական լինել մյուսների համար:

Առկա են բազմաթիվ վկայություններ այն մասին, որ նույնիսկ երբ կանայք և տղամարդիկ նույն եղանակով են խոսում, նրանք արժանանում են տարբեր գնահատականի: Եթե որևէ լեզվական ռազմավարություն կիրառվում է կնոջ կողմից, այն դիտվում է որպես թուլություն, իսկ տղամարդու կողմից գործածվածը՝ ուժ: Հասարակության մեջ կանայք ավելի ցածր կարգավիճակ ունեն, քան տղամարդիկ: Բայց սա չէ պատճառը, որ իզական սեռի ներկայացուցիչները գերադասում են, օրինակ, չներկայացնել ուղակի պահանջներ: Կանանց անուղակիությունը կարելի է բացատրել նրանց կողմից կապ հաստատելու ցանկությամբ: Եթե որևէ բան համահունչ է կին-գրուցակցի ցանկություններին և եթե պարզվում է, որ նրա ցանկությունը կամ արված առաջարկը համընկնում է մյուս գրուցակիցների (կին կամ տղամարդ) ցանկության կամ առաջարկների հետ, ապա այս

փոխադարձ շփման արդյունքը կապն է: Կիմն այս դեպքում գերակա չէ և ստորադաս էլ չէ, համամիտ ու հավասար է մյուսների հետ: Ավելին, եթե անուղղակիությունը ընկալելի, հասկանալի է գրուցող երկու կողմերին էլ, ուրեմն քողարկված ոչինչ չկա:

- **Do I look strange in my cover cloth?**

- **Everybody wears them around here. We are in Africa. We're in a hot continent.**

Ձրուցակցի անուղղակի խոսքը հասկանալի է մյուսին, որի պատասխանը ենթադրում է մի քանի միտք: Նախ, մայրցամաքը, որի մասին խոսում են, Աֆրիկան է, երկրորդ, շատ կանայք են Աֆրիկայում կրում ծածկաշոր, և երրորդ, մարդիկ տարօրինակ տեսք չունեն, երբ հագնում են այն, ինչ բոլորը:

Անուղղակիությունն ինքնին անգործության նշան չէ: Ոչ էլ այն ինքնավստահության պակաս է նշանակում: Անուղղակիությունը մարդկային հաղորդակցության հիմնարար տարրերից է: Դա մասնաւորապէս տարրերից մեկն է, որ ամենաշատն է տարբերվում մշակույթից մշակույթ, և որը կարող է շփոթմունք և թյուրըմբռնում առաջ բերել, երբ գրուցակիցներն այն գործածելու տարբեր եղանակներ ունեն: Օրինակ, անգլիացին խոսում է Անգլիայում բնակվող արտասահմանցու հետ, որը լեզուն խորությամբ չգիտի, և այս պատճառով էլ սխալ է ըմբռնում ասածը:

- **Something smells bad in here.** (ինչ-որ բան այն չէ այստեղ)

- **But there is nothing on the** (բայց ոչինչ չկա (կրակի, գազի վրա))

- **No, no, I mean it's a bit fishy!** (ոչ-ոչ, ի նկատի ունեմ, կասկածելի է, տարօրինակ է):

Դ. Թանեմը հեքքում է այն ենթադրությունը, որ ամերիկացի կանայք անուղղակի են իրենց խոսքում, մինչդեռ տղամարդիկ՝ ուղղակի: Երկու սեռերի ներկայացուցիչների խոսեցա՞ծն էլ անուղղակի է, ըստ հեղինակի, բայց որպէս հետևանք, նրանց հենքի (background) հետ կապված որոշ տարածաշրջանային, էթնիկ, դասակարգային տարբերությունների՝ նրանք անուղղակի խոսքը տարբեր իրավիճակնե-

րում տարբեր եղանակներով են կիրառում կամ ընկալում (Tannen 1994:79):

Գոյություն ունեն մշակույթներ, որտեղ գործում են անուղղակիության մշակված համակարգեր⁶: Սա բոլորովին հեռու և անծանոթ չէ հայ հասարակությանը: Հայ հանրությունը մույնպես կիրառում և ընկալում է անուղղակի խոսքը: Հետաքրքրականն այն է, որ այստեղ անուղղակիությունը հավասարապես կիրառելի է ինչպես արական, այնպես էլ իգական սեռի ներկայացուցիչների կողմից: Ընկերական ճաշի սեղանի շուրջ մատած զույգերից մի կին ասաց ամուսնուն. «Կարծես մի քիչ վատ եմ գգում», որին ամուսինը պատասխանեց մի քանի առաջարկությամբ. «Կարող եմ քեզ ավելի լավ տեղ հրավիրել, կամ բուժել իմ գուրգուրանքով, զբոսանք առաջարկել կամ էլի մի բան», որին կինը պատասխանեց. «Չէ, իսկապես սրտխառնոց ունեմ»: Կարելի է տեսնել, որ տղամարդն ընկալել է կնոջ ուղղակիորեն ասածը որպես անուղղակի խոսք, այնքանով, որ այն ընկալելի է, ընդունելի, բնական և շատ կիրառելի կանանց և տղամարդկանց համար հավասարապես: Այս եզրահանգմանը եկել ենք այն դիտարկումների, հարցումների ու ձայնագրությունների վերլուծության արդյունքում, որոնք կատարվել են հայ հասարակության խառը սեռային խմբերում:

Որոշ մշակույթներ զարգացրել են անուղղակիությունը խոսքում և այն հասցրել արվեստի⁷: Սա հստակ պատկերացնելու համար մեր

⁶ Օրինակ, Դ. Թանենը (Tannen 1994a:63) մի շարք դիտարկումների արդյունքում հայտնաբերել է, որ երբ հույն կինն ասում է. «Կցանկանայի՞ր գնալ խնջույքի», հույները դա հեշտությամբ ընկալում են որպես գնալու ցանկության ակնարկ: Եթե կինը չցանկանար գնալ, ապա այդ հարցը չէր բարձրացնի: Դեռ ավելին, հույները գիտեն, որ եթե նա իր նախընտրությունն ուղղակիորեն ներկայացներ, դա կհնչեր որպես պահանջ և այլ վերաբերմունքի կարժանանար: Ուստի, անուղղակիությունն այս դեպքում՝ հույն կնոջ համար, նախընտրությունն արտահայտելու հարմար միջոց է:

⁷ Օրինակ, հայտնի ճապոնացի մարդաբան Հարումի Բեֆուն նկարագրում է անուղղակիության նրբագեղ խոսողական ակտը, որը պահանջվում է, ասենք, լանչի մի պարզ հրավերի դեպքում (Befu 1986): Երբ ընկերը հրավիրեց նրան, Բեֆուն պետք է սկզբում որոշեր, թե այդ հրավերն արված էր ուղիղ իմաստով, թե ձևական բնույթ էր կրում: (Մտաբերենք, որ ամերիկացիների համար նմանատիպ հրավերները շատ ընդունված են և գրեթե բոլորի կողմից մույնությամբ են ընկալվում: Ասելով, «Սիօ օր ճաշենք միասին», նրանք չեն ակնկալում ձեզ տեսնել իրենց դռան մոտ (Tannen

կենցաղից հիշենք դրվագներ՝ կապված ճաշի կամ սուրճի հրավերի հետ: Այսպիսի հրավերներն ընդունված են մեր հասարակության կողմից, մենք դա լսում և ասում ենք բազմաթիվ անգամ, մույնիսկ մեկ օրվա ընթացքում: Եվ մեր հարցումները ցույց տվեցին, որ դրանք գրեթե մույն ձևով են ընկալվում բոլորի կողմից: Հիմնականում սա անուղղակի առաջարկ է, որը ենթադրում է հետագա շփման ցանկություն և հնարավորություն: Սա նաև քաղաքավարության ցուցանիշ է: Ավելի մտերմիկ մարդկանց շրջապատում մմանատիպ հրավերները ենթադրում են ուղղակի ընկալում:

Մեր հասարակությունում ընդունված այս հրավերների փոխադարձ անուղղակիության կիրառումը կարող է ցնցել ամերիկացիներին դրա ավելորդություններով: Սակայն, ինչպես հայտնի է, աշխարհի շատ մշակույթներ գնահատում են անուղղակիության մշակված համակարգերն ավելի, քան ուղղակիությունը: Հիմնականում ժամանակակից արևմտյան հասարակություններն են առաջնահերթություն տալիս ուղղակի հաղորդակցությանը, և մույնիսկ այդ դեպքում դա դիտվում է ավելի շուտ որպես արժեքային համակարգի բնորոշ տարր, քան գործնականում է կիրառվում: Դիտարկենք անգլախոս հասարակության կողմից կիրառվող անուղղակի խոսքի դրվագներ, որոնք հստակորեն ընկալելի են երկու սեռի ներկայացուցիչների համար:

Henri: He wants a biscuit.

Sonia: He's just cleaned his teeth.

Henri: He agrees to have an apple....

1990:226-228)): Հասկանալով, որ հրավերն արված է ուղղակիորեն և նա ընդունել է այն, նրան հարցնում են, թե ինչ կուտի: Ավանդույթին հետևելով, Բեֆուն ասաց, որ ամեն ինչն էլ կընդունի, բայց նրա ընկերը մույնպես հետևելով ավանդույթին, հարկադրեց, որ նա ճշգրտի: Հյուրընկալողն ու հյուրը փոխանակեցին իրենց հարցն ու պատասխանը մի քանի անգամ, մինչև, որ Բեֆուն շատ քաղաքավարի կերպով հայտնեց իր ըմտությունը՝ բրինձ և թեյ: Լանչի օրը նրան հյուրասիրեցին բրինձ և թեյ, բայց միայն որպես շքեղ ճաշի վերջին ուտեստը: Բեֆուն չզարմացավ, քանի որ գիտեր, որ դա ընթացակարգի պահանջն էր: Եթե նրան մատուցեին իր ըմտրածը, նա կվիրավորվեր: Սակայն, կրկին ըստ ընթացակարգի, նա պիտի զարմացած երևար (Befu 1986:108-120):

Sonia: He's not having any apple, he's not having anything, you don't eat in bed, the subject is closed.

Սոնիայի առաջին պատասխանն անուղղակի է, իսկ երկրորդն ուղղակի, որը բավականին հստակ մերժում է արտահայտում:

Hubert: It's twenty past nine.

Ines: I cannot turn up with a ladder in my stocking.

Ժամը ասվում է, հավանաբար, շտապեցնելու համար, սակայն գրուցակիցը դեռ պատրաստ չէ:

- Nice cat! Is it male or female?

- It's three-coloured.

- So what?

- Never mind. It's female actually.

Այս օրինակում գրուցակիցը չի ընկալում անուղղակի խոսքը ոչ թե լեզվական ոճի պատճառով, այլ՝ ընդհանուր գիտելիքի պակասի: Պարզապես, բոլոր եռագույն կատուները էգ են:

- Oh, what a lovely bike!

- I'll lend it to you if you give me a chewing gum, all right?

Սա երեխաների գրույց է, որտեղ անուղղակի խոսքը մույնպես կիրառելի և ընկալելի է:

Մեծ Բրիտանիայում պաշտոնական հանդիպումների ժամանակ նախագահողը ներկաներին ճշտապահության և օբյեկտիվության կոչ է անում՝ դիմելով նրանց հետևյալ կերպ.

Time is precious; objectivity is our prerequisite.

Անուղղակի խոսքի հետաքրքիր օրինակ է փոստատարի կողմից **“Merry Christmas”** ասելը, որը ենթադրում է, որ հասցեատերը պիտի մի փոքր գումար տա նրան տոների կապակցությամբ:

Եվս մի քանի օրինակ առօրյա կյանքից.

- Oh, I am so thirsty! (տատիկ)

- Would you like tea or coffee? (թոռնիկ)

◇

- There's a new performance on these days. I haven't been in the theatre for ages.

- Hey, guys, shall we go to the theatre, all together or shall I invite you? You – alone? (ուսանողներ)

Երկու դեպքում էլ, թե՛ տատիկի, և, թե՛ ուսանողուի խոսքն անուղղակի է: Երկու դեպքում էլ նրանք հասնում են նպատակին առանց պահանջ ներկայացնելու (տատիկին ջուր են առաջարկում, իսկ աղջկան՝ քատրոն հրավիրում), և, ինչպես տեսնում ենք, նախաձեռնողը երկրորդ զրուցակիցն է դառնում: Հետաքրքրական է, որ անկախ սեռից, տարիքից և զբաղմունքից (տատիկ՝ թոշակառու, 68 տ., ուսանողներ՝ տղա և աղջիկ, 19 տ., թոռնիկ՝ տղա, աշակերտ, 11 տ.) անուղղակի խոսքն անմիջապես ընկալվեց զրուցակցի կողմից: Ուրեմն, առանցքային գործոնն այստեղ մշակույթն է և դրանից բխող դաստիարակությունը: Հետաքրքրական է հաջորդ օրինակը, որտեղ անգլուհին դիմում է շանը՝ ենթադրելով կամ, ավելի ճիշտ, ուղղելով իր բառերը երկու հարևաններին, որոնք խոստում են, բամբասում են ցանկապատից այն կողմ:

Enough of your insults! Stop gossiping! Bad dog!

Շանը դիմելը նրան հաղորդակցվելու «իրավունք» է տալիս, այլպես նա չէր կարող արտահայտվել:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անուղղակիությունն ինքնին թուլություն չէ. այստեղ ցածր կարգավիճակի խնդիր չկա: Ավելի շուտ, կնոջ կարգավիճակի մասին մեր ենթադրություններն են ստիպում մեզ մեկնաբանել կնոջ կիրառած ցանկացած լեզվական ռազմավարություն որպես ցածր կարգավիճակի արտացոլում: Հայտնի մարդաբան Է. Քինընը հայտնաբերել է, որ Մադագասկարում կանանց խոսքն է ուղղակի, իսկ տղամարդկանցն՝ անուղղակի: Եվ այնտեղ դիտում են տղամարդու անուղղակի խոսքը՝ այլաբանությունների, ենթատեքստերի կիրառումը, որպես խոսքի ավելի լավ տարբերակ: Նրանց համար, ինչպես անուղղակիությունը, այնպես էլ դա կիրառող տղամարդիկ բարձր կարգավիճակ ունեն: Իսկ կնոջ ուղղակի խոսքը համարում են թափփված ու անբաղաժան (Keenan 1974:125-132):

Տղամարդիկ են խոստում անուղղակիորեն, թե կանայք, տարբեր է լեզվից լեզու: Բեկման ենթակա չէ միայն այն, որ կնոջ ոճն է բացա-

սաքար գնահատվում, դիտվում կարգավիճակով ավելի ցածր, քան տղամարդու՝

Այժմ դառնանք աշխատանքի վայրում տեղի ունեցող աշխատանքային դիսկուրսին և տեսենք, թե որքանով է կիրառելի և ընդունելի ուղղակի կամ անուղղակի խոսքն այս համատեքստում: Աշխատանքի ընթացքում մեզ հաճախ անհրաժեշտ է լինում, որ մյուսներն ինչ-որ բան անեն մեր ցանկությամբ, օրինակ, հանձնարարություններ, առաջադրանքներ կատարեն: Տարբեր մարդիկ սա տարբեր եղանակներով են իրականացնում: Եղանակներից մեկն էլ կապված է այն հանգամանքի հետ, թե զրուցակիցն ում է դիմում՝ դեկլարին, հասակակցին, թե ստորադասին: Այսինքն, այստեղ ***ավագության*** խնդիր կա: Մի կողմից, կարելի է առանձնացնել բացահայտ ու համարձակ հրամանները, իսկ մյուս կողմից՝ հրամաններ, որոնք դժվար է որպես այդպիսին ընդունել, քանի որ բնությամբ դրանք պարզապես իրավիճակի նկարագրություն են կամ որևէ բանի կարիքի արտահայտում: Ոմանք պատշաճ են համարում համարձակ հրամանները, մյուսների համար դրանք կտրուկ, գրգռիչ, վիրավորական են թվում: Կամ էլ հակառակը՝ պատշաճ են համարվում անուղղակի հրամանները, իսկ մյուսներին դրանք կարող են նույնիսկ անհասկանալի թվալ: Հետևյալը նույն գաղափարի արտահայտումն է, սակայն տարբեր ոճերով: Աշխատակիցը իր գործընկերոջ օգնության կարիքն ունի գործը ժամանակին ավարտելու համար:

• **“Please help me out with this analysis.”** (ուղղակի խոսք)

• **“So, [hearer], one workaholic to another. I, uh, was thinking that it would be really good for the whole company if I got this report done on time.”** (անուղղակի խոսք)

• **“I’m really sorry to bother you, and I wouldn’t ask this if it wasn’t hugely important. But do you think it might be possible to step through this analysis with me? It would be a real life-saver.”** (անուղղակի խոսք)

• **“I really admire you, [hearer]. You have the perfect background for this. I wish someone could have told me in school that this stuff would be really invaluable in my work.”** (անուղղակի խոսք)

• “Oh, I can’t believe this. I’m probably going to miss the deadline because of this problem.” (անուղղակի խոսք)

Ըստ Թայլերի, այն մարդիկ, ովքեր անուղղակի հրահանգներն անտրամաբանական կամ կառավարող են համարում, չեն ընդունում անուղղակի խոսքի պայմանական բնույթը (Tyler 1978:69):

Անուղղակիության գործածումը դժվար թե հասկանալի լինի միջնաշակությանին հաղորդակցման համատեքստից դուրս: Շատ ազգեր գտնում են, որ ուղղակիությունը բնականոն երևույթ է և նույն շարքին է դասվում հզորության, իշխանության հետ մեկտեղ, մինչդեռ անուղղակիությունը կապվում է անազնության հետ և ստրկամտություն է արտացոլում: Կան մշակույթներ, որոնց կրողների համար անուղղակիության ձևերի բազմազանությունը հաղորդակցության նորմ է⁸: Հարադան արդարացիորեն նշում է, որ ղեկավարի բարձր կարգավիճակն է, որ թույլ է տալիս նրան ազատորեն ընտրել պաշտոնական կամ ոչ պաշտոնական լեզուն, դրսևորել ու հաստատել իր իշխանությունը կամ, ընդհակառակը, նվազ չափով ցույց տալ իր գերակայությունը, ինչպես նաև մտերմության մթնոլորտ ստեղծել: Փաստորեն, այս մոտեցումներն անմատչելի են ստորադասի համար, որը հանդուգն ու անպատկառ կթվար, եթե նա ընտրել ընկերական կամ մտերմության ոճը:

Դժվար չէ ընդունել այս տեսակետը, քանի որ շատերն են դա նկատում իրենց կենսավորձի ընթացքում: Այո, զուսպ ենք մեզ դրսևորում վերադասի ներկայությամբ (սա նույնպես մի շարք համգամանքների արդյունք է՝ չգրված, բայց ընդունված աշխատանք

⁸ Այդպիսի մի օրինակ է ներկայացնում Կունիիկո Հարադան՝ վերլուծելով մի խոսակցություն ճապոնացի ղեկավարի և նրա ստորադասի միջև (Harada 1993:29): Վերադասը տղամարդ է, որը տարիքով մեծ է կին ստորադասից: Ճապոնացի ղեկավարը, դիմելով իր ստորադասին, հաճախ կիրառում է քաղաքավարի լեզու, և գրեթե միշտ՝ անուղղակիություն: Անուղղակիորեն ներկայացնելով իրավիճակը, (այն, որ փնտրել և չի գտել մի ծառայություն, որտեղ գումավոր ժապավենից կարելի է ստանալ սև ու սպիտակ նկարներ), նա բերում է նրան, որ կինը՝ ստորադասը հասկանա և ընկալի վերադասի ցանկությունը (և/ կամ պահանջը), որ նա զբաղվի դրանով: Փաստորեն, վերադասը դրդում է նրան կամավոր կերպով հանձն առնել խնդիրը: Պահպանված է կնոջ դեմքը, դեռ ավելին, նա դիտվում է որպես նախաձեռնող կողմ, որը նաև վստահություն է պահանջում վերադասից:

քային պահվածքի կանոններ, դաստիարակություն, ավագության խնդիր, դիմացինի տարիքի, փորձի գնահատում և այլն): Բայց նաև գիտենք, որ վերադասի մոտեցումը, խոսքը, ժպիտը, հետաքրքրությունը մեր անձի հանդեպ կարող են մեզ լիցքաթափել, տրամադրել ավելի ազատ հաղորդակցման: Այլ հանգամանքներում դու ես հայտնվում վերադասի դերում, և «խաղը» շարունակվում է: Այսպես, թե այնպես վերադասն է թելադրում շփման եղանակը՝ պաշտոնական, թե ոչ պաշտոնական, մտերմիկ, թե պաշտոնավարական, խնդրանք, թե պահանջ: Սա կարող է որոշվել ուղղակի և անուղղակի խոսքով, որը և հնարավորություն է տալիս կամ «պահպանել խոսակցի դեմքը» կամ հակառակը:

Նմանատիպ մի օրինակ է դիտարկում Յուլիգ ֓ենը, որը վերլուծել է երիտասարդական մի կենտրոնի անձնակազմի ժողովը (Pan 1994:114-119): Աշխատակազմի բոլոր անդամները խոսում են այն եղանակով, որն արտացոլում է նրանց դիրքը, նրանց տեղը աստիճանակարգում: Ստորադասը դիմում է վերադասին՝ մշտապես կիրառելով մույն, տարբերվող խոսքը, սակայն գերադասը, դիմելով ստորադասին, կարող է լինել կամ հեղինակավոր՝ ցուցադրելով իր իշխանությունը, կամ՝ ընկերական՝ նվազեցնելով իր իշխանությունն ու մտերմություն հաստատելով: Իսկապես, խոսելաոճն ընտրում են նրանք, ովքեր ավելի բարձր կարգավիճակ ունեն: Հետաքրքրականն այն է, որ աշխատակազմի անդամների հետ զրույցում, ֓ենը պարզել է, որ նրանք, ովքեր գերադասում են իրենց վերադասի անուղղակի խոսքը, հակված են մտածելու, որ խիստ հրամաններ արձակողները պետք է, որ բավականին անապահով զգան իրենց: Մենք մույնպես հարցում ենք անցկացրել մի քանի հաստատություններում (համալսարան, նպարեղենի խանութ, նոտարական գրասենյան, դպրոց, նախարարություն և այլն), և պարզել ենք, որ ստորին օղակների արձագանքը բավականին նմանատիպ է: Նրանք այն կարծիքի են, որ իրենց վերադասները կայացման խնդիր ունեն: Պարբերաբար կիրառում են հրամայական ձևեր, խոսքը հիմնականում անուղղակի է, թեկուզ հաճախ են փոխում խոսելաձևը՝ կապված այնպիսի հանգամանքների հետ, ինչպեսին է, օրինակ, տրամադրությունը, ընդ որում երբեք չեն

մոռանում, որ նրանք գերադասն են: «Երբեմն մույնիսկ բարեկը մատուցվում է նրանց կողմից որպես մեծ լավություն», ասում է աշխատակիցներից մեկը, «էլ չասած հազար ու մի այլ հարցի մասին, որոնք կարող են առաջ գալ բոլոր աշխատանքային կոլեկտիվներում»: Աշխատակիցները վստահ են, որ սա ավելի շուտ թուլության, անապահովության խնդիր է, քան գերադասին հարկի պահվածքի հարց. ինչու է հարկավոր անդադար հիշել և մյուսներին էլ հիշեցնել իրենց բարձր կարգավիճակի մասին:

Եթե նախորդ օրինակների վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ անուղղակի խոսքը թուլության արտահայտություն է, ապա, ըստ վերջին օրինակի, ուղղակի հրամանները դիտվում են որպես թուլության, անապահովության և ինքնավստահության պակասի արտահայտություն: Պարզապես պետք է ընդունել, որ խոսելու ձևերը, այս կամ այն լեզվական միջոցները, այս դեպքում ուղղակիությունն ու անուղղակիությունը, ներքին հոգեբանական վիճակների ակնհայտ վկայությունը չեն: Դրանք պարտադիր չէ որ բացահայտեն զրուցակցի ինքնավստահության պակասը կամ անապահովությունը:

Տարբեր խմբերում դիտարկելով խոսքի ուղղակի կամ անուղղակի ոճի կիրառությունը, անշուշտ, պետք է նշել, որ այն բացարձակապես կապված չէ աշխատանքի արդյունավետության հետ: Հարադան նշում է. «Հաջող հաղորդակցության գաղտնիքն այն չէ, որ ստորադասները պետք է հստակորեն սովորեն ավելի ուղղակի լինել կամ գերադասները՝ կատարելապես զգայուն նրանց անուղղակի իմաստներին կամ նշանակությանը» (Harada 1993:75): Գաղտնիքը ընկալունակության և մեկնաբանության մեջ է: Հեղինակի բերած օրինակները ցույց են տալիս, որ եթե հրամանատարներն ավելի ընկալունակ լինեին իրենց ստորադասների անուղղակի խոսքին, հնարավոր կլիներ խուսափել որոշ ինքնաքիռային վթարներից: Ինչպես, օրինակ, ընտանիքի անդամները կամ երկար տարիներ միասին ապրած ամուսնական զույգերը հասկանում են միմյանց խոսքը առանց որևէ կողմի հատուկ ընդգծված, պարզ ու որոշակի լինելու: Եվս մի քանի անուղղակի խոսքի օրինակներ, որոնք ցույց են տալիս տարբեր տրա-

մաղբություններ, առաջարկի ընդունում կամ մերժում, խուսափում պատասխանից և այլն:

- **Are you wearing that to the party?"** (սա կարող է նշանակել օրինակ՝ **I don't think you should wear that to the party.** կամ՝ **Go put on something else.**)

◇ - **Is it in your mind to invite Mr. Tchemenko to come to Britain?**

- **Well don't jump too quickly, one of the things, if you're doing diplomacy is you must go stage by stage.** (խուսափում պատասխանից)

◇ - **I told him you were coming.**

- **I'm not going in there one more time, I hope that's clear.** (համոզելու փորձ)

◇ **Beautiful weather, isn't it!** (հորդառատ անձրևի ժամանակ ասում են փոստատարին. հումոր, որ ենթադրում է խրախուսանք և ընթրնում)

◇ - **Hey, I'll be shopping at noon.**

- **Well, I'll meet you at the entrance.**

- **No, I didn't mean that. Just don't forget to post the letter.**

◇ - **Are you getting off?**

- **I'll let you pass, madam.** (անձանոթ մարդիկ ավտոբուսի մեջ. անուղղակի հարց, որը ենթադրում է ճանապարհ տալու առաջարկություն)

◇ **Mother – Well, what do you think we could do tomoorrow? Any ideas?**

Son – Mum, have got your salary?

Daughter – Or, perhaps, just a little free time?

Mother – Well, to be honest, both. So, go ahead!

Daughter – Donna want a pizza...

Son – Then, no theatres! (օրինակից ակնհայտ է, որ տարբեր սեռի երեխաները, որոնք նաև տարբեր տարիքի են, հաջողությամբ կիրառում և ընկալում են անուղղակի խոսքը):

Ուղղակի-անուղղակի խոսքի առումով հաջողված են համարում այն հաղորդակցությունը, ուր իմաստը քաղվում է առանց այն ուղղակիորեն արտահայտելու կամ էլ առանց ընդհանրապես ներկայացնելու:

Դժվար է ասել, թե ինչն է ավելի շատ գնահատվում մեր մշակույթում. անուղղակիությունը, թե ուղղակիությունը, լռությունը, թե խոսքը: Մի շարք ձայնագրություններ, որ կատարվել են մեր կողմից ինչպես Երևանում, այնպես էլ արտասահմանում (Լիբանան, ԱՄՆ, Սիրիա, Եգիպտոս), տարբեր տարիքային խմբերում, ընտանեկան միջավայրում, ցույց են տալիս, որ մեր խոսքն առավելապես անուղղակի է: Սակայն հենց այստեղ է, որ կրկին բարձրանում է մշակույթների բազմազանության և հայ գրուցակցի, հաղորդակցվողի վրա դրանց հսկայական ազդեցության խնդիրը: Յրված լինելով ողջ աշխարհով մեկ, հայերը, թեկուզև պահպանել են իրենց լեզուն, մեծապես փոխել են իրենց խոսելաոճը և կրում են այն մշակույթների ազդեցությունը, որոնցում ապրում են: Այսպես, ուղղակիության և անուղղակիության դաշտն ուսումնասիրելիս, տեսնում ենք, որ ամերիկահայերի խոսքը բավականին ուղղակի է (հիշենք, որ ամերիկացիները արժևորում են ուղղակի խոսքը), իսկ սիրիահայերի, լիբանանահայերի, պարսկահայերի խոսքն ավելի անուղղակի, քանի որ անուղղակիությունն է բնորոշ նշված մշակույթներին:

Մեր կատարած այս դիտարկումներն ամրապնդվում են մի շարք լեզվաբանների ուսումնասիրություններով, որոնք հարցին մոտենում են մեկ այլ՝ գեղագիտական կողմից, տալով դրան գեղեցիկ բացատրություն⁹:

⁹ Ճապոնացի լեզվաբան Լեբրան նշում է, որ ճապոնական մշակույթում ամենախիմ-նական արժեքներից մեկը *omoiyari* է, որը նա թարգմանում է որպես «մասնակցություն» (Lebra 1986:47-55): Դրա իմաստը հետևյալն է. անհրաժեշտություն չկա բացահայտ ներկայացնելու ասվածի իմաստը. դրան պետք է հասնել բնագործին: Լեբրան նշում է, որ ճապոնացի խոսակցին բնորոշ է նախադասությունները կիսատ թողնելը, ավարտին չհասցնելը, քանի որ խոսքն ավարտելը առանց նախապես իմանալու, թե ինչպես դա կընդունի գրուցակիցը, պարտադրող է: Մրա հետ առնչվում է *enryo* երևույթը, որը պահանջվում է մեծամասնության տեսակետների վերաբերյալ տարակարծությունից խոսափելու համար:

Լեզվաբան Լեբրան բացատրում է, որ ի տարբերություն արևմտյան ժողովուրդների (մասնավորապես՝ ամերիկացիների) արևելյան ժողովուրդները մեծապես գնահատում են անուղղակի, ոչ բացահայտ, ճկուն ու նուրբ, նույնիսկ բառային (հակիրճ խոսքի) հաղորդակցությունը, որը ենթադրում է մեծ վստահություն, որ գրուցակիցը կլրացնի և կավարտի ինչպես նախադասությունը, այնպես էլ միտքը, հենց այն միտքը, որն առաջին գրուցակիցն ուզում էր հայտնել և փորձում էր հաղորդել երկրորդին:

Ընդհանրապես, անուղղակի խոսքին հակված ժողովուրդները միտված են այն գաղափարին, որ միայն ոչ զգայուն, անկիրթ ու անտարբեր մարդուն է հարկավոր ամեն ինչն ասել ուղղակի, խոսքային, ավարտուն ձևով: Մինչդեռ, արևմտյան աշխարհը գնահատում է ուղղակիությունը: Դա հատկապես վերաբերվում է քիզնեսի ամերիկյան խոսեւառճին, որն իր պարզությամբ, հստակությամբ միանգամայն տարբերվում է մյուսներից: Ահա, քե ինչպիսի գնահատականի է արժանանում մի հայտնի ամերիկացի քաղաքական գործիչ:

“Everyone admires his ability, his energy, his enthusiasm, his high sense of public duty. He has at present only two enemies his tongue (խոսքը նրա կողմից կիրառվող ուղղակի խոսքի մասին է) and the first person singular; but these two enemies are in the way to making many more”.

Pioneer Mail, P.3, 23d Nov. 1990

Տեղին է նշել Պատրիսիա Քլենսիի ձայնագրությունների վերլուծությունը, որոնք ներկայացնում են երեք մայրերի և նրանց երեք տարեկան երեխաների գրույցը արևելյան Եվրոպայում: Քլենսին նկատել է, որ արևելյան մշակույթների ներկայացուցիչները գրեթե երբեք չեն մերժում իրենց երեխաների խնդրանքները կտրուկ «ոչ» ասելով: Համեմատելով նրանց վարմունքը հայ մայր-երեխա գրույցի ժամանակ հայ մայրերի պահվածքի հետ, նկատում ենք նույն միտումը: Հայ մայրերի պահվածքը հնարավորություն է ընձեռում նրանց չմերժելու երեխայի ցանկացածը, խնդրանքը միանշանակորեն: Նրանք կարող են խուսափել կամ հետաձգել, անտեսել խնդրանքը, խոստանալ ավելի ուշ կատարել այն, շեղել երեխայի ուշադրությունը, ինչ-որ

այլ բան առաջարկել կամ պարզապես հարցեր տալ նրա խնդրանքի մասին:

Արևելյան մշակույթների ներկայացուցիչները, այդ թվում նաև հայ մայրերը, հաճախ բացատրում են իրենց երեխաներին, թե ինչու չեն կարող կամ չեն կատարի նրանց խնդրանքները: Օրինակ, երբ հայ մայր-երեխա զրույցի ժամանակ երեխաներից մեկը խնդրեց մոտը բեռնատարի վրա ձայնային ազդանշան նկարել, ինչպիսին կա «շտապ օգնության» մեքենաների վրա, մայրը բացատրեց, որ բեռնատարները չեն ունենում այդպիսի ազդանշան և չնկարեց: Երբ նա կոնֆետ ուզեց, մայրը հարցրեց. «Մի՞թե առավոտյան շատ չես կերել», և սրանով վերջ դրեց խնդրանքին: Որպեսզի երեխան դադարի անիմաստ աղմկելը, նա գրեթե երբեք չասաց «մի արա», այլ ներկայացրեց, թե ինչ կմտածեն կամ կզգան մյուսները: Երբ երեխան ձևացրեց, որ ափսեմ է ուտում, մայրը զարմանք արտահայտեց, և ոչ թե՝ բարկություն. «Մի՞թե ափսեմ ուտում են»: Մեկ այլ դեպքում, մայրը բացատրում է, թե ինչ կմտածի անցորդը, կինը, մեծ քույրը, անծանոթ մարդը և այլոք, ասենք այսպես. «Նա մայրն է քեզ և զարմանում, չի հասկանում, ինչու ես այդ բանն անում»: Իսկ մի մայր նույնիսկ խնձորի զգացումներն առաջ քաշեց, երբ երեխան նետեց խնձորը հատակին. «Խնձորը լաց է լինում, նրան ցավեցրիր» և այլն:

Այս կապակցությամբ նշենք, որ բոլոր նշված իրավիճակներում ամերիկացի մայրերը լրիվ հակադիր մոտեցում են ցուցաբերում. իրենց կտրուկ դիտողություններն են ճիշտ համարում: Օրինակ, մեկն ասաց, որ երեխան պետք է հատակ պատկերացնի, որ խնձորը չի կարող ցավ զգալ, դա միայն սնունդ է և կարիք չկա ավելորդ «զգացմունքային բեռ» դնել երեխայի վրա: Ամեն ինչին պետք է ռացիոնալ մոտենալ և ի սկզբանե ճշմարտությունն ասել երեխային: Եվ, իհարկե, սա նույնպես ընդունելի բացատրություն է:

Տեղին է նշել, որ մեր կողմից դիտարկված հայ մայր-երեխա հարողակցության օրինակներում մենք տեսանք նաև այս մոտեցման դրսևորումները: Սակայն եթե ամփոփենք, պիտի նշենք, որ դրանք չգործեցին հավասարապես: Այնուամենայնիվ, արևելյան մշակույթ ներկայացնող մայրերը հակված են տալու որոշակի բացատրություն-

ներ, համոզելու և կիրառելու այլ հնարքներ, պարզ և չոր «ոչ» ասելուց խուսափելու համար:

- **May I take your lipstick, mum?**

- **No, don't!**

- **And your perfume?**

- **Stop that! Go and watch your cartoons.** (ուղղակի խոսք, ամերիկուհի մայր)

◇ - **Mum, i wanna a make-up, too.**

- **OK! Let me see, your eyes are so beautiful, and your mouth is like a small rose, the cheeks are peaches. You're pretty. So how can we use the make-up?** (անուղղակի խոսք, անգլուհի)

◇ - **Daddy, can I have an ice-cream?**

- **Well, let's count – an apple, a current bun, two candies, a muffin, a carton of orange juice. Do you think there's enough place there, any space left in your stomach?** (անուղղակի խոսք, շոտլանդացի մայր)

Ինչո՞ւ են անգլախոս մայրերը հոգ տանում՝ փաստարկելու իրենց մերժումը երեխաների խնդրանքներին, եթե երկու տարեկանում նրանք չեն հասկանում կամ, առնվազն, չեն կարևորում պատճառները:

Քլենսիի կարծիքով, բացի բախումից խուսափելու նրանց հիմնական ցանկությունից, կարևոր գործոնը, հավանաբար, մոր ցանկությունն է պահելու իր՝ բանական մեծահասակի կարգավիճակը (Clancy 1986:124-27):

Պարզապես «ոչ», «մի արա և վերջ», «չի կարելի» ասելը, արտահայտությունները կիջեցնեն մոր կարգավիճակը՝ հավասարեցնելով այն երեխայի կարգավիճակին: Արդյունքում կստացվի կամքերի բախում, որտեղ մայրն ու երեխան մույն աստիճանի վրա են, որը և ուղղակի բախում է: Ի տարբերություն սրան, իր մերժումը պատճառաբանելը մորը դնում է գերադաս դիրքում, ինչպես մահ օգնում է մեղմացնել, նվազագույնին հասցնել բախումը:

Քլեմսին բացատրում են, որ արևելյան խոսքային նորմերն ուղղված են **բախումից խուսափելուն, ներդաշնակության ստեղծմանն ու պահպանմանը** (Clancy 1986: 213)¹⁰:

Մեկ այլ հեղինակ՝ Ուետսելը գտնում է, որ ամերիկացիները հեղինակությունը կապում են այնպիսի երևույթների հետ, ինչպիսիք են «**դոմինանությունը պնդումը**, փաստերի և կարծիքների ուղղակի հայտարարությունները» և այլն (Wetzel 1988:555):

Հետևապես, քանի որ խոսքի ամերիկյան նորմերը այլ են, ընդունված է և ակնկալվում է, որ ամերիկացի ծնողները պարզապես «ոչ» են ասում: Ամերիկացի մայրն իրեն հեղինակավոր է զգում, երբ այդպես է խոսում, քանի որ դա համընկնում է հեղինակավոր լինելու իր պատկերացմանը: Սա առնչվում է մշակութային նորմերի ընկալման և դաստիարակության հետ: Այստեղ խնդիրն այն է, որ խոսելաձևերն ինքնին չեն հաղորդում այնպիսի հոգեբանական վիճակներ, ինչպիսիք են հեղինակությունը, իշխանությունը, վստահությունը կամ ապահովությունը: Մենք ընդունում ենք, որ դրանք ցույց են տալիս այդ վիճակները, որովհետև մենք կապում ենք որոշակի խոսելաձևերը մարդկանց հետ, ովքեր, ըստ մեր ենթադրության, զգում են այդ հույզերը: Միջին խավի եվրոպացիներն ու ամերիկացիները անուղղակիությունը կապում են անգործության և անապահովության հետ: Կամայք հակված են հրամաններ և խնդրանքներ ներկայացնել անուղղակի ձևով, այսինքն այն, ինչ նրանցից ակնկալվում է հասարակությունում: Իսկ իրավիճակը սրվում է այն դեպքում, երբ մարդիկ լսում են ոչ այն ձևերը, որոնք ընդունված են և որոնք ակնկալվում են: Առկա են ինչպես լեզվաոճի տարբերություններ, այնպես էլ ընկալման տարբերություններ: Օրինակ, հետևյալ օրինակում ակնկալվող անուղղակի հարցին, գրուցակիցը տալիս է մանրամասն ուղղակի պատասխան, որը պարզապես ցնցում է նրան:

¹⁰ Գրեթե ոչ ոք ճապոնական հասարակության մեջ «ոչ» չի ասում: Նա մեջբերում է ճապոնացի մի գրողի՝ Կեիկո Ուեդային, որը գրել է. «Ճապոնիայում «ոչ» ասելուց խուսափելու 16 եղանակներ» վերնագրով մի հոդված: Այս եղանակներից են լռությունը, երկիմաստությունը, ներողամտության արտահայտումը, գոջումը, ավստասմը, կասկածը և նույնիսկ սուտն ու խորամանկության կիրառումը:

- So then my idiot boss comes back to my desk with a stack of new spreadsheets two feet tall and my final version of the report is due in less then ten minutes. So I'm asking myself, How on earth, does he think I can possibly ...

- When I ask, “How was your day?” you are supposed to say “Fine”.

Շատ մարդիկ, հատկապես կանայք, զգում են, որ իրենց խոսելաճը սխալ է և հոգեբանական խնդիրների առաջ են կանգնում: Այստեղ հարկավոր է երկու բան հաշվի առնել: Նախ, ինչպես արդեն ցույց տրվեց, խնդիրն այն չէ, որ կանայք միշտ ավելի անուղղակի են: Երկրորդն էլ, անուղղակիությունը նույնքան արդյունավետ ու հաջող լեզվական ռազմավարություն է, որքան մյուսները, երբ դա ընկալվում է: Հակառակ դեպքում, կարող է դժվարություն առաջանալ, սակայն ոչ թե անուղղակիությունից, այլ՝ խոսելաճերի տարբերությունից, այսինքն երբ գրուցակիցներից մեկը հակված է կիրառել անուղղակի խոսելաճ, իսկ մյուսը՝ ուղղակի:

Այսպիսին են ընդհանուր գծերով մեր դիտարկումները ուղղակի և անուղղակի խոսքի վերաբերյալ, որոնց միջոցով փորձեցինք ցույց տալ, որ դրանք միշտ չէ, որ բացահայտում են գրուցակցի ինքնավստահության պակասը կամ անապահովության զգացումը, և ոչ էլ ցույց են տալիս նրա գերակայությունն ու հեղինակությունը: Մեծ տեղ տալով այդ հարցում մշակույթների տարբերությանը, ցույց տրվեց, որ միևնույն հոգեբանական վիճակն արտահայտվում է հակադիր խոսելաճներով՝ կապված տարբեր ազգերի լեզվամշակութային նորմերի հետ: Խոսեցինք նաև հայ հասարակության մեջ տեղ գտած լեզվական վերոնշված ռազմավարությունների մասին և տեսանք, որ և՛ կանայք, և՛ տղամարդիկ հակված են ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խոսքի, որն էլ հավասարապես ընկալվում և արժևորվում է տարբեր սեռի, տարիքի, խավի ներկայացուցիչների կողմից:

§ 4 Կանանց և տղամարդկանց հարցեր տալու և տեղեկատվություն ստանալու առանձնահատկությունները

Բազմաթիվ այլ տարբերությունների շարքում, որ մենք տեսնում ենք կանանց և տղամարդկանց խոսքում, հսկայական տարբերություն կա նաև հարցեր տալու, որոշակի տեղեկատվություն ստանալու կամ տալու մեջ: Ի տարբերություն կանանց, տղամարդիկ բոլորովին հակված չեն ուղղություն կամ տեղեկություն հարցնելու, նույնիսկ եթե դա կարող է բախտորոշ լինել: «Ժամանակ առ ժամանակ ինձ թվում է, թե կանայք միայն հարցեր են տալիս», ասում է Ֆիշմանը և ամրագրում իր ասածը նաև Լակոֆի կատարած ուսումնասիրությունների արդյունքներով, ըստ որոնց կանայք շատ ավելի հաճախ են հարցեր տալիս, քան տղամարդիկ (Fishman 1983: 94): Կանանց հարցեր տալու հակվածությունը Լակոֆը մեկնաբանում է որպես նրանց անապահովության ցուցանիշ, ներքին հոգեբանական վիճակի մի լեզվական ազդանշան, որը ծագել է կանանց պատմականորեն ճնշված լինելու արդյունքում (Lakoff 1975: 88):

Քանի որ հարցերը հիմնականում ծագում են խոսակցության ընթացքում, հարկավոր է պարզել, թե ինչպիսի գործառույթ են դրանք կատարում այդտեղ: Հարցերը փոխազդեցության հզոր միջոց են: Նրանք պատկանում են այն արտահայտությունների թվին, որոնք պատասխան են պահանջում, ինչպես օրինակ ողջույնը: Հարցը պատասխանի հետ գույգ է կազմում (Fishman 1983: 94-95): Ուստի, պատասխանի բացակայությունը կարող է դժգոհության առիթ լինել: Փաստորեն, հարցը և դրանից բխող պատասխանը ապահովում են նվազագույն փոխներգործությունը, այսինքն՝ առնվազն մեկ արտահայտություն յուրաքանչյուր մասնակցի կողմից: «Հարցեր տալով, կանայք մեծացնում են պատասխանի հնարավորությունն այն ամենի, ինչ պատրաստվում են ասել» (West & Zimmerman 1983:94):

Տեղեկատվություն տալիս կամ հարցնելիս, մենք գործ ունենք **ուղերջի** հետ, բայց պետք է հաշվի առնել, որ այն նաև **մեկրատղերջ** է պարունակում իր մեջ: Հենց այն փաստը, որ մեկը տիրապետում է որոշակի տեղեկատվության, իսկ մյուսը՝ ոչ, արդեն իսկ գերակայու-

թյան, գերադաս լինելու մետառոտերձն է հաղորդում: Այսինքն, տվյալ մարդն իրազեկ է, իրավասու է, ավելի բարձր կարգավիճակ ունի մյուսի համեմատ:

Նույնիսկ երբ տղամարդը մենակ է և չգիտի որևէ իրի կամ շենքի/կառույցի տեղը, նա անպայման փորձում է ինքնուրույն գտնել այն, պարզապես իրեն հարգելու համար (ոչ թե մյուսների հանդեպ իր կարգավիճակը հաստատելու), ինչպես նա անում է ցանկացած իրավիճակից ելք գտնելու դեպքում:

Դրույթը կարող է վիճելի թվալ, քանի որ դժվար է օրինակով հիմնավորել որևէ բան փնտրող մենակ տղամարդու պահվածքը: Բայց հարցման ենթարկված 24 տղամարդկանցից քսանմեկը, որոնք նաև տարբեր տարիքի են և ունեն տարբեր մասնագիտություններ, ներկայացրել են իրենց գործողությունները, որից ակնհայտ է դառնում տեղեկություն ստանալու նպատակով հարցնելու հնարավորության բացառումը: Հիմնականում շարունակում են փնտրտույթը ինքնուրույն, քայլելով կամ մեքենա վարելով ավելի, քան անհրաժեշտ է, վերադառնում են, որպեսզի ստուգեն բաց թողնված կամ չնկատված նշանը, ցուցանակը, դիմում են ճանապարհային քարտեզին և այլն: Հարցվածներից երկուսը ուսանող են, որոնք խոստովանեցին, որ դիմում են մտերիմ համակուրսեցիներին (աղջիկներին), որպեսզի նրանք պարզեն իրենց վերաբերող որոշ հարցեր դեկանատից կամ ուսումնական հաստատության այլ բաժիններից:

Բազմաթիվ ուսումնասիրություններ, ինչպես նաև կենսափորձը, ցույց են տալիս, որ տեղեկատվություն, օգնություն, ուղղություն տալիս են նրանք, ովքեր ավելի բարձր աստիճանի վրա են կանգնած: Օրինակ, ծնողները՝ երեխաներին, ուսուցիչները՝ ուսանողներին, աշակերտներին և այլն: Թերևս մի փոքր այլ է ընկերների հանգամանքը, որտեղ ուղղահայաց մոտեցումը վերածվում է զուգահեռ մոտեցման: Սակայն ավելորդ չէ նշել, որ նույնիսկ մտերիմ ընկերների խոսքային հարաբերությունները միշտ չէ, որ միանշանակ զուգահեռ են: Շատ հաճախ կողմերից մեկը գերակայում է¹¹:

¹¹ Տեղեկատվություն տալիս են նրանք, ովքեր ավելի բարձր կարգավիճակ ունեն: Այս դիմամիկայի իմացությունը գործում է, օրինակ, Ճապոնիայում (Befu 1986: 108-120):

Եթե տղամարդկանց շրջանում հարցեր տալը վնասում է նրանց բարձր կարգավիճակին, ապա կանանց մոտ իրավիճակն այլ է: Վերջինների մոտ բացի հետաքրքրություն արտահայտելուց, ինֆորմացիոն բացը լրացնելու պահանջից, հարցեր տալը կամ տեղեկատվություն ձեռք բերելը համախոսություն արտահայտելու միջոց է, ինչպես նաև մտերմություն ստեղծելու փորձ:

Հարցման ենթարկված կանանց ճնշող մեծամասնության համար բոլորովին դժվարություն չի ներկայացնում անձանոթից ուղղություն հարցնելը (մի քանիսը դա արել են մի քանի անգամ, մինչև որ չեն հասել իրենց փնտրած շենքի մուտքի մոտ անգամ): Դիտարկել ենք տասնյակ մարդկանց պահվածքը ամերիկյան դեսպանատան մոտ սպասելիս: Կանանց մեծ մասն արդեն 30-50 բուպեից հետո մտերմացել և գրուցում էին, ընդ որում պարբերաբար հարցեր ուղղելով մեկը մյուսին ներսում գտնվող երեխաների կամ ազգականների մասին, դեսպանատուն դիմելու նպատակների մասին և, ընդհանրապես, բազմաթիվ թեմաների առնչությամբ՝ փորձելով խորհուսել միմյանց, քաջալերել անհանգստացողներին և այլն: Մինչդեռ արական սեռի ներկայացուցիչները սպասում էին առանձին-առանձին, որը զբոսնելով, որը մեքենայում, որն էլ պարզապես կանգնած: Տղամարդկանց միջև շփում, մեծ հաշվով, տեղի չունեցավ: Նույն օրվա դիտարկումը բացահայտեց կանանց և տղամարդկանց հարցեր տալու, տեղեկատվություն ստանալու և բաժնեկցելու դրսևորումների ևս մեկ տարբերություն: Աղջիկներն ու կանայք դուրս գալով հայտնում էին հարցագրույցի արդյունքը, սիրով պատասխանում հարցերին, անգամ չէին սպասում հարցի, այլ կիսվում էին կեսափորձով: Մինչդեռ արական սեռի ներկայացուցիչները տալիս էին հակիրճ պատասխաններ, այն էլ միայն երբ նրանց հարցնում էին:

Հյուրերը այնպիսի հարցեր են տալիս տանտիրոջը, որոնց նա վստահաբար կպատասխանի: Նրանք գիտեն, որ տանտերը գիտի այդ հարցերի պատասխանը, և նրա կարգավիճակը ամրապնդելու նպատակով հյուրերը դիմում են այդ քայլին: Սա մշակույթի պահանջ է: Այս օրինակը ցույց է տալիս, որ բարձր է այն մարդու կարգավիճակը, ով գիտի հարցերի պատասխանները:

Հարցերը լինում են տարբեր տեսակի և ծառայում են տարբեր նպատակների, կրում են տարբեր ուղերձներ և մետաուղերձներ: Սաքսը նկարագրում է հարցի մի տեսակ, որը մեծապես գործածվում է երեխաների կողմից (կապված այն բանի հետ, որ նրանց խոսքի իրավունքը սահմանափակ է մեծերի ներկայությամբ): Այդ հարցը “Do you know?” հարցն է, որն ինքնին ենթադրում է “What?” հարց-պատասխանը, որը և քաջալերում ու դրդում է երեխային շարունակելու իր խոսքը: Իհարկե, առաջին պատասխանը կարող է և այլ լինել, օրինակ, հայացք կամ դադար կամ դեմքի արտահայտություն, բայց դրանից էությունը չի փոխվում, և սա, այնուամենայնիվ, եռամաս հաջորդականություն է Q-Q-A (հարց-հարց-պատասխան) (տե՛ս Брытян 2008:88):

Հարցերը հաճախ այլ նպատակի են ծառայում: Դրանք կարող են փոխարինել հրահանգներին կամ քննադատությանը: Օրինակ, “Don’t! Don’t do that!” ասելու փոխարեն հաճախ ասում ենք “What are you doing?” կամ «Why are you doing that?»: Կամ եթե պիտի ասենք. “I don’t want to go there.”, պարզապես ասում ենք. “Why should we go there? What do we go there for? Why do you want us to go there?” և այլն: Նման հարցերն ավելի հաճախ կիրառվում են կանանց կողմից: Հարցերի այս ձևերը, հավանաբար, կարելի է կապել կանանց խոսքի անուղղակիության հետ, սակայն տեղին է ներկայացնել մի օրինակ, որն առնչվում է հարցեր տալու հետ: Ինչպես արդեն նշվել է, գոյություն ունեն մշակույթներ, որտեղ գործում են անուղղակիության մշակված համակարգեր: Օրինակ, Թանենը հայտնաբերել է, որ երբ հույն կինը հարցնում է. «Կցանկանալի՞ր գնալ խնջույքի», հույները դա ընկալում են որպես գնալու ցանկության ակնարկ: Եթե կինը չցանկանար գնալ, ապա այդ հարցը չէր բարձրացնի: Հույները գիտեն, որ եթե նա իր նախընտրությունն ուղղակիորեն ներկայացներ, դա կհնչեր որպես պահանջ և այլ վերաբերմունքի կարժանանար: Ուստի, անուղղակիությունն այս դեպքում՝ հույն կնոջ համար, նախընտրություն արտահայտելու հարմար միջոց է, որը նա իրագործում է հարցի ձևով (Tannen 1992: 88):

Հարցերի մի այլ տեսակի մասին է խոսում Թաննեն իր «Conversational Style» աշխատության մեջ: Խոսքը *machine-gun* (բառացիորեն. *զնդացրային*) տեսակի հարցերի մասին է, որի կիրառումը հատուկ է կանանց (Tannen 1984:82-91): Սրանք իրար հետևից տրվող հարցեր են, որոնց բնորոշ են արագ ընթացքը, շարադասական կարճ ձևեր, բարձր տոնայնությունը (ձայնի բարձրությունը), ինչպես նաև՝ բովանդակության ուղղակիությունը, ինչ-որ տեղ մույնիսկ անիմաստությունը: Նմանատիպ հարցերը կապվում, ասոցացվում են անլուրջ, քեթև, պատահական, ոչ պարբերական բնույթ կրող գրույցների հետ: Դրանք սովորաբար հետևյալ ուղերձն ունեն. «*Պատասխանիր, եթե ուզում ես: Իսկ եթե, ոչ, առաջ անցիր, կարևոր չէ*»: Թաննենը ներկայացնում է մի ընդարձակ, խառը գենդերային գրույց, որտեղ նմանատիպ հարցեր է տալիս կին գրուցակիցը:

How old were you then? You were four? And he? You lived in Quonset? Don't remember? When you were how old? Եվ այս հարցերն ասվում են իրար հետևից, արագ տեմպով, բարձր ձայնով և ոչ միշտ են ստանում պատասխան, այդ պատճառով էլ կարող են կրկնվել մի քանի անգամ տարբեր եղանակներով:

Կանանց և տղամարդկանց հարցեր տալու առանձնահատկությունները դիտարկելիս, տեղին է նաև անդրադառնալ հռետորական հարցին: Ընդունելով, որ այն զուտ տեսական հարց է, իզական և արական սեռի ներկայացուցիչները տարբեր վերաբերմունք ունեն դրան: Տղամարդիկ այն դիտում են որպես տեսական քննարկումների համար առաջարկված հարց, անգամ փորձում են լուծումներ առաջարկել: Կանայք գրեթե միշտ պատասխանում են դրանց, սակայն երբեք լուրջ պատասխան չեն ակնկալում, մասնավորապես, տղամարդկանցից (Tannen 1984: 27):

Տպավորություն է ստեղծվում, քե կանայք, որոնք հակված են տարբեր իրավիճակներում ավելի շատ հարցեր տալու, անտեղյակ են, որ դրանով իսկ բացասական տպավորություն են թողնում: Եվ այստեղ բախվում ենք մի կարծրատիպի, ըստ որի տղամարդիկ ավելի կենտրոնացած են բուն նյութի վրա, մինչդեռ կանայք բավականին «զգայուն» լինելով՝ մտահոգված են իրենց թողած տպավորությամբ: Սակայն մի շարք լեզվաբանների ավելի վաղ կատարած ուսումնասի-

րությունները, ինչպես նաև մեր դիտարկումները ցույց են տալիս, որ տեղեկատվություն ստանալու նպատակով ավելի շատ հարցեր են տալիս կանայք, աղջիկները, իսկ արական սեռի ներկայացուցիչներն իրենց զսպում են, հետ են պահում, որպեսզի անտեղյակի, տգետի տպավորություն չթողնեն: Կարելի է եզրակացնել, որ ավելի զգայունը տղամարդիկ են, իսկ կանայք ու աղջիկներն ավելի կենտրոնացած են գիտելիքի և իմացության վրա:

Այդ կապակցությամբ անդրադառնանք մեկ այլ հետազոտության, որում դիտարկվում է երկու անգլիացի լրագրողի՝ կնոջ և տղամարդու հարցազրույց անցկացնելու ձևը (Winter 1993:117-39): Ըստ հեղինակի դիտարկումների, կինը կենտրոնացած է տեղեկատվության վրա, ամաչառ հարցեր է տալիս առանց իր սեփական կարծիքն արտահայտելու, մինչդեռ տղամարդն ավելի կենտրոնացած է փոխգործունեության, փոխհարաբերության վրա: Նա առաջ է քաշում իր հակասական տեսակետները, ավելի զգացական է և հարցազրույցը վերածում է մրցակցային բանավեճի, որում նա լիարժեք մասնակից է: Սա չի նշանակում, իհարկե, որ բոլոր հարցազրույցներն այսպիսին են, սակայն դա ևս մի օրինակ է, որն ապացուցում է կնոջ՝ տեղեկատվություն ստանալու վրա ավելի կենտրոնացած լինելը:

Ամփոփելով վերոնշյալը, կարելի է եզրակացնել, որ ինչպես և ցանկացած այլ հաղորդակցային մարտավարություն, որը կարող է ծառայել անկախություն կամ ներգրավվածություն ձեռք բերելուն կամ երկուսն էլ ժխտելուն, այնպես էլ հարցերը կարող են կիրառվել կամ ընկալվել որպես հետաքրքրվածություն կամ անհամաձայնություն արտահայտելու միջոց: Ինչպես և ցանկացած արտաբերված միտք, այնպես էլ հարցերը միաժամանակ գործում են երկու հարթության վրա՝ **ուղերճի** և **մեկրատուղերճի** (արտակա և ներակա ձևով): Մենք մեծապես գիտակցում ենք հարցերի «ուղերճի» մակարդակը, այն է՝ տեղեկություն ստանալը: Սակայն ազատ զրույցներում հարցերը գրեթե միշտ ավելի հաճախ կատարում են այլ աշխատանք, օրինակ՝ կոծկում են նվազ ընդունելի խոսքային գործողությունները, ինչպես քննադատությունը կամ հրահանգներ տալը և այլն: Տեսանք նաև, որ այս հարթությունն ավելի բնորոշ է իզական սեռի ներկայացուցիչներին:

ԳԼՈՒԽ 3

ԼԵԶՎԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ՄԻՋՍԵՌԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

§ 1 Թեմայի քննարկումը և դրանում կիրառվող լեզվական ռազմավարության միջոցները գենդերային տարբերակումների համատեքստում

Մույն ենթագլխի նպատակը խոսակցության թեմայի քննարկումն է տարբեր սեռային խմբերում, որտեղ թեման հանդես է գալիս որպես լեզվական ռազմավարության միջոց:

Թեմայի ընտրության հետ կապված նախաձեռնությունը վերաբերում է **թեմայի ներկայացմանը**, առաջ քաշմանը խոսակցության սկզբում կամ հնարավոր նախորդ խոսակցության ավարտից հետո: **Թեմայի փակումը** վերաբերում է դրա ավարտին: Վերջինս կարող է իրականացվել կա՛մ թեման սահմանափակող ակներև, հստակ միջոցների կիրառմամբ (օրինակ՝ բովանդակության գնահատում, երախտագիտության խոսքեր, կրկնություն, ծիծաղ), կա՛մ էլ ոչ բացահայտ միջոցների գործածմամբ (ինչպես օրինակ՝ լռությամբ, կամ բառային փոխգործունեության նվազումով, կամ դրա բացակայությամբ): **Թեմայի փոփոխությունը**, որը մեկ թեմայից մյուսին անցնելն է, հենց այն պահին է, երբ մի թեման փակվում է, ավարտվում և սկսվում, բացվում է մյուսը (Shuy 1982: 272, Maynard 1980: 263-90): Սրանք թեմայի հիմնական փուլերն են: Ստորև ներկայացնում ենք անգլերենում մեծ կիրառություն ունեցող արտահայտությունները, որոնք ծառայում են վերոհիշյալ նպատակներին: Հարկ է նշել նաև, որ դրանք կիրառվում են քիչ, թե շատ պաշտոնական կամ ընդգծված քաղաքավարի խոսքում: Թեման կարելի է *ներկայացնել, փոխել, ամփոփել և փակել* հետևյալ կերպ.

Introducing the topic.

On behalf of myself and the company... OK, let's get/go down to business.

I'd like to speak...

Our objective here is to ...

I'm going to tell you about the ideas

Right. Can we start, please?

The purpose of this meeting is...

I've come up with for...

The aims of this meeting are...

This morning, I'd like to outline the campaign concept we've developed for you.

What we need to achieve today is ...

Changing the topic

Right, let's move on to ...

Perhaps we could go ahead to the next point.

Ok, I'll now look at ...

Turning now to...

Let's recap before we go on to ...

Let's look at this from another angle.

To sum up, ...

To summarise, ...

OK, let's go over what we've agreed.

I think we've covered everything.

Thanks very much. Any questions?

Well, that's all I have to say.

So, what you're saying is ...

Thank you for listening.

Can we just summarise the points we've agreed so far?

Սակայն հարկ է նորից նշել, որ սրանք լայնորեն չեն կիրառվում բոլոր իրավիճակներում:

Թեմաները ճանաչելու, դրանք նկարագրելու, ինչպես նաև բացահայտելու համար ընդունված է վերլուծության երեք մակարդակ. շարահյուսական, իմաստաբանական և խոսույթի: «Թեման սահ-

մանվում է որպես վերլուծության սահմանափակ միավոր, որն ունի սկիզբ և վերջ» (Haji-Hassan 1999: 479):

Ըստ Թրեյսիի, քեմայի փոփոխությունը ռազմավարություն է, որը ծառայում է որպես որևէ գրուցակցի կարևորությունը հաստատելու միջոց, ինչպես նաև գրուցակիցների փոխներգործությունը սահմանելու իրավունք (Tracy 1985: 31): Թեման փոխելը կարող է ընկալվել որպես վկայություն, որ գրուցակիցը գերադաս է կամ անքաղաքավարի ու կոպիտ, կամ էլ պարզապես հետաքրքրված չէ դրանով:

Անգլերենում բավականաչափ զարգացած է **“small talk”** երևույթը, որը կիրառելի է շատ լեզուներում, սակայն այդքան հղկված և դասակարգված չէ, ինչպես անգլերենում: Այն կիրառում են տարբեր հարաբերությունների մեջ գտնվող մարդիկ: Մովորաբար նրանք ծանոթների են, ընկերների ընկերներ, մարդիկ, որոնք լավ չեն ճանաչում իրար: Թեթև գրույցն իրենից ներկայացնում է մի ապահով քեմա, որը ենթադրում է գրուցակցի արձագանքը: Նմանատիպ խոսքի մի քանի պատճառներ գոյություն ունեն: Նախ, այն կիրառվում է ճնշող լուրջությունից խուսափելու համար: Երկրորդ, պարզապես ժամանակը սպանելն է (սիսա թե ինչու է դա շատ կիրառվում սպասելիս): Երրորդ, մարդիկ դիմում են այս թեթև խոսքին քաղաքավարի լինելու նպատակով, ասենք, նոր ծանոթություն հաստատելուց հետո պարզապես պետք է ցույց տալ որոշակի հետաքրքրություն և այլն: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ խոսքի այս տեսակը մույնպես կիրառվում է երկու սեռի ներկայացուցիչների կողմից, սակայն կանանց մոտ սա շատ ավելի է ընդունված: Ահա, այն դաշտերը, որոնք կիրառելի են *փոքր* գրույցներ անցկացնելիս.

Խոսք եղանակի մասին	• Beautiful day, isn't it? • Can you believe all of this rain we've been having? • It looks like it's going to snow. • It sure would be nice to be in ... right about now. • I hear they're calling for thunderstorms all weekend. • We couldn't ask for a nicer day, could we? • How about this weather?
--------------------	---

	• Did you order this sunshine?
Խոսք ընթացիկ թեմաների, առօրյայի մասին	• Did you catch the news today? • Did you hear about that fire on Fourth St? • What do you think about this transit strike? • I read in the paper today that the Sears Mall is closing. • I heard on the radio today that they are finally going to start building the new bridge. • Do you think the Reds're going to win tonight?
Աշխատանքի վայրում	• Looking forward to the weekend? • Have you worked here long? • I can't believe how busy/quiet we are today, can you? • Has it been a long week? • You look like you could use a cup of coffee. • What do you think of the new computers?
Անցիալական իրադարձություն. խնջույքին, զբոսնելիս, սպասելիս	• So, how do you know Justin? • Have you tried the cabbage rolls that Sandy made? • Are you enjoying yourself? • It looks like you could use another drink. • Pretty nice place, huh? • I love your dress. Can I ask where you got it? • How old's your baby? • What's your puppy's name? • The tulips are sure beautiful at this time of year, aren't they. • How do you like the new park? • Nice day to be outside, isn't it? • I didn't think it would be so busy today. • You look like you've got your hands full (with chil-

	dren or goods). • It looks like we are going to be here a while, huh? • I'll have to remember not to come here on Mondays. • How long have you been waiting?
--	---

Չի կարելի չհամաձայնվել Ֆիշմանի այն պնդման հետ, որ կանայք շատ ավելի մեծ դժվարություններ են ունենում գրույցը շարունակելու գործում, քան տղամարդիկ: Դժվար է բացատրել կանանց այս ձախողումը՝ հիմք ընդունելով թեմայի բովանդակությունը, քանի որ, թեպետև, ինչպես նշվել էր վերը, գոյություն ունեն յուրաքանչյուր սեռին հատուկ թեմաներ, դրանք կարող են մաս հետաքրքրել երկու սեռի ներկայացուցիչներին էլ. հոգված թերթում, օրվա ընթացքում կատարված որևէ իրողություն, ընկերներ, ճաշ, աշխատանք (Fishman 1983: 89-101): Համաձայն մեր դիտարկումների, կանանց կողմից բարձրացված թեմաները ձախողվում են, քանի որ տղամարդիկ չեն արձագանքում դրանց այն ուշադրությամբ, որն անհրաժեշտ է գրույցը շարունակական դարձնելու համար: Ի հակադրություն դրան, տղամարդկանց կողմից առաջ քաշված թեմաներն ընդունվում են որպես քննարկման առարկա ոչ թե ավելի հետաքրքրական լինելու շնորհիվ, այլ որովհետև կանայք կատարում են խոսակցության մեջ իրենց հաղորդակցային գործառույթները: Վերջինները պարբերաբար արձագանքում են ասվածին, այն էլ ոչ հակիրճ ձևով: Նրանք ցույց են տալիս իրենց կողմնորոշումը՝ ընտրելով խոսքի փոխանցման պահը: Տղամարդկանց կողմից առաջ քաշված թեմաները դառնում են քննարկման առարկա, քանի որ երկու կողմն էլ ջանում է նախնական փորձը վերածել իրական գրույցի: Այս կարծիքը հաստատում են մաս այն ձայնագրությունները, որ կատարվել են մեր կողմից մի խումբ հայ կանանց և տղամարդկանց գրույցի ժամանակ: Սեդանի շուրջ երկու ժամ տևող միջսեռային խոսակցության ձայնագրությունը ամրապնդում է վերոհիշյալ դիտարկումները: Անգամ հայացք գցելով երկխոսությանը հասկանալի է դառնում, կանանց

խոսքը գրեթե միշտ շարունակվում է մեկ ուրիշ կնոջ կողմից, որը սատարում է նրան համակարծիք լինելով: Օրինակ՝

Էմմա - Ինչ ասես, չեն հնարում իմ մասին:

Գայանե - Թողես, ստից-մտից պատմեն միայն...

Էմմա - ու, ընենց բաներ, որ հեշ ինձ նման չի:

◇

Սահակ - Էմմա, չէի՞ր մտել Կարապի լիճը:

Էմմա - Սկսվեց...

Գայանե - Հա, էլ վերջ չկա:

◇

Լիլիթ – Ամեն դեպքում գրավորը նորմալ կանցկացնենք:

Աննա – Այսինքն, չենք թուլացնում ու

Մարինա – չենք հեշտացնում, հա՞:

Լիաննա – Երևի էդպես անենք, թող իրենք ձգվեն:

Լիլիթ – Թող մի քիչ նեղություն տան իրենց, նորմալ պարսպեն:

Տեսնում ենք նաև, որ տղամարդիկ էլ են շարունակում միմյանց բարձրացրած թեմաները, ավելի զարգացնելով այն կամ պարզապես աջակցելով:

Լյովա – Թե, դու ինչ գիտես, Գայան, դու տանը դաս էիր անում:

Սահակ – Հա, էլի:

◇

Սահակ – «Արդեն գնալու ժամանակն է», ասացի:

Լյովա – Գոնե, աղջիկներին տանելու ժամանակը, որ հաստատ:

Սակայն միջսեռային, խառը հաղորդակցության այս մեկ հատվածում էլ ակնհայտ է, որ կնոջ թեմա առաջարկելու փորձն անհաջողության է մատնված: Թեման չզարգացավ, քանի որ հաջորդ գրուցակիցը (արական սեռի ներկայացուցիչը) չշարունակեց, չունկնդրեց, չաջակցեց նրան, այլ՝ մոր թեմա բարձրացրեց: Օրինակ,

Գայանե – Ես առաջին անգամ ...

Սահակ – Հետաքրիիր է, ինձ թվում էր, որ դա հեշ նման չի ամերիկացիներին:

◇

Էմմա - Մի անգամ էլ մայիսի մեկին էր նման դեպք եղել...

Սահակ - հիշում եք, շքերթ էին կազմակերպում, հետո՝ հրավառություն....

Լյովա - ողջ ժողովուրդը դուրսն էլ լինում:

Ռաֆիկ - Մենք էլ ջահելներով էինք գնում:

Եվ արդեն սկսում են խոսել, տոնի, շքերթի մասին: Տղամարդկանց կողմից առաջարկված 8 թեմաներից, բոլորն էլ արժանացել են քննարկման, ունկնդրման: Սակայն, կանանց առաջ քաշած 5 թեմաներից միայն 2 են շարունակություն ունեցել: Եվ, նկատենք, որ դրանք ընդհատվել են տղամարդկանց կողմից:

Սակայն չի կարելի պնդել, որ թեման ձախողվում է միայն մեկ կողմի ոչ արձագանքող լինելու պատճառով: Կարելի է թեման զարգացնել որոշ ժամանակ (ասենք՝ թեման ներկայացնողի կողմից), բայց, միևնույն է, այն կձախողվի, եթե չկան համատեղ ուժերով դրա զարգացման ջանքերը: Ուրեմն, թեմայի զարգացումը, տևականությունը փոխգործունեության արդյունք է: Հաղորդակցային միջոցների չափից ավելի հաճախակի կիրառումը, ինչպես օրինակ՝ հարցերը, ուշադրությունը գրավելու փորձերը կարող են մաս թեման չընդունելու նշաններ լինել: Դա տեղի է ունենում մաս նվազագույն արձագանքի դեպքում, որը անտարբերության արտահայտություն է՝ խոչընդոտող թեմայի զարգացմանը:

Սթրիտը գտնում է, որ առաջ քաշած թեմայի փոխելը նույնպես արձագանքման մի տարբերակ է: Թեման փոխելու ռազմավարությունը հաղորդակցությունը կառավարելու միջոց է, քանի որ այդ միջոցով քայլեր են ձեռնարկվում հասնելու մի բանի, որը գրուցակիցների կողմից ընկալվում է որպես անհրաժեշտություն կամ նպատակ (Street 1985: 69):

Ֆիշմանը որպես հատուկ ռազմավարություն դիտում է թեմայի կառավարումը, որը կիրառվում է տղամարդկանց կողմից՝ հաղորդակցման ընթացքում գերակայելու նպատակով (Fishman 1978: 401-406): Մեր կողմից կատարված ձայնագրությունները վկայում են, որ կանայք ավելի շատ են հարցեր գործածում (միգուցե և իմանալով դրանց պատասխանները), ինչպես մաս տղամարդկանց խոսքը սատարող արտահայտություններ: Նրանք հեշտությամբ ընդունում են

ցանկացած առաջարկված թեմա: Մինչդեռ տղամարդիկ առավել կիրառում են հաստատական նախադասություններ և նվազագույն արձագանք, ինչի պատճառով էլ չեն աջակցում կանանց կողմից առաջադրված թեմաներին¹²: Կանանց կողմից ներկայացված տասը թեմաներից քննարկվել են չորսը, իսկ տղամարդկանց կողմից ներկայացված բոլոր ութ թեմաներն էլ արժանացել են քննարկման:

Ընդհանրացնելով, կարելի է ասել, որ կանանց կողմից առաջարկված թեմաները ձախողվում են երկու պատճառով. ա. տղամարդկանց քաջալերանքի բացակայության, որն արտահայտվում է նվազագույն արձագանքի կիրառմամբ, որն էլ անտարբերության արտահայտություն է, և բ. քաջալերող խոսակցային աշխատանքի, որ դրսևորում են կանայք հոգուտ տղամարդկանց բարձրացրած թեմաների:

Ընտրված թեմայի *գերակայությունը* նաև սոցիալական կամ հոգեբանական հարաբերության պարզ ազդանշան է: Եթե մարդն իր բնույթով առաջնորդ է կամ շատ է կարևորում իր անձը և ցանկանում, որ մյուսները կատարեն իր կամքը, նրա խոսքը կբացահայտի, կարտահայտի այդ «ուժը» տարբեր եղանակներով: Նա ուղղություններ, ցուցումներ կտա, կզգուշացնի և կսպառնա, քանակական առումով կգերակայեն զրույցի նրա թեմաները, մյուսներին թողնելով միայն իր թեմաներին արձագանքելու հնարավորությունները (Shuy 1982:272-3): Այս մտքի հետ համամիտ է նաև Հաջի-Հասանը, որն իր ուսումնասիրությունների վրա հենվելով, պնդում է, որ մման մարդիկ միշտ ընտրում և ղեկավարում են թեմաները, գերակայում զրույցներում, մույնիսկ առօրյայում, ընկերների շրջանում, ամզամ երբ թեման ամբողջովին կենտրոնացած է խոսակցության այլ մասնակցի վրա (Haji-Hassan 1999:428):

¹² Ֆիշմանի ձայնագրությունների պատկերը հետևյալն է. կանայք ներկայացրել են 76-ից 45 թեմա, տղամարդիկ՝ 76-ից 28-ը, բայց և վերջիններից բոլորը հաջողությամբ զարգացվել են կանանց կողմից: Մինչդեռ կանանց կողմից առաջարկված 45 թեմաներից միայն 12 են քննարկում ունեցել (Fishman 1983: 89-101): Պատկերը գրեթե մույնն է մեր կատարած ձայնագրություններում:

Թաննենը հետևյալ կերպ է զարգացնում այս միտքը: Եթե հաղորդակցման ժամանակ թեմաների մեծ մասը առաջ է քաշում *Մ* մասնակիցը, բայց դրանք բոլորն էլ *Բ* մասնակցի վերաբերյալ են, որը գրեթե թեմա չի առաջարկում, կարելի⁶ է արդյոք պնդել, որ *Մ*-ն է գերակայում: Այս հռետորական հարցը բերում է այն եզրակացության, որ թեմայի բարձրացման քանակական առավելությունը դեռևս չի նշանակում խոսակցության կառավարում: «Հիմնավորելու համար իմ փաստարկը ես համեմատում եմ այս խոսակցային վարքը հոգեբուժության սեանսի հետ: Ոչ մեկը չի կարող ասել, որ հիվանդն ավելի բարձր կարգավիճակ ունի և/ կամ ազդեցություն, մույնիսկ եթե շատ ավելի շատ է խոսում և բարձրացնում է բոլոր թեմաները» (Tannen 1990:279):

Այս մոտեցմամբ Հաջի-Հասանին ու Թաննենին հակադրվում է Շայը, ըստ որի հաղորդակցման այն մասնակիցը, որն առավել շատ թեմաներ է բարձրացնում, կառավարում է հաղորդակցումը (Shuy 1982:113):

Կանանց և տղամարդկանց հարցեր տալու և տեղեկատվություն ստանալու առանձնահատկությունների քննարկման համատեքստում մեծ հետաքրքրություն է ներկայացնում խոսույթի թեմաների դիտարկումը: Քայլերսն այն դիտարկում է երկու տեսանկյունից. 1. գենդերի և թեմայի հարաբերությունը տղամարդ-տղամարդ, կին-կին (միասեռ) և խառը խմբերում և 2. թեմաների կարևորությունն ու անէականությունը հենց գրուցակիցների ընկալմամբ:

Հետաքրքրական է, որ երբ կանայք ու տղամարդիկ միասին են գրուցում (հաղորդակցում խառը խմբում), նրանք փորձում են խուսափել յուրաքանչյուր խմբին բնորոշ կամ նախընտրելի թեմաներից և ընտրում են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներ: Սակայն այս թեմաները քննարկելիս, նրանք հետևում են միայն արական սեռի ներկայացուցիչներին բնորոշ ոճին: Օրինակ, եթե խոսում են սննդից, ապա ավելի կենտրոնանում են մթերքի, ռեստորանների, քան, ասենք, դիետաների կամ առողջության վրա: Հանգստի մասին խոսում են տղամարդկանց ոճով՝ կենտրոնանալով սպորտի կամ հանգստանալու այլ ձևերի վրա (արձակուրդների), և ոչ թե նի-

հարելու կամ առողջական այլ խնդիր լուծելու համար սպորտով զբաղվելու վրա, ինչպես դա սովորաբար քննարկում են կանայք իրար մեջ:

Այս նույն եզրակացության է հանգել նաև Դ. Լենջը՝ վերլուծելով անգլիացի դեռահասների միջև խոսակցության ձայնագրությունները (Lange 1988:56): Աղջիկներն ու տղաները առանձին խմբերով խոսում են իրենց բնորոշ եղանակով և որոշակի թեմաների շուրջ, սակայն, երբ միասին են գրուցում, աղջիկները խոսում են տղաների նման, և նույնիսկ ավելի հաճախ, տղաներին բնորոշ թեմաներից: Մեր կողմից դիտարկվել է ուսանողական խառը խմբի մի քանի հաղորդակցում, սակայն մեկն այս հարցի շրջանակներում ավելի ուշագրավ է: Տնտեսագիտության ֆակուլտետի երկրորդ կուրսի տղաներից մեկը նոր թեմա բացեց ֆուտբոլի մասին, որին գրեթե անմիջապես արձագանքեց աղջիկներից մեկը: Նա ոչ միայն շարունակեց թեման, այլև վերլուծեց մի քանի խաղային դրվագ և նույնիսկ քննադատության ենթարկեց ֆուտբոլիստներից մեկին, ընդ որում կիրառելով **հումոր** և **ավելի ազատ խոսք** (օրինակ՝ ընենց էր կանգնել, ոնց որ ես պետքա խփեի կամ էլ, սպասում էր, որ մեկը գնդակը դնի ոտի մոտ ու ասի. «խփի, ապե»): Հետաքրքիրն այն է, որ զարմացած ու ապշած էին միայն աղջկա ընկերուհիները, որոնք, պարզվեց, չգիտեին ընկերուհու ֆուտբոլային մեծ երկրպագու լինելու մասին, և ոչ էլ լսել էին նրան այդպես խոսելիս (**այդպեսը** նրանց բացատրությամբ նշանակում էր **տղայի նման**, և բացի դրանից, ֆուտբոլը երբեք չի եղել նրանց գրույցի թեմաներից մեկը):

Բոլոր այս ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ **խառը խմբերում** գրույցներն ավելի նման են տղամարդկանց խմբերում գրույցներին, քան կանանց: Կարելի է եզրակացնել, որ միմյանց հետ խոսելիս և՛ կանայք, և՛ տղամարդիկ գիշումներ են անում, ուղղումներ մտցնում իրենց խոսքում, միևնույն ժամանակ կարելի է պնդել, որ կանայք դա անում են շատ ավելի հաճախ:

Այս գաղափարի կողմնակիցներն են նաև Կարլին, Հոլը և Բրոու-նուոլլը: Նրանց դիտարկումները հաստատում են, որ անկախ այն հանգամանքից, թե խոսողները մեծահասակներ են, թե երեխաներ,

իզական սեռի ներկայացուցիչներն ավելի հակված են փոխելու իրենց ոճը տղամարդկանց ներկայությանը համապատասխանելու համար: Խառը գենդերային զրույցներում կանայք նմանվում են տղամարդկանց՝ բարձրացնում են իրենց ձայնը, ընդհատում են, նույնիսկ ավելի հաստատակամ են դրսևորվում (տե՛ս Tannen 1994:119):

Այս գաղափարի հետ կապված՝ Է. Մաքոբին արտահայտում է իր տարածայնությունը: Ըստ նրա ուսումնասիրության, կանայք խառը խմբերում խոսում են իրենց բնորոշ ոճով, հաճախ նույնիսկ չափազանցված ձևով: Նրանք խառը զրույցում կարող են համբերությամբ սպասել իրենց հերթին, որը կարող է նաև չհասնել, կամ էլ ավարտում են զրույցը, արդյունքում խոսելով շատ ավելի քիչ, քան կանեին կանանց շրջապատում: Նրանք տղամարդկանցից ավելի շատ են ժպտում, գրեթե միշտ համաձայնելով մյուսների ասածին, արտահայտում են ուշադրության ոչ բառային նշաններ, մասնավորապես, ուղղված տղամարդկանց ասածին: Շատ լեզվաբաններ կանանց այս վարքագիծը կոչում են «լուռ ծափահարություն» (Maccoby 1994:64-76):

Թեմայի առաջադրումը և դրա կառավարումը գենդերային տարբերությունների համատեքստում դիտվում են որպես երկու լեզվական ռազմավարություններ, որոնք կիրառվում են փոխգործունեությունը գերակայելու համար: Տարբեր լեզվաբանների ուսումնասիրությունները, ինչպես նաև մեր կատարած ձայնագրությունները (տե՛ս հավելված 1, 6, 7) ցույց են տալիս, որ կանայք իրենց խոսքում ավելի բարեհամբույր են, փորձում են խրախուսել զրուցակցին՝ ավարտին հասցնելու իրենց խոսքը: Դիտարկենք, մեր գրառումներից մեկը: ԵՊՀ չորս երիտասարդ կին դասախոսներ խոսում են երկար դասամիջոցի ժամանակ:

Լիան – Լսի, Էրեխու ձեռքերը լավացա՞ն:

Լիլիթ – Ի՞նչ էր եղել, նույն ...

Մարին – Հա, Լիան ջան, մենք նույն ցավով ենք տառապում:

Աննա – Ինչ ասես, որ չենք փորձել:

– Էլ նոր դեղեր...

– Ընդ որում մաս առիքային ...
– Էլ բուսաբուծություն ...
– Բնականաբար դիետա էլ էինք պահում ...
– Անպայման,
– ու շատ խիստ:
– Շատ-շատ եմ ճնշվում, արդեն լացս գալիս է, որ չեմ կարողա-
նում օգնել...

– Լավ էլի, Ան, Էդպես մի ասա:
– Համ էլ, մեր բարեկամի մոտ էլ էր մույն պատմությունը:
– Անցա՞վ:
– Իհարկե, անցավ:
– Էլ, չի կրկնվե՞լ, որովհետև ...
– Չէ, ի՞նչ ես ասում: Էդ տղան բանակ գնաց, եկավ: Անցած տա-
րի ամուսնացավ, շուտով բալիկ պիտի ունենան: Էնպես, որ ...

– Սի հարևան էլ մենք ունեինք: Վայ, զանգը տվեց, բայց ասեմ,
որ հիմա ամեն ինչ ուտում է, ու երևի արդեն մոռացել էլ է, որ այդպիսի
հիվանդություն է ունեցել:

– Վայ, տենց բաներ լսելու համար կարող եմ դասի էլ չգնալ:
– Գնա, գնա, ամեն բան լավ է լինելու:
– Thanks, գնացինք:

Նրանց կիրառած լեզվական միջոցները, ինչպես օրինակ, հա-
մախոհություն արտահայտող գուգահեռ խոսքը, զրուցակցի հետ հա-
վասար թեմայի զարգացումը, բառային և ոչ բառային այլ միջոցների
կիրառումը ապացուցում են իզական սեռի ներկայացուցիչների հակ-
վածությունը դեպի համաձայնությունը, աջակցությունն ու համագոր-
ծակցությունը, ի հակադրություն տղամարդկանց խոսքի, որը ենթա-
դրում է մրցակցություն և մարտահրավեր:

Հետաքրքրական է մաս, թե ինչպես կարելի է բացատրել այն
երևույթը, որ բարձրաստիճան, բարձր դիրք ու պաշտոն զբաղեցնող
կանայք այս կամ այն թեման քննարկելիս խոսում են այն եղանակով,
որը չի մատնանշում, չի արտացոլում նրանց պաշտոնը, գործությունը,
այլ թերաթեքավորում է այն: Սա մույնպես լեզվական մարտավա-
րություն է, որը բխում է հաղորդակցման ժամանակ հավասարա-

կշռություն ստեղծելու և պահպանելու ցանկությունից: Կանայք, որ-
պես կանոն, միշտ հակված են հաշվի առնելու կամ պարզապես հաշ-
վարկելու իրենց բառերի արդյունքն ու ազդեցությունը զրացակցի
վրա: Վերադասների և ստորադասների շփման դաշտում ընդունված
է, որ ստորադասն ավելի ուշադիր է, որպեսզի չբարկացնի, չլարի,
չվրդովի դեկավարին: Բայց ուսումնասիրությունները ցույց են տալիս,
որ երբ կանայք են գերադաս դիրք, բարձր պաշտոն գրավում, նրանք
բավականին ուշադիր են. իրենց խոսքի մեջ կիրառում են այնպիսի
ռազմավարություններ, որոնք չեն նվաստացնի, չեն ստորացնի ստո-
րադասին:

Այս խնդրին անդրադարձել է Թանենը, մասնավորապես, տար-
բերակելով լեզվական այն միջոցները, որոնք բնորոշում են կանանց
և տղամարդկանց խոսքային գործունեությունը: Անշուշտ, չի կարելի
պնդել, որ անխտիր բոլորն են իրենց դրսևորում այդ բնորոշ եղանա-
կով: Ըստ հեղինակի, խոսակցական «արարողությունները», որոնք
կիրառում են տղամարդիկ, հետևյալն են.

- կատակը, ընկերական ծաղրը, բազմաթիվ կատակային
ստորացումներ, ջանքերի հսկայական գործադրում՝ ցածր դիրքում
կամ ստորադաս վիճակում հայտնվելու հնարավորությունից խուսա-
փելու համար:

Իսկ ահա թե ինչ է ընդունված կանանց շրջանում.

- արտաքին հավասարությունը պահպանելու միջոցներ, դի-
մացինի վրա խոսքի ազդեցության հաշվառում, ինչպես նաև ջանքերի
գործադրում իրենց կարգավիճակը, հեղինակությունը նվազեցնելու
ուղղությամբ, որը միտված է խոսքային փոխգործունեության իրա-
կանացմանը առանց որևէ կողմի ակնհայտ լարվածության (Tannen
1995:172-173):

Եթե խառը զրույցի բոլոր մասնակիցները ծանոթ են այս պայ-
մաններին՝ ռազմավարություններին, ապա այն նորմալ է ընթանում:
Վիվա-սելլ ընկերությունում կատարած մեր դիտարկումը հաստա-
տում է այս միտքը: Մասնակիցները հավասարապես ծանոթ են մի-
մյանց խոսքային և աշխատանքային ռազմավարություններին և,
արդյունքում, տեսնում ենք հաջող հաղորդակցման օրինակ (տե՛ս

գլուխ 2, ենթագլուխ 2): Բայց եթե նշված խոսելածները չեն ընկալվում որպես պայմաններ ու բառացիորեն են ընդունվում, դրանք բացասական արդյունք են ունենում երկու կողմի համար էլ հավասարապես: Ե՛վ տղամարդիկ, և՛ կանայք անմիջապես կնկատեն, որ նրանց կատարածը (խոսքի միջոցով) չի գնահատվում ըստ արժանվույն, նրանց չեն լսում, խոսակցությունն առաջ չի ընթանում ակնկալվածի պես:

Հարցականի տակ չդնելով այն փաստը, որ տղամարդիկ իշխում են կանանց, Թանենը բարձրացնում է գերակայության և այլ՝ միջանձնյա մտադրությունների ու ազդեցությունների աղբյուրի և ընթացքի խնդիրը (Tannen 1995:23): Նա գտնում է, որ չի կարելի տեղայնացնել գերակայության աղբյուրը այնպիսի լեզվական մարտավարություններում, ինչպիսիք են ընդհատումը, խոսքի ծավալը, լռությունը և թեմաների բարձրացումը, ինչպես որ պնդում են որոշ լեզվաբաններ: Նմանապես, հնարավոր չէ, հեղինակի կարծիքով, տեղայնացնել կանանց անգործության աղբյուրը այնպիսի լեզվական մարտավարություններում, ինչպիսիք են անուղղակիությունը, քչախոսությունը, լռությունը, հարցերը, որ նույնպես հաստատվում է շատ լեզվաբանների կողմից (Maltz and Borker 1982:196-21): Պատճառն այն է, որ նույն լեզվական միջոցը տարբեր համատեքստերում կարող է կիրառվել տարբեր, նույնիսկ հակառակ ազդեցությամբ:

Այլ կերպ ասած, այն լեզվական միջոցները, որոնք նախատեսված են գերակայություն արտահայտելու համար, մեկ այլ համատեքստում կամ մեկ այլ խոսողի կողմից կարող են կիրառվել կապ հաստատելու նպատակով: Այն մարտավարությունը, որը պետք է որ հանգեցնեի կապի ու մտերմության, մեկ ուրիշի կողմից կարող է գործածվել այլ համատեքստում գերակայություն հաստատելու նպատակով:

Լեզվական ռազմավարությունների դիտարկումը կարելի է ամփոփել Թանենի եզրահանգումով. «Ներուճակ կերպով լեզվական ռազմավարությունները **երկիմասյ** են՝ կարող են նշանակել կամ հոգրություն, կամ համախոհություն և **բազմիմասյ** են՝ կարող են նշանակել երկուսն էլ» (Tannen 1994:21):

§ 2 Ընդհատումը և զուգահեռ խոսքը գենդերային տարբերակումների համատեքստում

Դիտարկենք այժմ ընդհատումներն ու զուգահեռ խոսքը գենդերային տարբերակումների համատեքստում: Այն բոլոր հետազոտողները, ովքեր պնդում են, որ տղամարդիկ ավելի շատ են ընդհատում կանանց, քան կանայք՝ տղամարդկանց, ընդհատումներին տալիս են մեխանիկական սահմանում: Օրինակ՝ Ուեստը և Յիմերմանը ընդհատումը սահմանում են որպես հերթականությամբ խոսելու կարգի խախտում: Եթե երկրորդ խոսակիցը սկսում է խոսել այն կետում, այն ժամանակ, որը կարելի է համարել անցման համար հարմար պահ, ապա դա զուգահեռ խոսք է, մասնակի համընկնող խոսք (overlap): Այլապես, եթե այդ կետը սխալ է ընկալվել խոսակցի կողմից, այն վերածվում է ընդհատման (West and Zimmerman 1975:105-129):

Լեզվաբաններից շատերը քննել են այս երևույթը՝ հենվելով Ուեստի և Յիմերմանի գաղափարների վրա: Մասնավորապես, Էսպոզիտոն համարում է, որ «ընդհատումը տեղի է ունենում, եթե մի զրուցակիցը ասում է մյուսի խոսքից մեկ բառով ավելին» (Esposito 1979:213): Լեֆլերը և նրա համախոհները չեն տարբերակում ընդհատումը և զուգահեռ խոսքը: Ընդհատումը նրանք սահմանում են որպես «ցանկացած ձայնային արտահայտություն մեկի կողմից մյուսի խոսելու ժամանակ, որը կազմում է երեք կամ ավելի վանկ, կամ էլ երկու ընկալելի բառ» (Leffler, Gillespie, Conaty 1982:153-161):

Տղամարդու կողմից կնոջն ընդհատելուն նվիրված ուսումնասիրություններից ամենահաճախ մեջբերվողը Ուեստի և Յիմերմանի աշխատանքն է (West and Zimmerman 1975:102-104): Այդ հարցին են անդրադարձել նաև Բոհնն ու Ստատմանը (Bohn, Stutman 1983: 98-102), Իքինսը (Eakins 1976:54-60), Գլիսոնն ու Գրիֆը (Gleason, Grief 1983:89) և այլոք: Ըստ Ուեստի և Յիմերմանի, միջսեռային հաղորդակցության ընթացքում 46-ից 44 դեպքում տղամարդիկ ընդհատել են կանանց, մինչդեռ տղամարդկանց մույնասեռ զրույցում ընդհատում գրեթե չի եղել: Նույն հարաբերությունը առկա է ծնող-երեխա խոսակցության ժամանակ (14-ից 12-ում ընդհատում է ծնողը), ինչը և

դրդում է եզրակացնելու, որ կանայք և երեխաները նույն վերաբերմունքի են արժանանում տղամարդկանց և մեծահասակների կողմից: Երկու դեպքում էլ, թե՛ կանայք և թե՛ երեխաները, գտնվում են ավելի ստորադաս, ցածր կարգավիճակում: Ուրեմն, ընդհատումը ոչ միայն ավելի ցածր կարգավիճակի արդյունք է, այլ նաև կարգավիճակ ստեղծելու, հաստատելու և պահպանելու միջոց: Կանանց և տղամարդկանց միջև հասարակական հրապարակային փոխգործունեության ժամանակ ընդհատումների 96% կատարվում է տղամարդկանց կողմից կանանց 4% դիմաց:

Տղամարդն է ընդհատում կնոջը, թե կինը՝ տղամարդուն, կապված է այն ենթադրության հետ, որ ընդհատումը բշտամական ակտ է, որտեղ ընդհատողը ագրեսոր է, իսկ ընդհատվողը՝ անմեղ զոհ: Նման ենթադրությունները հիմնվում են այն մոտեցման վրա, որ ընդհատումը միջամտություն է, ոտնձգություն ուրիշի իրավունքներին, իշխելու փորձ:

Տղամարդիկ իրենց ընդհատված են զգում, երբ կանայք խոսում են նրանց հետ զուգահեռ՝ արտասանելով համաձայնության կամ աջակցության բառեր կամ նույնիսկ գուշակելով տղամարդու ասության կամ մտքի ավարտը: Եթե սա տարբերվում է տղամարդու մտքից կամ եզրահանգումից, նրանք դա համարում են միջամտություն, խոսքի իրավունքի խախտում, զրույցը դեկավարելու պայքար:

Ուեստը և Յիմերմանը ուսումնասիրել են իգական և արական սեռի ներկայացուցիչների զրույցները և լեզվական անհավասարությունները՝ կապված գենդերային տարբերությունների հետ (West, Zimmerman 1983:28-31): Չայնագրվել է 31 անգլերեն դիսկուրս հասարակական վայրերում՝ գրադարան, սրճարան, դեղատուն և համալսարան: Տվյալները վերցված են 11 խառը, 10 կին-կին և 10 տղամարդ-տղամարդ դիսկուրսներից: Հետազոտությունն ակնհայտորեն մատնանշում է էական տարբերությունները ընդհատման և զուգահեռ խոսքի միջև խառը և նույնասեռ խմբերում: Զուգահեռ խոսքը սահմանված է որպես նախադասության ավարտի գուշակում և արտասանում, թեմային առնչվող պատասխան: Իսկ ընդհատումը՝ որպես «խոսքի հերթի» կանոնի խախտում, որի ժամանակ թեման չի պահ-

պանվում: Արդյունքները, ինչպես նշվել է վերը, ցույց են տվել, որ ընդհատումների 96%-ում տղամարդիկ են ընդհատում կանանց:

Ըստ մեր տվյալների, տղամարդիկ իրար գրեթե չեն ընդհատում: Կանայք միմյանց հետ խոսելիս, ավելի շատ զուգահեռ խոսք են կիրառում, քան տղամարդիկ իրար հետ խոսելիս: Կանանց կողմից արտաբերված յուրաքանչյուր բառ տղամարդկանց կողմից դիտվում է որպես ընդհատում: Նրանք, փաստորեն, չեն ընդունում զուգահեռ խոսքն այնպես, ինչպես կանայք, չեն արժևորում այն:

Հետաքրքրական է, որ տղամարդկանց կողմից կանանց ընդհատելը հասարակությունը չի դիտում ու քննադատում այնպես, ինչպես կանանց կողմից տղամարդկանց ընդհատելը: Մեր բազմաթիվ դիտարկումները, ինչպես և հարցազրույցները ակնհայտ են դարձնում կանանց դեմ ուղղված այս կողմնակալությունը: Հավանաբար, այստեղ նույնպես գործ ունենք այն կարծրատիպերի հետ, որոնք առնչվում են հասարակության մեջ կանանց **ավանդական դերի** հետ: Տղամարդն **ասում է իր տղամարդու խոսքը**, իսկ կինը՝ **մեջ է ընկնում** չհարգելով տղամարդկանց ներկայությունը:

Ուեստը և Յիմերմանը (1975) և Ուեստ և Ֆենստերմեյկերը (1993) իրենց աշխատություններում նշում են, որ տարբեր սեռերի ներկայացուցիչների հաղորդակցման ժամանակ տղամարդիկ հակված են ուռնագություններ կատարել կանանց խոսելու իրավունքի վրա (տե՛ս Thompson, 1996: 20): Արդյունքում, ինչպես նշում է Թաննենը (Tannen 2005:84-86), կանայք շատ ավելի են լուռ մնում, քան տղամարդիկ: Կանանց ընդհատումից հետո, մրանց 3-4 վայրկյան տևող լռությունը իրենց թուլության և անգործության նշան է, մինչդեռ տղամարդիկ լռում են կարճ պատասխան տալուց առաջ, (ինչպես օրինակ՝ ըիր, այո, լավ ...), դրանով իսկ ցույց տալով, որ բոլորովին հետաքրքրված չեն գրուցակցի թեմայով՝ ժխտելով կնոջ խոսակցության թեման կառավարելու իրավունքը: Ուեստը ցույց է տվել, որ տղամարդն ընդհատում է կնոջը, նույնիսկ երբ վերջինիս սոցիալական կարգավիճակն ավելի բարձր է: Նրա ուսումնասիրությունն անցկացվել է բժիշկների շրջանում, որտեղ տղամարդ բժիշկներն ընդհատել են հիվանդներին 67%, իսկ կանայք՝ 32%: Այսինքն՝ դեպքերի

68%-ում արական սեռի հիվանդներն են ընդհատել կին բժիշկներին (West 1984:214-218):

Ընդհատման երևույթի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն ունի նաև այլ կողմ: Ընդհատումը կարելի է դիտել որպես միաժամանակյա խոսք: Այն նշանակելու համար Թաննենն առաջարկում է «**համագործակցող զուգահեռ խոսք**» արտահայտությունը՝ ցույց տալու օժանդակող և ոչ թե խոչընդոտող խոսքը, ոչ թե գերակայությունը, այլ մասնակցությունը, ոչ թե գործությունը, իշխանությունը, այլ՝ համախոհությունը (Tannen 1996:36):

Դառնալով Գամփրսի (Gumperz 1982:62) վերլուծությանը, Թաննենը բացարձակ, բացահայտ ընդհատումները դիտում է որպես փոխգործունեության ընթացքում առկա ոճային տարբերություններ, այլ ոչ թե որևէ կողմի սխալ կամ, առավել ևս, մտադրություն (Tannen 1996:68):

Իսկ հասկանալու համար, թե արդյոք զուգահեռ խոսքը, ընդհատում է, թե ոչ, պետք է հաշվի առնել մի քանի գործոն. համատեքստը (օրինակ, հպանցիկ զրույց է դա, թե ոչ, կամ աշխատանքային հարցազրույց), զրուցակիցների ավանդական ոճերը (օրինակ, եթե զրուցակիցներից մեկի ոճը խիստ ներգրավվածություն է արտահայտում) և նրանց ոճերի փոխադարձ ազդեցությունը, կապը:

Իհարկե, ասվածը չի նշանակում, որ ընդհատումը չի կարելի կիրառել գերակայելու համար, սակայն այս դեպքում դա պետք է լինի մտադրված և ընդունվի դիմացինի կողմից որպես այդպիսին:

Դիտարկենք հարցը մեկ այլ տեսանկյունից: Ջուգահեռ խոսքի ընդհատում դառնալը կապված է նաև հավասարակշռության, համաչափության հետ: Եթե մեկն անդադար զուգահեռաբար խոսում է, իսկ մյուսը՝ զիջում, ուրեմն հաղորդակցությունը անհավասարակշռված է, ինչը բերում է գերակայության: Իսկ եթե զրուցակիցները հավասարապես են զուգահեռ խոսում կամ խուսափում են դրանից, ապա դա համաչափության նշան է, և գերակայության մասին նման դեպքում չի կարելի խոսել:

Այն տեսակետը, որ հաղորդակցման ժամանակ մեկ ժամանակահատվածում պետք է լսվի միայն մեկ ձայն (և ոչ թե մի քանի),

սխալական է, որն ի միջի այլոց «վատ» հետևանքներ ունի կանանց համար: Կանանց մեծ մասը իրար հետ ազատ, ոչ պաշտոնական, ընկերական գրույցներ վարելիս, հաճախ են համագործակցային գուգահեռ խոսք կիրառում: Ստորև կղիտարկենք մի քանի անգլերեն օրինակներ ինչպես գեղարվեստական գրականությունից, այնպես էլ առօրյայից, իսկ այժմ՝ ԵՊՀ չորս երիտասարդ դասախոսների գրույցը երկար դասամիջոցի ժամանակ:

Լիաննա – Վա'յ, ինչ լավ է, որ էս 20 թույնն էլ կա...

Լիլիթ – Գոնե կարողանում ենք մի քիչ հանգստանալ ու

Մարին –Ա, կիսատ մնացած հարցերը պարզել:

Աննա – Հա, երէխեք. ի՞նչ ենք անելու գրավորի համար:

Կամ՝

Աննա – Ամեն դեպքում գրավորը նորմալ կանցկացնենք:

Լիլիթ – չենք թուլացնում ու

Լիաննա – Չենք հեշտացնում, հա՞:

Լիլիթ – Երևի եղպես անենք, թող իրենք ձգվեն:

Աննա – Թող մի քիչ նեղություն տան իրենց, նորմալ պարապեն:

Լիաննա – Ամբիոնի նիստին, ուրեմն, text bank-ի տեքստերն ե՞նք ներկայացնում:

Մարինե – Որոշեցի՞նք:

Կամ՝

Լիաննա – Իսկ կլինի՞ մի թույն գոնե գործից չխոսենք:

Աննա – Մեր դաժան աշխատանքը թույլ չի տալիս, որ մի թույն դրա մասին մոռանանք:

Մարինա – ... որովհետև սուրճն էլ ենք նույն լսարանում խմում:

Լիլիթ – Դասը, սուրճը, որոշումները, մնում է ճաշն էստեղ եփենք:

Ինչպես տեսնում ենք չորս դասախոսներն էլ հավասարապես միջամտում են միմյանց խոսքին, արձագանքում, տրամաբանորեն շարունակում իրար: Եվ, ակնհայտ է, որ ոչ մի աններդաշնակություն չկա, չի նկատվում որևէ մեկի գերակայությունը կամ էլ կարգավիճակի հաստատման կամ բարձրացման փորձ: Ջուգահեռ խոսքի այս օրինակում նույնպես տեսնում ենք առաջ քաշված հարց, որոշում և լուծում, նույնիսկ հումոր և հեգնանք:

Չքուցակիցները խոսում են գուգահեռաբար, պարզապես իրենց մասնակցությունն ու աջակցությունը ցույց տալու համար: Եվ հենց այս իրավիճակն է բերում որոշ տհաճ կարծրատիպերի ստեղծմանը հասարակության մեջ, որ կանայք շատախոս են և հակված չեն միմյանց լսելու, ինչի մասին կխոսվի ստորև:

Ինչպես խոսքային տարբեր ռազմավարություններ ու երևույթներ, այնպես էլ ընդհատումն ու գուգահեռ խոսքը տարբեր մեկնաբանություններ ունեն տարբեր մշակույթներում: Կան մշակույթներ, որտեղ գնահատվում է միաժամանակյա խոսելը, մանավանդ ազատ գրույցի ժամանակ: Աշխարհի երկրների զգալի մասի համար դա նորմ է, մինչդեռ հյուսիսային եվրոպական նորմն այլ է՝ «մեկ ժամանակահատվածում խոսում է միայն մեկ մարդ»¹³:

Ինչպես արդարացիորեն նշում են վերոհիշյալ ուսումնասիրողները, և ինչպես տեսանք մեր դիտարկումներից, գուգահեռ խոսքը **կսռուցողական** է. այն ներգրավվածություն, մասնակցություն արտահայտելու միջոց է, մտերմիկ կապ ստեղծելու եղանակ: Այս գաղափարին են բերում մեր կատարած բազմաթիվ գրառումները և ձայնագրությունները, որոնց մասնակիցները՝ տարբեր սեռի և տարիքի գրուցակիցները, բազմիցս իրականացնելով գուգահեռ խոսքը, ստեղծում են փոխըմբռնման և մտերմիկության հաճելի մթնոլորտ: Նմանատիպ հաղորդակցության օրինակ դիտարկեցինք վերևում (ԵՊՀ

¹³ Նկարագրելու համար խոսքի այն ոճը, որը դիտարկել է Անտիգուայում Ք. Ռեյզմանը, նա ստեղծել է «*contrapuntal*» տերմինը /Raisman, 1974: 110-124/: Նույն տերմինը փոխառել է Ք. Ուոտսոնը նկարագրելու համար Հավայան կղզիներում բնակվող երեխաների բանավոր խոսքը, որտեղ նրանք համատեղ կատակում են և տարվում «գրույցի պատմվածքով»: Հեղինակի կարծիքով, այս երեխաների համար հերթը կարևոր չէ անհատապես ներկայանալու համար: Էականը ընկերովի ներկայանալն է կամ ներկայացրածը ամբողջական դարձնելը (Watson 1975:53-72): Իսկ ճապոնացի լեզվաբան Հայաշին պնդում է, որ միաժամանակյա խոսքը մշակույթով պայմանավորված դաստիարակության արդյունք է. այն անհատական բնույթ չի կրում: Ըստ նրա, ճապոնացիներն անհամեմատ շատ են խոսում միաժամանակ, և դա երբեք չի գնահատվում որպես ընդհատում (Hayashi 1988:269-288): Նույն միտքն են արտահայտում Շույցը, Ֆլորիոն ու Էրիքսոնը, որոնք նկարագրել են մի խոսակցի տղայի, որը վատ վարքի տեր էր համարվում դպրոցում, քանի որ շարունակ միջամտել էր ընկերներին, ուսուցիչներին իր մշակույթին բնորոշ և համապատասխան եղանակով (տե՛ս Tannen 1990:202-204):

անգլերեն լեզվի մի շարք դասախոսների հաղորդակցում երկար դասամիջոցի ընթացքում): Նրանք գրուցում են մոտ 20 թույլ անդադար ընդհատելով միմյանց՝ հաստատելով մեկը մյուսի ասածը, ընդ որում այս իրավիճակն ընդունելի և հասկանալի է բոլոր գրուցակիցների համար: Տիրում է փոխըմբռնման և ընկերական մթնոլորտ, ընդ որում շոշափվում են ոչ միայն առօրյա հարցեր, այլև աշխատանքային խնդիրներ, որոնք հաճախ ստանում են լուծման տարբերակներ, առաջարկներ: Ուստի, զուգահեռ խոսքը **կառուցողական** է:

Դեռևս 1975 թ., առաջինը նկատելով, որ զուգահեռ խոսքը նախընտրելի է կանանց համար, Քալչիկը (Kalcik 1975:11) առաջարկել է պարզել խոսակցության **դաշտի** բնույթը, որն էլ հետագայում իրագործել է Էդելսկին՝ առաջ քաշելով երկու տեսակ. ելույթ ունենալու իրավունքի **միանջնյա զարգացում** (խոսում է մեկը, մյուսները լսում են) և **համալրող ջանքերով սրեղծված հալրակ**՝ ելույթի իրավունք (լսվում է մի քանի մարդու ձայն, խոսակցության դաշտն ազատ է բոլորի համար) (Edelsky 1981:383-421): Էդելսկին գտնում է, որ կանայք շատ են խոսում **համալրող հալրակի** դեպքում, մինչդեռ տղամարդիկ նույնքան խոսում են **միանջնյա հալրակի** դեպքում: Նշված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանայք հակված են խոսելու, երբ լսվում է մի քանի ձայն, իսկ դա երբեք ընդհատում համարվել չի կարող:

Մեր ձայնագրությունները, որ կատարել ենք հայկական միջավայրում, խառը սեռային խմբերում, որտեղ տեղ են գտել բազմաթիվ ընդհատումներ և զուգահեռ խոսքի մնուշներ, բերում են այն եզրահանգման, որ զուգահեռ խոսքը դեռևս ընդհատում չէ և կարող է հանդես գալ որպես փոխհարաբերություն ստեղծելու և այն ամրապնդելու միջոց: Ստորև ներկայացված են օրինակներ գեղարվեստական գրականությունից, ինչպես նաև աշխատանքային հաղորդակցությունից, որոնք և ամրագրում են այն գաղափարը, որ զուգահեռ խոսքը չի կարելի ընդունել որպես ընդհատում: Ընդհատման դեպքերը նույնպես ակնհայտ են այստեղ, որոնք իրականացվում են հիմնականում արական սեռի ներկայացուցիչների կողմից: Իսկ կանայք լրացնում են միմյանց և շարունակում նույն միտքը:

"Ah, but" cried Gudrun, "**let us** drink to Britannia."

"**Yes, yes, let's drink to Britannia**", repeated Ursula.

Gerald laughed and filled the glasses.

"I think Rupert means," Gudrun said, "that nationally all Englishmen must die, so that they **can exist** - "

"**Individually and** - " added Ursula.

"**Super-nationally** - " put in Gudrun raising her glass.

Lawrence D.H. "Women in Love" p. 450

Ահավասիկ, վերևում նշվածի ապացույցը: Երկու կանանց խոսքն այստեղ կարելի է նույնիսկ դիտել որպես մեկ ամբողջություն, մեկ նախադասություն, այնքանով, որ դրանք համահունչ են և լրացնում են միմյանց. **they can exist individually and super-nationally**.

Իսկ հետևյալը չորս ընկերների հաղորդակցում է, որը և հաստատում է արձանագրված ամփոփումը՝ արական սեռի ներկայացուցիչն ընդհատում է մյուս զրուցակիցներին խառը սեռային խոսքում:

Carl – Can we move on to the next point, the open-plan office? Nancy, would you like to begin?

Nancy – I like the idea. It's good for communication, people see each other at the office, it's, er, it's good for team spirit, too. There's more interaction between people, and people work harder when they are on display. **And...**

Max – **I am not sure I agree with you there**. With open-plan offices, there's a problem of privacy.

Carl – OK Max, thanks. Stefan, what do you think?

Stefan – I agree with Max about privacy. What if you want to have a private conversation or make a private phone call?

Carl – Well, I suggest we use meeting rooms for private conversations or calls.

Stefan – Meeting rooms? Well, that's true, **I suppose ...**

Max - **Could I just say something?** I don't think it works.

Carl – Let Stephen finish, please. **Max ...**

Max – **Well I am not happy about it.** I don't think we should have a vote about it now. I mean, I think we need a report or an extra survey done about this.

Carl – Are you saying we need to bring in a consultant?

Nancy – **I think, ...**

Max – **I was thinking of someone inside the company.**

Carl – OK, I think a report is probably better. I propose that someone prepares a report on the open-plan idea, by say, the end of the month. Is everyone agreed?

Nancy – Am I the one to do that?

Carl – Well, why not?

Max – Can we move on to the next item on the agenda?

Ահավասիկ, Մաքսն ընդհատում է երեք գործընկերներին էլ՝ չլսելով նրանց խոսքը և նույնիսկ հնարավորություն չտալով նրանց շարունակել այն ավելի ուշ:

Հետևյալ օրինակում ընկերության երեք տնօրեն քննարկում են մի խնդիր կապված կառավարիչներից մեկի հետ: Այստեղ վերլուծությունը ներկայացնում ենք հենց երկխոսության մեջ՝ ավելի ակնհայտ դարձնելու առաջ քաշված գաղափարները:

John – Ok, we agree then, we know Louisa has a drink problem, but we don't know why. Anyway her drinking is definitely affecting her work...

Claire – and her relations with staff. (Կլերը շարունակում է Ջոնի միտքը՝ հաստատելով այն: **Չուզահեռ խոսք է**):

Nikos – Yes, so what are we going to do about it? In my opinion there are several ways we could deal with this.

John – Oh yes?

Nikos – We could have a talk with her and suggest she gets professional help or we could do nothing and hope the problem goes away. I think we should give her a verbal warning.

John – I think it's a ...

Claire – ... **a serious matter (չուզահեռ խոսք)**. Mmm, let's look at the pros and cons of giving her a verbal warning...

Nikos – And?

Claire – I agree with you, but ...

Nikos – (**ընդհատում**) ... let's look at this from a different angle. We don't want to make a problem worse, do we? So, how about this? It might be worth asking a friend to have a quiet chat with her. It could help a lot, I think ...

John – (**ընդհատում**) The drink problem could get worse.

Claire – But in time we may find she solves her personal problems. Who knows how ...

Nikos – (**ընդհատում**) Ok then, we've looked at all the options. And we agree, I think. The best way forward is to advise her to get professional help.

John – Right. So it's decided. So the next thing to do is to contact out medical officer. He'll give us some suitable names...

Երկխոսությունից ակնհայտ է դառնում, որ զուգահեռ խոսքը շարունակում, լրացնում է նախորդ զրուցակցի միտքը, մինչդեռ ընդհատման դեպքում խոսքը շարունակվում է այլ հունով: Հասկանալի չէ, թե ինչպես էր զրուցակիցը ցանկանում ավարտել իր խոսքը: Կամ էլ տրամաբանորեն վերլուծելով ընկալում ենք, որ ընդհատողը համամիտ չէ զրուցակցի հետ և առաջարկում է միանգամայն այլ տարբերակ:

Ամփոփելով տարբեր լեզվաբանների տեսակետները, վերլուծելով մեր դիտարկումներն ու ձայնագրությունները, գալիս ենք այն եզրահանգման, որ **զուգահեռ խոսքը** կառուցողական է. այն ներգրավվածություն, մասնակցություն արտահայտելու միջոց է, մտերմիկ կապ ստեղծելու եղանակ: Այն հիմնականում կիրառելի և ընկալելի է իզական սեռի ներկայացուցիչների համար անկախ նրանց տարիքից և ազգությունից: Իսկ **ընդհատումը** արական սեռի ներկայացուցիչների խոսքային ռազմավարություն է, որ կիրառվում է որպես կարգավիճակ ստեղծելու, հաստատելու և պահպանելու միջոց:

**§ 3 Լռությունը և ծավալուն խոսքը (շատախոսություն),
զանգառը և մանրամասների փոխանակումը, բամբասանքը,
վիճաբանությունը և ընդհարումը, դժվարությունների մասին
խոսքը¹⁴ անգլերենում**

Կանանց շատախոսությունն ու տղամարդկանց սակավախոսությունը այն խնդիրներից մեկն է, որին բազմիցս անդրադարձել են ոչ միայն լեզվաբանները, այլև լեզվաբանության հետ առնչվող այլ գիտնականներ: Այժմ դիտարկենք և վերլուծենք այս հարցը գեոդերալիին ուսումնասիրությունների շրջանակներում՝ փորձելով կապել այն արական և իգական սեռերի ներկայացուցիչների մոտ առկա հաղորդակցային առանձնահատկությունների և երևույթների հետ:

Ուրեմն, ո՞վ է շատ խոսում. կանա՞յք, թե՞ տղամարդիկ: Այս թվացյալ հակասական հարցադրումը կարելի է հարթել, տարբերակելով հանրային և միջանձնյա խոսքը: Տղամարդիկ ավելի հակված են հանրային խոսքին, մինչդեռ կանայք՝ միջանձնյա, մտերմիկ: Այս տարբերությունն առավել արտահայտիչ դարձնելու համար, Թանենն առաջարկում է որակել տարբերություններն, օգտագործելով *report-talk* (հաղորդման խոսք) և *rappport-talk* (հարաբերության, կապի խոսք) տերմինները (Tannen 1990:76):

Կանանց մեծ մասի համար հաղորդակցման լեզուն, առաջին հերթին, փոխհարաբերության լեզուն է, կապեր հաստատելու և հարաբերությունների ստեղծման բանակցային միջոց: Այստեղ շեշտը դրվում է նմանությունների վրա, համանման ու համապատասխան կենսափորձը ցուցադրելու վրա: Մանկության տարիներից ի վեր աղջիկները քննադատում են այն հասակակիցներին, որոնք տարբերվում են, աչքի են ընկնում «ուրիշ» լինելով: Մինչդեռ յուրաքանչյուր տղամարդ կամ մույնիսկ տղա փորձում է ցույց տալ, որ նա «ուրիշ» է, նման չէ մյուսներին, ինչ-որ բանով ավելին է:

¹⁴ «Խոսք դժվարությունների մասին» արտահայտությունը ներկայացնում ենք որպես trouble-talk բառակապակցության համարժեք, որի համար առաջարկում ենք նաև «խոսք անախորժությունների մասին» արտահայտությունը:

Մարդիկ իրենց ամենամտերմիկ կապերը տանն են զգում կամ այլ միջավայրերում, որտեղ տիրում է այդ «տնային», ընկերական մթնոլորտը: Դա կարող է լինել հաճելի միջավայրում, ընկերական շրջապատում, մի խոսքով, այնտեղ, որտեղ մարդ վարում է մտերմիկ, անհատական գրույց: Սակայն անկախ վայրից, տղամարդկանց մեծ մասի համար խոսելը անկախություն պահպանելու միջոց է, որը նաև ծառայում է աստիճանականության (hierarchical) սոցիալական համակարգում բարձր կարգավիճակի համար բանակցելուն, ինչպես նաև այդ կարգավիճակը պահպանելուն: Սա հիմնականում արվում է գիտելիքները, հմտությունները ցուցադրելու միջոցով: Խնդիրն այստեղ կենտրոնական դիրք գրավելն է, որն իրականացվում է վերբալ (խոսքային) ներկայացմամբ, ինչպես օրինակ պատմություններ պատմելը, կատակելը կամ տեղեկատվություն հաղորդելը: Դեռ մանկությունից տղամարդիկ սովորում են գործածել խոսքը որպես ուշադրություն գրավելու և պահելու միջոց: Այսպիսով, նրանք սովոր են, բավականին հանգիստ և բնական են զգում, երբ խոսում են անծանոթ մարդկանց մեծ խմբի առջև: Նրանք հանդես են գալիս «հասարակական խոսքով»: Եվ ասիա, նույնիսկ ամենամտերմիկ իրավիճակներին նրանք մոտենում են ինչպես հասարակական խոսքային գործունեության, որն ավելի մոտ է որևէ բան ներկայացնելուն կամ հաղորդելուն, քան կապ կամ մտերմություն հաստատելուն:

Դառնալով լռությանն ու շատախոսությանը, ասենք, որ այն գենդերի հետ առնչվող մեկ այլ հետաքրքիր ոլորտ է՝ համաձայն այն լայնատարած կարծիքի, որ կանայք տղամարդկանցից շատ են խոսում: Սակայն, այս ընդունված կարծիքը բազմիցս ժխտվել է լեզվաբանների ու մարդաբանների կողմից: Սուրբերի իրականացրած մի փորձի ժամանակ, որտեղ կանայք և տղամարդիկ պետք է նկարագրեին երեք նկար, տղամարդիկ խոսել են 13.17 րոպե, իսկ կանայք՝ միջինը 3.20 րոպե (Swacker 1975:46):

Քոուսթը, Իկինսը, Սփենդերը, Սթեյնենը համամիտ են վերը նշված այն կարծիքին, որ տղամարդիկ շատ են խոսում հանրային իրավիճակներում: Այս դաշտն ուսումնասիրող լեզվաբանները համարում են, որ հասարակական միջավայրը մրցակցության հարմար

դաշտ է, ասիա և տղամարդիկ խոսում են այն գրավելու համար: Կանայք հակված են խոսել անձնական խնդիրներից այլ կանանց հետ, այստեղ «գրավելու» ոչինչ չկա, ուստի այս թեմաները տղամարդիկ անիմաստ, ոչ կարևոր են համարում: «Այն փաստը, որ այնպիսի թեմաները, ինչպիսիք են սպորտը, քաղաքականությունն ու մեքենաները դիտվում են որպես լուրջ, իսկ հղիությունն ու անձնական հարաբերությունները՝ որպես պակաս լուրջ, արտացոլում է այն սոցիալական արժեքները, որոնք տղամարդու կատարածը սահմանում են որպես կարևոր, հետևաբար կանանց թեմաները՝ անկարևոր, գոնե՝ նվազ կարևոր: Արդյունքում, տղամարդիկ լուրջ են անձնական իրավիճակներում: Տղամարդկանց այս լուրջությունը վերածվել է անհետաքրքիր թեմաների ժխտման, մերժման միջոցի» (Spender 1980:42):

Իր կատարած ուսումնասիրությունների հիման վրա, մասնավորապես խառը գենդերային խմբերի խոսակցությունները վերլուծելով, Ստեյնեմը պնդում է, որ շատախոս կինը խոսում է տղամարդու չափ (Steinam): Այսինքն, շատախոսությունը բոլորովին էլ կանանց բնորոշ գիծ չէ: Լռությունն ընդհանրապես դիտվել է որպես անգործության վկայություն, իսկ շատախոսությունը՝ ծավալուն, առատ խոսքը, համազոր է գերակայությանը: Հետազոտողները հաշվել են արտասանված բառերի քանակը և ժամանակով ստուգել մարդկանց խոսքի տևողությունը, ապացուցելով, որ տղամարդիկ կանանցից շատ են խոսում և սրանով գերակայում են գրույցում: Անկասկած, այս դիտարկումները ճշմարիտ են որոշ դեպքերում: Սակայն հնարավոր չէ ծավալուն խոսքը կապել գերակայության հետ բոլոր մարդկանց համար, բոլոր իրավիճակներում և բոլոր մշակույթներում:

Լեզվաբանների մեկ այլ խումբ էլ, հանձինս Ուեստ և Յիմերմանի, պնդում է, որ, ինչպես և ընդհատումները, լուրջությունը նույնպես գերակայություն կիրառելու միջոց է (West and Zimmerman 1983:103-117): Կոմարովսկին հաստատում է, որ ամուսնության մեջ «դոմինանտ» է լուռ կողմը (Komarovsky 1962:46-62): Միշտ լուռ, սակավախոս կողմն է գերակայում: Իսկ Մետլի կարծիքը հետևյալն է. «Լռելով, այսինքն չխոսելով են տղամարդիկ ղեկավարում և գերակայում կանանց, և իրավիճակն ընդհանրապես: Կիրառելով լուրջությունը և

թաքցնելով զգացմունքները, տղամարդիկ պաշտպանում են գերակայության և ուժի իրենց դիրքերը: Սա տղամարդուն հատուկ ոճ է: Անարտահայտիչ, զուսպ լինելը ակնկալվում է տղամարդկանցից տարբեր մշակույթներում: Այս ակնկալիքը խրախուսում է նրանց դրսևորել իրենց այն եղանակով, ինչպես որ նրանք անում են սոցիալական դիրք ձեռք բերելու համար» (Sattle 1983:122):

Այլ գիտնականներ, ինչպես օրինակ Դ. Սպենդերը, հաստատել են, որ տղամարդիկ գերակայում են կանանց՝ նրանց լռեցնելով (Spender 1980:82): Կան հանգամանքներ, երբ սա հստակ է: Քոուքսը մեջբերում է բազմաթիվ ասացվածքներ, որտեղ կանայք, թվում է, թե երբեք չեն լռի (Coats 1986:98): Մի քանիսն էլ ավելացնենք մենք.

A woman's tongue wags like a lamb's tail.

Foxes are all tail and women are all tongue.

The North Sea will sooner be found wanting in water than a woman be at a loss for a word.

I love talking about nothing. It is the only thing I know anything about.

A foolish man tells a woman to stop talking, but a wise man tells her that her mouth is extremely beautiful when her lips are closed.

When a woman is talking to you, listen to what she says with her eyes.

As great minds have the faculty of saying a great deal in a few words, so lesser minds (women) have a talent of talking much, and saying nothing.

Wives, do as little talking as humanly possible!

They could steam up windows with their kisses, but as soon as they started using their mouths for other things—like talking—everything got so complicated.

Սակայն լռությունն անգործության ակնհայտ նշան չէ, և ոչ էլ ծավալուն խոսքը՝ հգործության կամ իշխանության: Կոմարովսկու դասական ուսումնասիրության մեջ, ուր արծարծվում է այս թեման, նկարագրվում են հարցազրույցներ, ուր կանայք ավելի շատ են խոսում իրենց ամուսիններից (Komarovsky 1962:229): Նրանք մասն աւսում են.

«ամուսինս ուրբաթախոս է» (13 կին), «նա չխոսելու կարծրացած սովորություն ունի» (162 կին), «նա շատ բան չի ասում, բայց երեխաները լսում են նրան» (353 կին): Սակայն հայտնի է, որ այս ամուսինները գերադաս դեր ունեն իրենց ընտանիքներում: Ուրեմն, ինչպես տեսնում ենք, լռությունը բոլորովին էլ անգործության նշան չէ: Այլ, ընդհակառակը, ինչպես և Սետլն է պնդում, լռակյացությունն ինքնին կարող է ուժի և հզորության գործիք լինել: «Տղամարդիկ կիրառում են լռությունը կանանց գերակայելու համար» (Sattle 1983:230):

Մեկ օրինակ է. Ջոնզի «Թռչելու վախ» վեպից (“Fear of Flying”): Տեսարան է ամուսինների միջև՝ Իսադորայի և Բեննեթի: Երկխոսությունն սկսում է Իսադորան՝ կինը:

Is. - Why do you always have to do this to me? You make me feel so lonely.

B.- That comes from you.

Is. - What do you mean it comes from me? Tonight I wanted to be happy. It's Christmas Eve. Why do you turn on me? What did I do?

Silence.

Is. - What did I do?

He looks at her as if her not knowing were another injury.

B.- Look, let's just go to sleep now. Let's just forget it.

Is. - Forget what?

He says nothing.

Is. - Forget the fact that you turned on me? Forget the fact that you are pushing me for nothing? Forget the fact that I'm lonely and cold, that it's Christmas Eve and again you've ruined it for me? Is that what you want me to forget?

B.- **I won't discuss it.**

Is. - Discuss what? What won't you discuss?

B.- Shut up! I won't have you screaming in the hotel.

Is. - I don't give a fuck what you won't have me do. I'd like to be treated civilly. I'd like you to at least do me the courtesy of telling me why you are in such a funk. And don't look at me that way...

B.- What way?

Is. - As if my not being able to read your mind were my greatest sin. I can't read your mind. I don't know why you are so mad. I can't intuit your every wish. If that's what you want in a wife you don't have it in me.

B.- I certainly don't.

Is. - Then what is it? Please tell me.

B.- I shouldn't have to.

Is. - Good god! Do you mean to tell me I'm expected to be a mind reader? Is that a kind of mothering you want?

B.- If you had any empathy for me...

Is. - But I do. God, you don't give me a chance.

B.- You tune out. You don't listen.

Is. - It was something in the movie, wasn't it?

B.- What, in the movie?

Is. - The quiz again. Do you want to quiz me like some kind of criminal? Do you have to cross-examine me? ... It was the funeral scene... The little boy looking at his dead mother. Something got you there. That was when you got depressed.

Silence.

Is. - - Well, wasn't it?

Silence.

Is. - Oh come on, Bennett, you're making me furious. Please tell me. Please.

Silence.

Is. - Tell me! (She puts her arms around him. He pulls away. She falls to the floor holding onto his pajama leg. It looks less like an embrace than like a rescue scene, she sinking, he reluctantly allowing her to cling to his leg for support.)

B.- Get up!

Is. - (Crying) Only if you **tell me**.

He jerks his leg away, **silently** going to bed.

Ընթերցողին հասկանալի է, որ Բենեթը՝ ամուսինը, կիրառում է լուրթյունը որպես զենք իր կնոջ դեմ: Յուրաքանչյուր հաջորդ մերժու-

մը ասելու, պատմելու իր կնոջը, քե ինչն է իրեն անհանգստացնում, կարծես մի հարված լինի, որ ավելի ու ավելի է ցածրացնում կնոջը, մինչև որ մա բառացիորեն հայտնվում է հատակին:

Եվ այսպես, տարբեր ուսումնասիրություններ և մոտեցումներ քննարկելով, գալիս ենք այն եզրահանգման, որ լուրջությունը և ծավալուն խոսքը (շատախոսությունը) հավասարապես կարող են լինել ինչպես անգործության, թուլության, այնպես էլ հզորության ու իշխանության գործիք: Լուրջությունը, ինչպես համաձայնության նշան է, այնպես էլ՝ արհամարհանքի: Դիտարկենք, հետևյալ օրինակը.

She unlocked the door, and called, "Michael."

I *didn't say a word* because I was still pouting and fuming. She walked into the den, and stopped when she saw me. "Are you all right?" she asked with genuine concern.

"I am fine," I said curtly.

She dropped her bag and overcoat, and walked to the sofa, where she hovered over me.

"Where have you been?" I asked.

"At the hospital."

"Of course." I took a long drink.

"I know you've had a bad day, I know all about it, Michael."

"You do?"

"Of course I do, dear."

"Then where the hell were you?"

"At the hospital, Michael."

"Nine of us held hostage for six hours by a crazy man. Eight families show up because they are somewhat concerned. We get lucky and escape, and I have to catch a ride home with my secretary."

"I couldn't be there, Michael, dear."

Silence. "Of course you couldn't. How thoughtless of me!", I **thought.**

"They made us stay at the hospital", she began. "We knew about the hostage situation, and there was a chance there could've been casualties.

It's standard procedure in that situation – they notify the hospitals, and everyone is placed on standby."

Another long drink as I tried to think of something sharp to say.

Silence again.

"I couldn't help you at your office," she continued. "I was waiting at the hospital."

I was silent for a while.

"I tried to call, dear. The phone lines were jammed. I finally got a cop, and he hung up on me."

"It was over two hours ago. Where have you been?"

"In OR. We lost a little boy in surgery; he was hit by a car."

I was silent. I could never comprehend how doctors faced so much death and pain.

"I am sorry," she said, and with that she went to the kitchen and returned with a glass of wine. We sat in the semidarkness for a while.

"Do you want to talk about it?" she asked softly.

I didn't. I really didn't.

Silence was what I wanted.

(Grisham, 1998:33-35)

Որքան էլ կիներ փորձում է համոզել ամուսնուն, որ իր գործողությունները հարկադրված են եղել՝ կապված աշխատանքի հետ, որ նրա չհանդիպելը ամուսնուն պարզապես հանգամանքների բերումով է ստացվել, և ոչ իր անտարբերության, ամուսինը չի ընդունում նրա ասածը, փորձում է նույնիսկ լռությամբ ցույց տալ, որ նա ներված չէ և արդարացումն ընդունելի չէ (թեկուզև համատեքստից հասկանալի է, որ արդարանալու ոչինչ չկար էլ):

Այժմ, ծավալուն խոսքի շրջանակներում դիտարկենք մանրամասներ փոխանակելու երևույթը, որը նույնպես ի հայտ է բերում որոշակի գեմդերային տարբերություններ:

Առօրյա կյանքին վերաբերող համեմատաբար ոչ կարևոր մանրամասներ փոխանակելը հոգատարության և մտերմության ուղերձ է պարունակում: Մանրամասները նկատելը ներգրավվածություն է ստեղծում: Տղամարդկանց շրջանում մանրամասների մեջ ներգրավ-

վելը գայրույթի պատճառ է դառնում: Ստորև ներկայացված օրինակում երևում է, որ երբ կառավարիչներից մեկը մյուսին մի քանի մամբառա՝ է ներկայացնում երրորդի կյանքից, առաջին կառավարիչը գայրանում է: Թեկուզև Բոբի ասածն աշխատանքային առումով խկապես մի քիչ տագնապալի էր, սակայն դա միևնույն է դուր չի գալիս նրան: Նա պարզապես հեռանում է առանց հետամուտ լինելու խոսակցության ավարտին և, նույնիսկ, հետևանքներին:

Bob Dexter – A bit of information now, Nikos, I think you ought to know. Carl often has lunches with Monica Kaminsky, the design manager for Rochester Electronics, our main competitor.

Nikos Takakis – Monica Kaminsky? Really? That’s something I didn’t know.

Bob – And she often phones him at work. She has long, cosy chats with him. I’ve no idea what they talk about.

Nikos – Are you saying, you mean ... you think there is something going on between them? You know ...

Bob – Mmm, I am not saying anything.

Nikos – **You don’t really like Carl, do you, Bob?**

(Market Leader)

Այստեղ տեսնում ենք և՛ գնահատական, և՛ անուղղակի խոսք, և՛ նույնիսկ կարգավիճակի հաստատում: Այսինքն, գանգատը, մամբառանքների փոխանակումը, բամբասանքը բերում են մի դեպքում մտերմության հաստատման, իսկ մյուս դեպքում՝ կարգավիճակի հաստատման: Հետաքրքրական է այլ աշխատակիցների գնահատականը նույն մարդու վերաբերյալ: Երկու կին գործառույթներ քննարկում են կառավարիչներից մեկի դրական հատկանիշները, քննադատում են մյուսին և այս ամենը նպաստում է նրանց միջև մտերմիկության, վստահության ստեղծմանը:

A – Bob Dexter’s **awful** to work for, you know. **I’d much prefer** to work for Carl Thomson.

B – **Yeah, me too.**

A – Carl is **so charming and nice** to everyone. I think he is a **great** manager.

B – Mmm. **What I like about him**, you know, **he treats** everyone the same. **He speaks** to everyone. Always **smiling and joking**. The canteen staff just **love him**, and the cleaners, too. Do you think, there is a chance his PA, Valerie, will move on – I'd love her job.

A – Maybe, they're not getting on very well, I hear.

B – Well, you never know. Wonder why Bob Dexter doesn't like Carl? Do you think he is a bit **jealous** because Carl is so popular?

A – Mmm, could be.

(Market Leader).

Տեսանք, որ վերոնշվածը գործում է մաս աշխատանքի վայրում, ինչը նույնպես բխում է կապ հաստատելու ցանկությունից: Խոսելը որևէ մեկի մասին, որ այդտեղ չէ, կամ ինչ-որ մեկի հետ, որ այդտեղ է, մտերմություն ձեռք բերելու մի եղանակ է: Բամբաստելով, մարդ համաձայնության է գալիս ինչ-որ մեկի գնահատականի հետ, սրանով իսկ ամրապնդելով փոխադարձ արժեքները և աշխարհայացքների նմանությունը:

Ասել, որ տղամարդիկ բոլորովին հետաքրքրված չեն մանրամասներով, նույնպես սխալ է: Նրանց հետաքրքրում են քաղաքական, ինչպես մասնությունների և սպորտի մանրամասները, որը զուգահեռ է կանանց հետաքրքրությանը անձնական կյանքի մանրամասների նկատմամբ:

Հարկ է նշել, որ երկու սեռի ներկայացուցիչների վերաբերմունքն էլ նույնն է այդ հարցի վերաբերյալ: Եթե նրանք տեղյակ չեն մանրամասներից, ապա հետ են մնացել կյանքից, անտեղյակ են, նույնիսկ՝ անտեսված: Սակայն հասարակական նորությունների մանրամասները իմանալու և հաղորդելու առավելությունն այն է, որ տղամարդիկ անձնապես խոցելի չեն դառնում: Նրանց փոխանակած տեղեկատվությունը կապ չունի իրենց հետ: Իսկ կանանց ամենաառաջնային խնդիրը մտերմություն հաստատելն է, այս դեպքում մանրամասներ հաղորդելն ու ստանալը շատ բարձր է գնահատվում: Եթե որևէ մանրամասի կամ անվան հիշելը հոգատարության նշան է, ապա դրանք մոռանալը կարող է դիտվել որպես հոգատարության բացակայության նշան:

Այն տպավորությունը, որ անձնական հարցերի մասին կանայք չափից ավելի ազատորեն ու շատ են խոսում, կարելի է ամփոփել մեկ բառով՝ բամբասանք: Չնայած բամբասանքը կարող է վնասարար, կործանիչ լինել, միշտ չէ, որ դա այդպես է: Մտերմություն հաստատելու գործում դա կարող է ծառայել որպես բավականին արմատական գործոն, հատկապես եթե դա ոչ թե «մեկի դեմ խոսելն է», այլ «մեկի մասին խոսելը»:

«Բամբասանք» պիտակը քննադատական լույս է սփռում այլ մարդկանց կյանքի մասին խոսելու կանանց հետաքրքրության վրա: Իրենց ընկերների հետ մյուսների կյանքից խոսելը մասամբ իրենց կյանքի մանրամասների մասին խոսելու արդյունք է: Այս մանրամասները ասեկոսե են դառնում, երբ ընկերը, ում պատմել են այդ մանրամասները, փոխանցում է մեկ ուրիշին՝ ենթադրաբար ընկերոջը: Պատմելը, թե ինչ է կատարվում քո կյանքում կամ մեկ ուրիշի կյանքում, գաղտնիքներ ասելու ավելի հասուն տարբերակն է, որը աղջիկների և կանանց մտերմության, ընկերության էությունն է:

Երբ տղամարդիկ իրենց ընկերների հետ խոսելիս քննարկում են, թե ինչ է կատարվում բիզնեսում, բորսայում, սպորտում կամ քաղաքականության մեջ, նրանք իրականում բամբասում են (թեկուզև այդպես չեն կոչում դա) այն իմաստով, որ խոսում են իրենց և այլ մարդկանց մասին: Բայց նրանք հակված են խոսել ավելի շատ քաղաքական, քան անձնական հարաբերությունների մասին, ինչպես, օրինակ, առաջընթացի կամ անկման, գումար վաստակելու ծրագրերի կամ հաստատությունների օգտակարության և այլնի մասին: Եթե, այնուամենայնիվ տղամարդիկ հիշատակում են իրենց կանանց կամ ընտանիքները, դա լինում է հակիրճ, առանց մանրամասների և առանց նախօրոք մանրակրկիտ մշակման: Եթե անդրադառնում են որևէ դժվար անձնական իրավիճակի, խոսքը գրեթե միշտ լինում է նվազագույն և մշուշոտ («դժվար էր», «ծանր անցավ» և այլն) (Tannen 1990:96-97):

Շատ անգամ հասարակությունն իր ուղղվածությամբ ավելի անհատական է դառնում. Բամբասանքը գործում է նաև հասարակական գործունեության դաշտում: Հանրային հաղորդակցության շատ

ձևեր, ինչպես, օրինակ, հեռուստատեսային լուրերը և հասարակական գործիչների մամուլ ասուլիսները, գնալով փոխում են իրենց ոճը՝ դառնալով նվազ պաշտոնական: Թվում է, թե դրանք կայանում են հանպատրաստից, նախօրոք մանրակրկիտ պատրաստված չեն: Արդյունքում, հանրության առջև հաճախ են ներողություններ հնչում կամ հրաժարականներ տրվում այն մարդկանց կողմից, ովքեր հանպատրաստից են խոսել՝ անելով այնպիսի մեկնաբանություններ, որոնք ընդունված են անհատական, բայց ոչ հասարակական խոսքում:

Սրա զարգացման մեկ այլ դաշտ է հասարակական գործիչների անձնական կյանքի հանդեպ հասարակության աճող հետաքրքրությունը: Եվ զարմանալի չէ, որ այս հետաքրքրության մի կողմը, ավելի ստույգ, արդյունքը, բամբասանքի դերն է հասարակության կյանքում:

"Washington Post" թերթի մի հոդված, որ վերնագրված է «Բամբասանքի քաղաքականությունը», նկատում է, որ թեկուզև բամբասանքը երկար ժամանակ եղել է «քաղաքականության հիմնական արտադրանքը», միայն վերջերս է այն պատրաստակամորեն հաղորդվում լրատվական միջոցներով, անկախ այն հանգամանքից, թե լրագրողը կարողացել է հաստատել դրա ճշմարտացիությունը, թե՛ ոչ: Միջադեպը, որ հանգեցրել էր վերոհիշյալ հոդվածին, այն էր, որ հրապարակվել է մի հոդված, որտեղ ենթադրվում է (ոչ հաստատվում), որ նորանշանակ դեմոկրատ խոսնակը համասեռամուլ է: "Washington Post" թերթի լրագրողը մեկնաբանում է, որ բամբասանքները՝ չարախոսությունները շատ արդյունավետ են, նույնիսկ երբ դրանք հերքվում են: Միայն դրանց առկայությունն արդեն բավական է վնաս հասցնելու համար, քանի որ շատ մարդիկ, ինչպես հայտնի է, մտածում են, որ «որտեղ ծուխ կա, այնտեղ էլ՝ կրակ»:

Իսկ ինչպե՞ս բացատրել ընթերցողների հետաքրքրությունը, որ նրանք տածում են ամեն տեսակի մանրամասների հանդեպ: Ինչո՞ւ է ընթերցողներին հետաքրքիր, թե ինչ ուտեստ է գերադասում որևէ պաշտոնյա, ինչպիսի պատտառ կա նրա աշխատասենյակում և հագարավոր այլ մանր հարցեր: Որովհետև այս մանրամասները ընթեր-

ցողներին տալիս են ներգրավվածության հաճելի զգացում: Ունենալով այս պահանջարկը, լրագրողներն իրենց հոդվածներում ներկայացնում են մամանատիպ մանրամասներ: Սրանով նրանք ինչ-որ բանի մասն են կազմում, ճիշտ այնպես, ինչպես դա կատարվում է, երբ կանայք քննարկում են իրենց և մյուսների կյանքի մանրամասները, երբ նրանք պարզապես բամբասում են: Որպես եզրահանգում մեջբերենք Ջոունսի ամփոփումը. «Կանայք հակված են անհատականացնել խոսակցությունները: Սա մի դիսկուրսային ոճ է, որ տղամարդիկ հեզմանքով սահմանում են որպես բամբասանք» (Jones 1980:75): Տղամարդիկ *դիսպոսնիս* են պահպանում հարաբերություններ և մարդկային խնդիրներ քննարկելիս՝ նվազեցնելով և հասցնելով դրանք տեսությունների և ընդհանրացումների, եզրակացնում են այլ լեզվաբաններ (Aries 1976; Steinem 1991 Swacker 1975; Tannen 1990):

Ինչպես և մանրամասներ փոխանակելը, բամբասելը, այնպես էլ դժվարությունների մասին խոսելը, կիսվելը կանանց համար մի նրբագեղ համակարգ է, որի կիրառմամբ նրանք հաստատում են իրենց զգացմունքները և ստեղծում ընդհանրության զգացում: Սա մտերմիկ գրույցի, համախոհություն հաստատելու խոսքային արարողություն է: Դու պատմում ես քո խնդրի մասին, իսկ դիմացինդ արձագանքում՝ պատմելով մի մամանատիպ խնդրի մասին, որ ինքն էլ է ունեցել: Այս արձագանքը կանանց համար կատարյալ է, քանի որ երկուսին էլ նույն հարթության վրա է պահում: Որպես օրինակ մեջբերենք մեր կողմից արդեն դիտարկված հաղորդակցության մեկ հատված միայն (խոսում են չորս գործընկերներ, ԵՊՀ դասախոսներ):

- Շատ-շատ եմ ճնշվում, որ չեմ կարողանում օգնել:
- Լավ էլի, Ան, էդպես մի ասա:
- Համ էլ, մեր բարեկամի մոտ էլ էր նույն պատմությունը ու ...
- Անցա՞վ:
- Իհարկե, անցավ:
- Էլ, չի կրկնվել, որովհետև ...
- Չէ, ի՞նչ ես ասում: Էդ տղան բանակ գնաց, եկավ: Անցած տարի ամուսնացավ, շուտով բալիկ պիտի ունենան: Էնպես, որ ...

- Մի հարևան էլ մենք ունեինք: Վայ, զանգը տվեց, բայց ասեմ, որ հիմա ամեն ինչ ուտում է, ու երևի արդեն մոռացել է, որ այդպիսի հիվանդություն է ունեցել:

Սա բնորոշ է կանանց: Ընկերուհիներից մեկը պատմում է այլ ընտանիքի մասին, որտեղ նմանատիպ հիվանդություն է եղել, և նշում դրա հաջող ավարտի մասին: Իհարկե, սա քաջալերման եղանակ է: Կանայք հաճախ են դիմում այս ռազմավարությանը: Իսկ տղամարդիկ նման դեպքերում սովորաբար խնդրի լուծում են առաջարկում: Եթե կանայք բարկանում են, որ տղամարդիկ նմանատիպ խնդիր չեն արժարժում, ապա տղամարդիկ՝ ընդհակառակը, բարկանում են, երբ լուծման եղանակի փոխարեն լսում են նույնպիսի մի դժվարության մասին: Հետաքրքիրն այն է, որ եթե լուծվում է մի խնդիր, ապա անպայման առաջ է գալիս մեկ այլը, քանի որ **դժվարությունների մասին խոսելը** կանանց միջև մտերմություն ստեղծելու ևս մի ուղի է:

Տղամարդիկ իրենց բնությով խնդիր լուծող են, դժվարությունները հաղթահարող, այնպես որ բողոքը կամ դժվարությունը նրանց համար մարտահրավեր է: Խնդիր լուծելը կամ կարգավորելը նրանց մոտ արտահայտված է խոսքի միջոցով (խոսքային **ուղեք**), այնինչ կանանց մեծ մասի համար, ովքեր գանգատվում են ընկերների շրջապատում կամ աշխատանքի վայրում, գլխավորը ուղերձը չէ: **Մեղադրանքներ** է էական. դժվարություններ ներկայացնողը հայցում, ակնկալում է **ընթերցման խոսք** (հասկանում են, ինչպես ես զգում...) կամ **նմանարիպ գանգալ** (ես նույնպես այդ ապրումներն ունեցա, երբ անցած տարի ինձ հետ էլ նման դեպք կատարվեց...): Այլ կերպ ասած, գանգատի խոսքը նպատակաուղղված է փոխըմբռնման ու կապի ամրապնդմանը: Այն պարունակում է հետևյալ թաքնված իմաստը. «Մենք նույնն ենք, դու մենակ չես»: Եվ, բնականաբար, տղամարդկանց կողմից լուծում առաջարկելու պատրաստակամությունը նույնպես ընկալում են որպես մետատղերձ, սակայն այս ան-

գամ այլ իմաստ ունեցող. «Մենք մույնը չենք: Դու խնդիրներ ունես, իսկ ես՝ լուծումները»¹⁵:

Մոտեցումը գրեթե մույնն է գաղտնիքների ասելու դեպքում: Գաղտնիքներն ասելը ոչ միայն ընկերության վկայություն է, այլ ընկերական հարաբերություններ է ստեղծում, երբ ունկնդիրը արձագանքում է ակնկալված եղանակով:

Հետաքրքրական է նաև Գավրուսևայի տեսակետը, որին նա համգել է վերլուծելով մի քանի խոսակցություններ (Gavruseva 1995:22): Հեղինակի առանցքային միտքը զանգատի *հրկնակի նշանակությունն է*: Աշխատանքի վայրում իրավիճակի մասին զանգատը կարող է ընկալվել որպես կապ հաստատելու միջոց, մանավանդ, մյուս կարգավիճակ ունեցող մարդկանց միջև: Բայց մյուս զանգատը կարող է նաև բառացի ընկալվել: Ասենք, եթե զանգատն ուղղված է ղեկավարին, դա կարող է դիտվել կա՛մ որպես քայլեր ձեռնարկելու առաջարկ, կա՛մ ոչ բացահայտ քննադատություն:

C = Customer, E = Employee (women)

C – I’m calling because I went into one of your shops this morning to look at some phones. I really have to complain about one of your sales staff.

E – Oh dear, what happened?

C – They were on me as soon as I got into the shop. I don’t know if they’re on commission or not but they really pounced on me.

E – Oh?

C – And didn’t listen to me at all. They seemed to be pushing a particular package which was far too expensive and not suitable at all. I’m a pensioner, I have to be really careful with my money.

E – I quite understand. Sorry you felt you’re being hassled. Which branch was it?

¹⁵ Փոխըմբռնումը սիմետրիկ, երկկողմանի հարաբերություն է, և այս սիմետրիկությունը նպաստում է համայնական, ընդհանրական զգացողությանը: Իսկ խորհուրդ տալը ոչ-սիմետրիկ է: Այն սահմանում է խորհրդատուին որպես ավելի գիտուն, ավելի խելամիտ, ավելի հավասարակշռված, մի խոսքով, գոնե մեկ աստիճան ավելի բարձր, գերակա: Իսկ սա, ինչպես տեսանք, նպաստում է օտարացմանը, հեռանալուն (distance effect) (Tannen 1990:49):

C – Your main branch.

E – Do you remember who served you?

C – Yes, but I don't want to say.

E – Well, if you want me to take it seriously, we need to know who was at fault.

C – Mmm, in my opinion, you ought to look into your training methods. It's just not good enough.

Այս գանգատ-բողոքն ունի վերոհիշյալ երկու նշանակությունները, և՛ քայլեր ձեռնարկելու առաջարկ, և՛ ոչ բացահայտ քննադատություն: Սակայն, հետաքրքիր է, որ գրուցակիցը չի նշում ոչ մեկի անունը, չի ցանկանում, որ աշխատողներից որևէ մեկը պատժվի կամ նկատողություն ստանա հաճախորդի վրա ճնշում գործադրելու կամ թոշակառուին անպատեհ ծառայության փաթեթ առաջարկելու համար:

Վերը նշված համատեքստում կարող է թվալ, որ ընդհարումը, բախումը մտերմության և կապվածության հակառակ կողմն է: Հաշվի առնելով այն ամենը, ինչ ասվել է կանանց և տղամարդկանց ոճերի մասին, կարելի է պնդել, որ տղամարդիկ մրցակցային ջիղ ունեն և հակված են բախումնային իրավիճակների, մինչդեռ կանայք համագործակցող են և հակված են մտերմության և նվիրվածության: Սակայն բախման, ընդհարման մեջ լինելը նշանակում է մեկը մյուսի հետ ներգրավված լինել: Ինչպես բազմիցս նշվել է, կանայք շատ ավելի լավ են զգում, երբ հաղորդակցվում են կապվածություն ստեղծելու համար, մինչդեռ տղամարդիկ հաղորդակցվում են ինքնաբացահայտման, իրենց ներկայացնելու համար: Սակայն երբ ինքնաբացահայտումը փոխադարձ պայքարի մասն է կազմում, այն նույնպես կապի, ներգրավվածության մի տեսակ է: Դիտարկենք օրինակը: Ընկերության երեք տնօրեններ քննարկում են կառավարչի հետ կապված խնդիր:

John – Ok, we agree then, we know Louisa has a drink problem, but we don't know why. Anyway her drinking is definitely affecting her work...

Claire – and her relations with staff.

Nikos – Yes, so what are we going to do about it? In my opinion there are several ways we could deal with this.

John – Oh yes?

Nikos – We could have a talk with her and suggest she gets some professional help or we could do nothing and hope the problem goes away. Having said this, I think we should give her a verbal warning.

John – I think it's a ...

Claire – ... a serious matter. Mmm, let's look at the pros and cons of giving her a verbal warning...

Nikos – And?

Claire – I agree with you, but let's look at this from a different angle. We don't want to make a problem worse, do we? So, how about this? It might be worth asking a friend to have a quiet chat with her. It could help a lot, I think ...

John – The drink problem could get worse.

Claire – But in time we may find she solves her personal problems. Who knows ...

Nikos – Ok then, we've looked at all the options. And we agree, I think. The best way forward is to advise her to get professional help.

John – Right. It's decided. So the next thing to do is to contact out medical officer. He'll give us some suitable names...

Ակնհայտ է, որ Բլերը սկզբում աջակցում է Ջոնին՝ շարունակելով հաստատելով նրա խոսքը: Երբ Նիկոսն է հայտարարում, որ կա խնդրի լուծման մի քանի եղանակ, Ջոնը տարակուսանքով է մոտենում դրան, հեզմունք է. «Օ, իսկապե՞ս»: Սա արդեն մարտահրավեր է, որը հեշտությամբ ընդունվում է խոսակցի՝ Նիկոսի կողմից: Սակայն, ավելի ուշ Նիկոսն է համոզմանում Բլերին, երբ նա առաջարկում է քննարկել բանավոր գգուշացման խնդիրը: Սակայն, վերջինս, չի զիջում և ավարտին է հասցնում իր առաջարկը՝ խնդրել մի մտերմիկ մարդու խոսել Լուիզայի հետ: Ջրուցակիցները գնալով էլ ավելի են ներգրավվում քննարկման մեջ, պարբերաբար մարտահրավեր նետելով միմյանց: Վերջում հասկանալի է դառնում, որ Ջոնը առաջ է քաշում իր տարբերակը, որն ինքնին տարաձայնության արտահայտում

է: Ինչևէ, տեղի է ունեցել հաղորդակցում, քննարկում և կա մաս որոշում:

Ուրեմն, բախումը, ընդհարումը կարող է արժևորվել մաս որպես միմյանց հետ ներգրավվածություն ստեղծելու միջոց: Շատ կանանց համար ընդհարումը կապի սպառնալիք է, որից ամեն զնով պետք է խուսափել, և նրանք գերադասում են վեճերը հարթել առանց ուղղակի բախման: Բայց տղամարդկանց մեծ մասի համար բախումը կարգավիճակ հաստատելու, ձեռք բերելու անհրաժեշտ միջոց է, ուրեմն այն ընդունելի է, դրան ձգտում են, սպասում:

Խոցելի տղամարդիկ և կանայք, ովքեր բախման գոհ են դառնում, նման ձևով են ընկալում այն, վախենալով ուժեղից: Բայց վարվելակերպի եղանակները տարբեր են երկու սեռերի ներկայացուցիչների մոտ, ուրեմն նրանք իրենց տարբեր ձևերով են դրսևորում: Տղամարդկանցից առավել, կանայք սովոր են կոծկել իրենց բարկությունը: Նրանք մաս հմուտ ձևով կարող են մերժել: Եվ, քանի որ նրանք մաս մերժված լինելու փորձ ունեն և վախ դրա հանդեպ, ապա ավելի հակված են բարկությունը թաքցնելու, սակայն արտահայտելու վիրավորանքի զգացումը: Կանանց մոտ ընդունված են մխիթարումն ու սրտապնդումը: Բացի այդ, արտահայտված բարկությունը կարող է հակադարձ բարկություն առաջ բերել: Ոչ այնքան վախենալով մյուսների իշխանությունից, որքան ժխտված, չընդունված լինելուց, մաս պաշտպանության կարիք զգալով, կանայք ավելի հակված են փաղաքշանքով զսպել, բարիացնել իրենց «ախտանին» և օգնություն ստանալ: Նրանք ձգտում են սիրված լինելուն: Բավականին երկիմաստ և պարադոքսալին է այն, որ թույլը ձգտում է ինքն իրեն խրախուսել՝ արտահայտելով իր կախվածությունը:

Հարկ է մաս դիտարկել «Let's» կառույցով ասույթների գործածությունը: Այս կառույցը օգտագործվում է առավելապես կանանց կողմից, և դրա հիմնական նպատակը բախումից խուսափելն է: Let's-ը մի կառույց է, որի միջոցով մյուսներին անել են տալիս այն, ինչ ուզում են, որ արվի: Վերոհիշյալ օրինակում տեսանք դրա կիրառությունը:

Claire – ... let's look at the pros and cons of giving her a verbal warning...

Գոյություն ունեն տարբերություններ տղաների ու աղջիկների բացարձակապես տարբեր սոցիալական կառույցների միջև: Այն ստորակարգային հասարակության մեջ, որում գտնվում են երիտասարդ տղաներն ու տղամարդիկ (քաջ զգալով դա), կարգավիճակը ձեռք է բերվում ասելու միջոցով, թե մյուսներն ինչ անեն և/ կամ ընդդիմանալով մյուսների ասածին: Բայց աղջիկներն ու կանայք իրենց զգում են մի հանրության մեջ, որտեղ ընդհարումը սպառնալիք է, ուրեմն ամեն ինչ արվում է դրանից խուսափելու համար: Ուստիև վերջիններս հրահանգները ձևակերպում են որպես խնդրանք, առաջարկ, և դիմացինն էլ տեղյակ լինելով այս միջոցին, կատարում է պահանջվածը: Իգական սեռի ներկայացուցիչները սկզբունքորեն չեն ընդդիմանում մյուսների պահանջներին՝ սովոր չլինելով, որ վերջինները կարող են կոտրել իրենց կամքը պարզապես դժմանալ կարգավիճակին հասնելու համար, ուստի սկզբունքորեն չեն ակնկալում, որ մյուսները կընդդիմանան իրենց «պահանջներին», խնդրանքներին: Ոչ թե կանայք չեն ուզում, որ իրենց ասածով լինի, այլ չեն ուզում, որ դա ձեռք բերվի ընդհարման գնով:

Շատերի կողմից վիճաբանությունը դիտվում է որպես մտերմության հաճելի նշան: Դ. Շիֆրինն ուսումնասիրել է խոսակցությունները ցածր և միջին խավի հրեական ծագում ունեցող տղամարդկանց և կանանց միջև Ֆիլադելֆիայում և պարզել, որ ընկերական բանավեճը ընկերությունը պահպանելու, վայելելու և ամրապնդելու ամենահիմնական եղանակն է (Schiffrin 1984:311): Լեզվաբան Հելիոլի Բարնիսը, որ ծնվել և մեծացել է Գերմանիայում, նույնը տեսնում է գերմանացիների մոտ, ովքեր հաճույքով ներգրավվում են հակասություններով լի ինտելեկտուալ բանավեճերի մեջ քաղաքական և կրոնական թեմաներով: Նա մաս նշում է, որ միջմշակութային շփման ժամանակ, սա բավականին բացասական հետևանքներ է ունենում: Գերմանացի ուսանողները՝ փորձելով ցույց տալ իրենց մտերմությունը ամերիկացի ուսանողների հետ, բուռն բանավեճ են մախաձեռնում ամերիկյան արտաքին քաղաքականության մասին: Իսկ ամերիկացիները, որոնք

հակված են մտածելու, որ նորաստեղծ ծանոթների հետ պատշաճ չէ վիճաբանելը, պարզապես չեն մասնակցում այդ վեճին: Գերմանացի ուսանողները եզրակացնում են, որ ամերիկացիները անտեղյակ ու անտարբեր են, մինչդեռ ամերիկացիները հեռանում են, հավատացած լինելով, որ գերմանացիները ռազմատենչ են և անքաղաքավարի (Byrnes 1986:201):

Զ. Կակավան ցույց է տվել, որ ժամանակակից հույների հաղորդակցումը նույնպես բնութագրվում է որպես բարեկամական վիճաբանություն: Չայնագրելով մի խոսակցություն ճաշի ժամանակ, նա բացահայտել է, որ հույն ընտանիքի անդամները հաճույք են ստանում միմյանց հակասելուց (Kakava 1993:187): Իսկ մեկ այլ ուսումնասիրության արդյունքում Թանենն ու Կակավան ցույց են տալիս, որ հույն ժամանակակից գրուցակիցները պարբերաբար արտահայտում են իրենց անհամաձայնությունը, երբ իրականում համաձայն են, ընդ որում այդ ժամանակ գործածում են անունների փաղաքշական ձևերը և այլ փաղաքշական բառեր և արտահայտություններ (որոնք նույնպես մտերմություն ստեղծելու միջոցներ են) (Kakava 1993:193): Այս վարքագիծն ու խոսելաոճը բնորոշ են նաև հայ ազգին:

Վիճաբանությունն ինչպես մտերմության նշան է, այնպես էլ յուրահատուկ մի խաղ: Ջեին Ֆրենկը վերլուծել է հրեա մի գույզի երկխոսություն, որտեղ նրանք ընտրել են հակառակ բևեռներ և հակադիր դիրքորոշում՝ կապված մի սոցիալական իրավիճակի հետ: Բայց նրանք չեն կռվում, այլ ներկայացնում են հասարակական մի հակաճառում, խոսքակռվի մի տեսակ, որտեղ երկու ընդդիմախոսներն էլ միևնույն դաշտից են (Frank 1989:46-48)¹⁶:

¹⁶ Վիճաբանական «խաղի» մի հետաքրքիր օրինակ էլ ներկայացնում է Թանենը (Tannen 1990:62-68), որ բազմիցս ակամատես է եղել հույն տղամարդկանց բախմանը: Երբ երկու տղամարդ հասարակության մեջ ներգրավվում են վիճաբանության մեջ, նրանք սկսում են բարձր բոլավել իրար վրա, և հետո նրանցից մեկը բարձրացնում է իր ձեռքը, որպեսզի ֆիզիկապես հարձակում գործի դիմացիին վրա: Սա բավականին ընդունված մարտավարություն է, որ տեղի է ունենում վիճաբանությունների ընթացքում: Սակայն, առանց բացառության, նախքան նա առաջ կտանի իր ձեռքը դեպի բշտամու դեմքը, ցանկացած մեկը, ով մոտակայքում է գտնվում, բռնում է նրա պարզած ձեռքը և հետ պահում հարվածելուց: Հենց այն, որ ինչ-որ մեկը կզսպի նրան, հնարավոր է դարձնում նրա ձեռքի մեկնումը, որը հստակ ուղերձ, քաբնված իմաստ է

Ուսումնասիրությունները հետևողականորեն բացահայտել են, որ արական սեռի խոսակիցները շատ ավելի հակված են առերեսման, որն իրականացնում են վիճելով, հրամաններ արձակելով և հակառակ տեսակետներ արտահայտելով (իննց վիճաբանության նպատակով), մինչդեռ կանայք հակված են խուսափելու հակադրվելուց՝ համաձայնության, քաջալերանքի միջոցով, ինչպես նաև առաջարկություններ անելով՝ հրամաններ տալու փոխարեն:

Ուոլտեր Օնգը վիճարկում է, որ «ըմբոստանալը»՝ կռվելու հակվածությունը, համընդհանուր երևույթ է, սակայն բացահայտ և արտահայտված ըմբոստացումը տղամարդկանց կյանքի ավելի զգալի տարրն է կազմում, քան կանանց: Այլ կերպ ասած, կանայք կարող են կռվել, բայց տղամարդիկ հակված են հաճախ կռվելու բացահայտորեն, ինչպես նաև՝ հաճույքի համար (Ong 1981:80-84):

Չնայած կանայք խուսափում են տղամարդկանց նման ագրեսիվ լինելուց, և նրանք, ովքեր ավելի հաստատակամորեն են արտահայտվում, կարող են ավելի բացասական արձագանք ստանալ, քան նման ձևով խոսող տղամարդիկ, սակայն շատ կանայք, ովքեր բարձր պաշտոն են զբաղացնում կամ բիզնեսով են զբաղվում, աստիճանաբար հարմարեցնում են իրենց խոսելաճը այն աշխարհի նորմերին, որում ապրում և աշխատում են: Այս նորմերը մեծապես տարբերվում են նրանց ծանոթ և ընդունելի նորմերից: Սակայն այն նոր խոսելաճը կիրառելն էլ իր հետևանքներն է ունենում տանը, հասարակության մեջ, որտեղ հստակ մոտեցում կա կանանց և տղամարդկանց խոսքին ու հաղորդակցային առանձնահատկություններին:

հաղորդում թշնամուն. «Բավականաչափ բարկացած եմ, որպեսզի քեզ խփեմ»: Եթե ոչ մեկը չկանխի, չգալի նրան, և նրան հաջողվի հարվածել մյուս մարդուն, ապա նա նույնքան կզարմանա ու կապշի, որքան և նրա գոհը: Ուղերձը ձեռքը մեկնելու և թափահարելու մեջ է, և ոչ թե հարձակման: Նմանապես, շփման ժամանակ, հաղորդակցվելիս ոմանք հաճախ բարձր են խոսում, նրանց խոսքը ծավալում է, ընթացքը՝ արագ, և սա դրդում է մյուսներին էլ նման կերպ խոսել: Այստեղ նույն «խաղն» է. գրուցակիցը մտադրություն չունի հարթակը գրավելու, այլ լիարժեքորեն ակնկալում է, որ մյուսները կանեն դա, կգերազանցեն նրան:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում հանգել ենք մի շարք եզրակացությունների.

Արական և իգական սեռի ներկայացուցիչների սոցիալական դերի և գնահատման հարցում տիրում է այն մոտեցումը, որն արտացոլում է արական սեռի գերակայությունը իգական սեռի հանդեպ: Դա արտացոլվում է, ի թիվս այլ երևույթների, անգլերենում դիմելաձևերի տարբերակված ընտրության մեջ:

Արական և իգական սեռի ներկայացուցիչներից ակնկալում և ընդունում են հաղորդակցվելու միանգամայն տարբեր եղանակներ: Կանայք օգտագործում և լսում են կապի և մտերմության լեզուն, մինչդեռ տղամարդիկ՝ կարգավիճակի և անկախության լեզուն: Այսպիսով, կին-տղամարդ հաղորդակցումը կարելի է դիտարկել որպես միջնակության ինտերմիդիում: Կանայք ծախսում են հաղորդակցության սկզբնական ժամանակը մտերմություն ձեռք բերելու վրա՝ ինքնաբացահայտման միջոցով: Տղամարդիկ՝ ստորակարգության որ աստիճանի վրա է գտնվում մեկը մյուսի համեմատ: Գիտելիքների և իմացության ցուցադրումն ավելի կարևոր է տղամարդկանց համար: Կանանց համար հաղորդակցման լեզուն, առաջին հերթին, փոխհարաբերության լեզուն է, կապեր հաստատելու և հարաբերությունների ստեղծման բանակցային միջոց: Տղամարդկանց համար՝ անկախություն պահպանելու միջոց է, որը նաև ծառայում է ստորակարգային սոցիալական համակարգում բարձր կարգավիճակի համար բանակցելուն, ինչպես նաև այդ կարգավիճակը պահպանելուն:

Խոսքային իրավիճակներում խնդիրները ծագում են, որովհետև յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչ պարբերաբար կամ մշտապես սխալ է ըմբռնում մյուսի բառային և ոչ բառային ուղերձները: Կանայք և տղամարդիկ տարբեր ձևով են ընկալում և մեկնաբանում լեզ-

վական ռազմավարությունները և միջոցները այս կամ այն թեման քննարկելիս:

Խոսքի ուղղակիությունն ու անուղղակիությունը կարող է շփոթմունք և թյուրմբռնում առաջ բերել, երբ գրուցակիցներն այն գործածելու տարբեր եղանակներ ունեն: Ինչպես ցույց տվեց մեր ուսումնասիրությունը, անգլախոս կանայք այնուամենայնիվ ավելի անուղղակիորեն են խոսում համեմատած տղամարդկանց հետ:

Ե՛վ կանայք, և՛ տղամարդիկ աշխատանքի ժամանակ խոսում են տարբեր թեմաների շուրջ, սակայն նրանց զրույցի թեմաները և զրույցը վարելու ձևերը տարբերվում են միմյանցից: Տղամարդկանց աշխատանքային խոսքում կիրառվում են արտահայտություններ՝ կազմված, վերցված ռազմական և սպորտային բառապաշարից:

Կեղտոտ խոսքը, աշխատանքը ցուցադրելու միտումը, որոշակի դերանունների կիրառումը աշխատանքը ներկայացնելիս, բնորոշ են տղամարդուն: Կանայք միտված են կոծկելու իրենց աշխատանքը:

Պատշաճ կառավարման հմտությունները արական սեռի ներկայացուցիչներին բնորոշ հմտություններ են: Դրանք ընդգծում են վարքի գերակա, հաստատակամ, վճռական կողմերը, ի տարբերություն կանանց, որոնք պատրաստակամորեն ընդունում են քիմային վարքը, որն իր բնույթով աջակցություն է արտահայտում:

Ի տարբերություն կանանց, տղամարդիկ բոլորովին հակված չեն ուղղություն կամ տեղեկություն հարցնելու: Տեղեկատվություն, օգնություն, ուղղություն տալիս են նրանք, ովքեր ավելի բարձր աստիճանի վրա են կանգնած:

Հարցերը կարող են կիրառվել, ընկալվել որպես հետաքրքրվածություն կամ անհամաձայնություն արտահայտելու միջոց: Դրանք նաև կոծկում են նվազ ընդունելի խոսքային գործողությունները: Այս հարթությունն ավելի բնորոշ է իգական սեռի ներկայացուցիչներին:

Կանայք շատ ավելի մեծ դժվարություններ են ունենում զրույցը շարունակելու գործում, քան տղամարդիկ: Երբ կանայք ու տղամարդիկ միասին են զրուցում խառը խմբում, նրանք փորձում են խուսափել յուրաքանչյուր խմբին բնորոշ թեմաներից և ընտրում են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաներ: Սակայն այս թեմա-

ները քննարկելիս, նրանք հետևում են միայն արական սեռի ներկայացուցիչներին բնորոշ ոճին:

Ե՛վ կանայք, և՛ տղամարդիկ զիջումներ են անում, ուղղումներ մտցնում իրենց խոսքում, սակայն կանայք դա անում են շատ ավելի հաճախ:

Ընդհատումը կարելի է դիտել որպես միաժամանակյա խոսք, «համագործակցող զուգահեռ խոսք»՝ ցույց տալու օժանդակող և ոչ թե խոչընդոտող խոսքը, ոչ թե գերակայությունը, այլ մասնակցությունը, ոչ թե գոյությունը, իշխանությունը, այլ՝ համախոհությունը: Ասվածը չի նշանակում, որ ընդհատումը չի կարելի կիրառել գերակայելու համար, սակայն այս դեպքում դա պետք է լինի մտադրված և ընդունվի դիմացինի կողմից որպես այդպիսին:

Չուգահեռ խոսքը կառուցողական է. այն ներգրավվածություն, մասնակցություն արտահայտելու միջոց է, մտերմիկ կապ ստեղծելու եղանակ:

Շատախոսությունը բոլորովին էլ կանանց բնորոշ գիծ չէ: Լռությունը և ծավալուն խոսքը հավասարապես կարող են լինել ինչպես անգործյան, թուլության, այնպես էլ հզորության ու իշխանության գործիք: Լռությունը, ինչպես համաձայնության նշան է, այնպես էլ՝ արհամարհանքի: Կանանց շատախոսությունն ու տղամարդկանց սակավախոսությունը կապված է այն հանգամանքի հետ, որ տղամարդիկ ավելի հակված են հանրային խոսքին, մինչդեռ կանայք՝ միջանձնյա, մտերմիկ:

Մանրամասներ փոխանակելը հոգատարության և մտերմության ուղերձ է պարունակում: Մանրամասները նկատելը ներգրավվածություն է ստեղծում: Տղամարդկանց շրջանում սա զայրույթի պատճառ է դառնում:

Մտերմություն հաստատելու գործում բամբասանքը կարող է ծառայել որպես բավականին արմատական գործոն, հատկապես եթե դա ոչ թե «մեկի դեմ», այլ «մեկի մասին խոսելն» է:

Դժվարությունների մասին խոսելը ստեղծում է ընդհանրության զգացում: Սա համախոհություն հաստատելու խոսքային արարողություն է: Բոլորը կամ անախորժությունների մասին խոսքը տղա-

մարդկանց համար մարտահրավեր է: Իսկ կանանց համար գանգատի խոսքը նպատակաուղղված է փոխըմբռնման ու կապի ամրապնդմանը: Մոտեցումը նույնն է գաղտնիքների ասելու դեպքում:

Ընդհարումը կամ բախումը կարող են ինչպես մտերմության և կապվածության հակառակ կողմը լինել, այնպես էլ կարող են արժևորվել որպես միմյանց հետ ներգրավվածություն ստեղծելու միջոց: Կանանց համար ընդհարումը կապի սպառնալիք է, տղամարդկանց համար բախումը կարգավիճակ հաստատելու, ձեռք բերելու անհրաժեշտ միջոց է:

Այս ամենը մեզ բերել է այն ընդհանուր և կարևոր եզրահանգման, որ անգլերենում արական և իգական սեռի ներկայացուցիչների խոսքը բավականին տարբեր է՝ կապված բազմաբնույթ գործոնների հետ, ինչը և որոշակիորեն համահունչ է հայերեն լեզվին և խոսքին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մունիր Ալ Բալեա. «Ալ Ուաթան» («Մեր երկիրը»). Սիրիայի արաբական հանրապետություն, Դարա. 2007.
2. Брутян Л. Г., Язык и гендер. Ереван: Издательство «Международная академия философии», 2008, 150 с.
3. Касумова М. Ю., Лингвокультурологические аспекты гендерных репрезентаций // Русский язык: исторические судьбы и современность. Труды и материалы II Международного конгресса исследователей русского языка. М., 2004, pp. 4-14.
4. Плунгян В. А., Рецензия на сборник: Sprachwandel und feministische Sprachpolitik: Intern. Perspektiven. Hellinger M. (Hrsg.). – Opladen: Westdt. Verl., 1985. // РЖ. Языкознание. М., серия 6, No. 2, 1986, pp.212-223.
5. Al-Bainy H., Forms of Address in Arabic: A Sociolinguistic and Translational Perspective. Damascus: Yarmouk University Press, 1996, pp. 80.
6. Baldacci D., Divine Justice. New York: Hachette Book Group, 2008, pp. 545.
7. Bardwick M., Judith. In Transition: how feminism, sexual liberation, and the search for self-fulfillment have altered our lives. New York: Holt, Rinehart and Winston, 1989, pp. 203.
8. Barkalow C. et al., In The Men's House: An Inside Account of Life in the Army. New York: Poseidon, 1990, pp. 144.
9. Befu H., An Ethnography of Dinner Entertainment in Japan. Japanese Culture and Behavior. Honolulu: University of Hawaii Press, 1986, pp. 108-120.
10. Bohn E. and Stutman R., Sex Role Differences in the Relational Control Dimension of Diadic Interaction // *Women's Studies in Communication*. No. 6, 1983, pp. 96-104.

11. Bosmajian H., Tha Language of White Racism. *College English*, No. 31, 1969, pp. 263-272.
12. Byrnes H., Interactional Style in German and American Conversations. Barington, *Text No.6*, 1986, pp.189-206.
13. Cameron D., Not gender difference but the difference gender makes: the politics of explaining sex differences in language. Proceedings of the Thoms Symposium on Language and Gender // *International Journal of the Sociology of Language*, No.94, 1992, pp. 13-26.
14. Carey K., Secrets of the Opposite Sex. Totowa, NJ: Adams and Co., 2003.
15. Claes M., Women, men and management styles // *International Labour Review*, No.4, 1999, pp. 431-446.
16. Clancy P., The Acquisition of Communicative Style in Japanese. Language Acquisition and Socialization across Cultures. Cambridge: Cambridge University Press, 1986, pp. 213-250.
17. Coates J., Women, Men and Language. London & New York: Longman, 1986, pp. 245.
18. Condrary J., Women's Talk in a Women's studies Reading and Discussion Group. A Discriptive study of Cooperation and Competition. Indiana University of Pennsylvania, 1991.
19. Corbett G. & Comrie B., The Slavonic Languages. London: Routledge, 1993.
20. Cotton D., Falvey D., Kent S., Market Leader (upper intermediate). England: Pearson Education Limited, Edingurgh Date, Harlow, 2001, pp. 176.
21. Eakins B. and Eakins R., Verbal Turn-Taking and Exchanges in Faculty Dialogue // *Sociology of the Languages of American Women. Linguistics*, Trinity University: San Antonio, 1976, pp. 53-62.
22. Edelsky C., Who's Got the Floor? // *Language in Society* N10, 1981, pp.15-32.
23. Esposito A., Sex Differences in Children's Conversations // *Language and Speech*, No. 22, 1979, pp. 213-220.
24. Fishman P., The Work Women Do. Boston: Heinle and Heinle Publishers, 1983, pp. 167.

25. Fishman P., Interaction: the work women do // *Language, Gender and Society*, Massachusetts: Newbury House Publishers, 1983, pp. 89-101.
26. Frank J., Communicating by Pairs: Agreeing and disagreeing among Married Couples. MS: Georgetown University, 1989, pp. 189.
27. Gavrusheva L., Constructing Interactional asymmetry in Employer-Employee Discourse. Paper presented at the Annual Meeting of the Linguistic Society in America. New Orleans: January 5-6, 1995, pp. 14.
28. Gleason J. and Grief E., Men's Speech to Children // *Language, Gender and Society*, ed. by Thorne, B. Rowley. MA: Newbury House, 1978, pp. 149-158.
29. Grisham J., The Street Lawyer. Belfry Holdings, Inc., New York, 1998, pp. 455.
30. Gray J., Men are from Mars, Women are from Venus. A Practical Guide for Improving Communication. London: Thorsons, 1998, pp. 286.
31. Gumperz J., Discourse Strategies. Cambridge: Cambridge University Press, 1982, pp. 240.
32. Haji-Hassan I., Language, Gender and Power: Analysis of Theme and Topic Management in Arabic Conversational Discourse // A Ph.D thesis: supervisor-Roger W. Shuy. Georgetown University, 1999, pp. 479.
33. Harada K., Gender in Japanese Hierarchical Settings. Georgetown: Georgetown University Linguistic Department, 1993, pp. 167.
34. Haru Y., American and Japanese Topic Management Strategies in Business Meetings // Ph.D. dissertation. Georgetown University, 1989, pp. 188.
35. Haru Y., American and Japanese Business Discourse: A Comparison of Interactional Styles. Norwood: NJ: Ablex, 1992, pp. 149.
36. Haru Y., Different Games, Different Rules: Why Americans and Japanese Misunderstand Each Other. Kindle Edition, 2002, pp. 202.
37. Hayashi R., Simultaneous Talk from the Perspective of Floor Management of English and Japanese Speakers // *World Englishes*, N73, 1988, pp. 151-161.
38. Holmes J., Women's Talk: the Question of Sociolinguistic Universals // *Language and gender*: Oxford: Blackwell, 1998, pp. 131-150.

39. Hornyak J., In preparation. Shifting between Personal and Professional Frames in Office Discourse // Ph.D. dissertation, Georgetown University Linguistics Department, 2004, pp. 198.

40. Ilias A., Theories of Translation: Theoretical Issues and Practical Implications. University of Mosul: Mosul University Press, 1989.

41. Jung C., Gender Stereotypes and Sexual Archetypes. <http://www.friesian.com/gender.htm>, 2003.

42. Kakava Ch., Aggravated Corrections as Disagreement in Casual Greek Conversations // *Proceedings of the First Annual Symposium about Language and Society. Linguistic Forum*. Texas: Austin, 1993, pp. 187-195.

43. Kalcik S., Personal Narratives in Women's Rap Groups // *Journal of American Folklore* No 88. Austin: University of Texas Press, 1975, pp. 3-11.

44. Keenan E. & Schieffelin B., Topic as a Discourse Notion // *Subject and Topic*. New York: Academic, 1975, pp. 125-143.

45. Kipers P., Gender and Topic // *Language in Society*. New York: St. Martin's Press, 1987, pp. 543-557.

46. Klein V., The Feminine Character. History of an Ideology. London: Kegan Paul, Trench, Trubner & Co., LTD. Broadway House, 1968, pp. 228.

47. Komarovskiy M., Blue-Collar Marriage. New York: Vintage, 1962, pp. 393.

48. Lakoff R., Language and Women's Place. New York: *Language and Style* No. 10, 1977, pp. 222-247.

49. Lebra T., The Cultural Significance of Silence in Japanese Communication // *Multilingua* No 6, 1987, pp. 343-357.

50. Leffler A., Gillespie L., Conaty C., The Effects of Status Differentiation on Nonverbal Behavior // *Social Psychology Quarterly* No. 45/3, 1982, 153-161.

51. Linde Ch., The Use of Narrative in the Negotiation of Values: Group Identity in an Airborne Police Agency. Paper presented at the annual meeting of the Linguistic Society of America, New Orleans: Barretta, 1988, pp. 24.

52. Loutfi M., Women, Gender and Work: What is Equality and How Do We Get There? Geneva: International Labour Office, 2001, pp. 565.

53. Maccoby E., Gender and Relationships. A Developmental Account // *American Psychologist* No. 45:4, 1990, pp. 513-530.

54. Maltz D. and Borker R., A Cultural Approach to Male-Female Miscommunication // *Language and Social Identity*, ed. by John Gumperz. Cambridge: Cambridge University Press, 1982, pp. 196-216.
55. Mead M. End Linkage, A Tool for Cross-Cultural Analysis // *About Bateson*, ed. by John Brockman. New York: Dutton, 1989, pp. 171-231.
56. Moore A., Language and Gender, at <http://www.universalteacher.org.uk/lang/gender.htm>, 2003.
57. Murphy S., Saying Your Piece: The Role of Topic Management in Conversation. Ph.D. dissertation. University of Minnesota, 1990, pp. 514.
58. Nilsen A., Sexism in Children's Books and Elementary Teaching Materials, ed. by Nilsen A., Bosmajian H., Gershun H., and Stanley J. // *Sexism and Language*. Urbana, Ill.: National Council of Teachers of English, 1990, pp. 161-179.
59. Ong W., Fighting for Life: Contest, Sexuality, and Consciousness. Cornell University Press. Paperback: Amherst, MA: University of Massachusetts Press. NY: Ithaca, 1989, pp. 198.
60. Pan Y., Politeness Strategies in Chinese Verbal Interaction: A Sociolinguistic Analysis of Official, Business, and Family Settings. Georgetown University Linguistics Department, 1994, pp.136.
61. Reisman K., Explorations in the Ethnography of Speaking. Cambridge: Cambridge University Press, 1974, pp. 110-124.
62. Sacks H., A Simplest Systematics for the Organization of Turntaking for Conversation // *Language*, No.4, 1974, pp. 696-735.
63. Sattel J., Men, Inexpressiveness and Power // *Language, gender and Society*, ed. by Thorne B., Kramarae Ch. and Henley N., MA: Newbury House, 1983, pp. 119-124.
64. Schiffrin D., Jewish Argument as Sociability // *Language in Society*. No. 13:3, 1984, pp. 311-335.
65. Sheindlin J., Beauty Fades, Dumb is Forever. New York: Sattleton, 2004, pp. 201.
66. Shirazi A.K.B., The Oppression of Women Throughout History. London: Bathad, 1986, pp. 93.
67. Shuy R., Analyzing Discourse // *Text and Talk*. Georgetown: Georgetown University Press, 1981, pp. 97-121.

68. Shuy R. Sociolinguistic Research at the Center for Applied Linguistics. The Correlation of Language and Sex. International Days of Sociolinguistics. Rome: Instituto of L. Sturzo, 1970, pp. 849-857.

69. Shuy R., Wolfram W. & Riley W. Field Techniques in an Urban Language Study. Washington, D.C.: Center for Applied Linguistics, 1968, pp. 128.

70. Spender D., Man Made Language. London: Routledge and Kegan Paul, 1980, pp. 187.

71. Stern B., Advertising to the Other Culture. Women's Use of Language and Language's Use of Women // *National Forum*. Vol. 77, No. 2, 1997, pp. 116-127.

72. Street R., and Cappella N. Sequence and Pattern in Communicative Behaviour. London: Edvard Arnold, 1985, pp. 287.

73. Swacker M., The Sex of the Speaker as a Sociolinguistic Variable // *The Sociology of the Languages of American Women*. San Antonio: Trinity University, 1975, pp. 76-83.

74. Tannen D., A Comparative Analysis of Oral Narrative Strategies. In the pear stories: Cognitive, cultural, and linguistic aspects of narrative production, ed. by Wallace C., Norwood: Ablex, 1980, pp. 51-87.

75. Tannen D., Indirectness in Discourse: Ethnicity as conversational style // *Discourse Processes* 4, 1981a, pp. 69-81.

76. Tannen D. Conversational Style: Analyzing Talk Among Friends. Norwwood, NJ: Albex, 1984, pp. 247.

77. Tannen D., Relative Focus on Involvement in Spoken and Written Discourse // *Literacy, language and learning*. The nature and consequences of reading and writing, ed. by Olson D., Torrance N., and Hildyard A., Cambridge: Cambridge University Press, 1985a., pp. 124-147.

78. Tannen D., Frames and Schemas in Interaction // *Quaterni di Semantica* 6, No.2, 1985b, pp. 326-335.

79. Tannen D., That's Not What I Meant. How Conversational Style Makes or Breaks your Relations With Others. New York: William Morrow, 1986, pp. 280.

80. Tannen D., Talking voices: Repetition, dialogue, and Imagery in Conversational Discourse. Cambridge: Cambridge University Press, 1989, pp. 249.

81. Tannen D., Gender Differences in Topical Coherence: Creating Involvement in Best Friends' Talk // *Discourse Processes No.13*, 1990, pp. 113-126.
82. Tannen D., You Just Don't Understand! Women and Men in Conversation. New York: Harper Collins Publishers Inc., 1990, pp. 344.
83. Tannen D. and Kakava Ch., Power and Solidarity in Modern Greek Conversation: Disagreeing to Agree // *Journal of Modern Greek Studies No.10*, 1992, pp. 11-34.
84. Tannen D., Talking from 9 to 5. Women and Men at Work. New York: Harper Collins Publishers Inc., 1994, pp. 368.
85. Tannen D., Gender and Discourse. Oxford and New York: Oxford University Press, 1994a, pp. 230.
86. Tannen D., The Argument Culture: Stopping Americas War of Words. New York: 2. Washington, DC: Georgetown University Press, 2003, pp. 370.
87. Tannen D., I Only Say This Because I Love You: Talking to Your Parents, Partner, Sibs, and Kids when You're All Adults. New York: Ballantine, 2001, pp. 336.
88. Tannen D., Power Maneuvers or Connection Maneuvers? Ventriloquizing in Family Interaction. Linguistic, language, and the real world // *Discourse and beyond*, ed.by Tannen D.and Alatis J., 2002, pp. 50-62.
89. Thompson E., Gender and Language Use. thisone@CRUZIO.COM, 1996.
90. Tracy K., Conversational Coherence: A Cognitively Grounded Rules Approach. Sequence and Pattern in Communicative Behaviour. London: Edward Arnold, 1985, pp. 189.
91. Trudgill P., Sex, Covert Prestige and Linguistic Change in the Urban British English of Norwich // *Language in Society No 1*, 1972, pp. 179-195.
92. Trudgill P., On Dialects: Social and geographical perspectives. New York and London: New York University Press, 1983, pp. 198.
93. Trudgill P., Sociolinguistics: An Introduction to Language and Society. London: Penguin books, 1999, pp. 222.
94. Tyler S., The Said and the Unsaid. New York: Academic. 1978, pp. 487.

95. Ueda K., Sixteen Ways to Avoid Saying “No” in Japan. *Intercultural Encounters with Japan // Communication-Contact and Conflict*, ed. by Condon J. and Saito M. Tokyo: Simul, 1974, pp. 184-192.

96. Watson K., Transferable Communicative Routines // *Language in Society No.4*, 1975, pp. 48-59.

97. West C. and Zimmerman D., Sex Roles, Interruptions and Silences in Conversation // *Language and Sex: Difference and Dominance*, ed. by Thorne B. and Henley N. Rowley, MA: Newbury House, 1975, pp. 89-101.

98. West C. and Zimmerman D., Small Insults: A Study of Interruptions in Cross-Sex Conversations between Unacquainted Persons // *Language, Gender and Society*, ed. by Thorne B. Massachusetts: Newbury House Publishers, 1983, pp. 102-117.

99. West C., Routine Complications: Troubles with Talk between Doctors and Patients. Bloomington: Indiana University Press, 1984, pp. 168.

100. Wetzel P., Are “Powerless” Communication Strategies the Japanese Norm? // *Language in Society, No.17*, 1988, pp. 555-564.

101. Winter J., Gender and the Political Interview in an Australian Context // *Journal of Pragmatics No.20*, 1993, pp.117-139.

102. Zak D., Rumor Has it. The Washington Post. May. Washington, D.C., 2008.

103. The Oxford Dictionary of Literary Quotations. Ed. by Kemp P., Oxford. New York: Oxford University Press, 1997, pp. 479.

104. A Dictionary of Arab Proverbs. Dr. Kilani T., Naim A., Lebanon: Librairie du Liban, 1991, pp. 355.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ԵՐՎԱՆԴԻ ՀԱԶԻ-ՀԱԿՈՔՅԱՆ

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Վ. Դերձյանի

Տպագրված է «Արման Ամանգուլյան» ԱԶ-ում:
ք. Երևան, Հր. Ներսիսյան 1/125

Ստորագրված է տպագրության՝ 03.04.2018:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 9.125:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am